

**2001/77/ԵՀ և 2003/30/ԵՀ հրահանգները փոփոխող և այնուհետ ուժ կորցրած
ճանաչող՝ Վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործումը
խթանելու մասին Եվրոպական պառլամենտի և խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի
2009/28/ԵՀ հրահանգ**

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

Պաշտոնական տեղեկագիր L 140, 05.06.2009թ., էջեր 0016-0062

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 175(1) հոդվածը և դրա 95-րդ հոդվածը՝ կապված սույն Հրահանգի
17-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածների հետ,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [1],

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին
համապատասխան [3],

Քանի որ

1) Եվրոպայում էներգիայի սպառման վերահսկումը և վերականգնվող աղբյուրներից
ստացվող էներգիայի առավել լայն օգտագործումը, էներգախնայողության և բարելավված
էներգաարդյունավետության հետ մեկտեղ, կազմում են միջոցների այն փաթեթի
բաղկացուցիչ մասերը, որն անհրաժեշտ է՝ ջերմոցային գազերի արտանետումները
նվազեցնելու, «Կլիմայի փոփոխության մասին» Միացյալ ազգերի շրջանակային
կոնվենցիայի Կիոտոյի արձանագրության պահանջներին համապատասխանելու ու 2012
թվականից հետո ջերմոցային գազերի նվազեցման մասով Համայնքի ու միջազգային
պարտավորությունների կատարման համար: Այս գործոնները նաև կարևոր են
էներգամատակարարման անվտանգությանը նպաստելու, տեխնոլոգիական
զարգացումներն ու նորարարությունը խթանելու և աշխատատեղերի ստեղծման և

տարածաշրջաններում, մասնավորապես գյուղական ու մեկուսացված վայրերում, զարգացման հնարավորություններ ապահովելու համար,

2) մասնավորապես մեծ թափ ստացող տեխնոլոգիական առաջընթացը, հասարակական տրանսպորտի օգտագործման խրախուսումն ու տարածումը, էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կիրառումը և տրանսպորտում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործումը այն ամենաարդյունավետ միջոցներից են, որոնց օգնությամբ Համայնքը կարող է կրճատել կախվածությունը ներմուծվող նավթից տրանսպորտի սեկտորում, որտեղ էներգամատակարարման անվտանգության խնդիրը ամենահրատապն է, և որոնց օգնությամբ Համայնքը կարող է ներգործել տրանսպորտային վառելիքի շուկայի վրա,

3) հայտնի են այն միջոցները, որոնք կարող են էներգետիկայի ոլորտում կայուն մրցակցային քաղաքականություն և նորարարության միջոցով տնտեսական աճ ապահովել: Վերականգնվող աղբյուրներից էներգիայի արտադրությունը հաճախ կախված է տեղական կամ տարածաշրջանային փոքր և միջին ձեռնարկություններից (ՓՄՁ-ներ): Կարևոր են աճի և աշխատատեղերի ստեղծման այն հնարավորությունները, որոնք ապահովվում են անդամ պետություններում ու դրանց տարածաշրջաններում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի տարածաշրջանային և տեղական արտադրությունում ներդրումների շնորհիվ: Հանձնաժողովը և անդամ պետությունները պետք է, հետևաբար, նպաստեն այդ վայրերում ազգային և տարածաշրջանային զարգացմանն ուղղված միջոցներին, խրախուսեն վերականգնվող աղբյուրներից էներգիայի արտադրության ոլորտում տեղական և տարածաշրջանային զարգացման նախաձեռնությունների միջև լավագույն պրակտիկայի փոխանակումն ու խթանեն այս ոլորտում կառուցվածքային ֆինանսավորման կիրառումը,

4) էներգիայի վերականգնվող աղբյուրների շուկայի զարգացմանը աջակցելու դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել բարենպաստ ազդեցությունը տարածաշրջանային և տեղական զարգացման հնարավորությունների, արտահանման հեռանկարների, սոցիալական համախմբվածության ու աշխատատեղերի բացման հնարավորությունների վրա՝ մասնավորապես կապված ՓՄՁ-ների և էներգիա արտադրող ընկերությունների հետ,

5) Համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտանետումները կրճատելու և ներկրվող էներգիայից կախվածությունը նվազեցնելու նպատակով էներգիայի վերականգնվող աղբյուրների զարգացումը պետք է սերտորեն կապված լինի բարելավված էներգաարդյունավետության հետ,

6) անհրաժեշտ է նպաստել վերականգնվող էներգիայի ապակենտրոնացված աղբյուրների օգտագործման տեխնոլոգիաների ցուցադրման ու առևտրայնացման փուլին: Անցումը դեպի էներգիայի ապակենտրոնացված արտադրություն ենթադրում է շատ առավելություններ՝ ներառյալ էներգիայի տեղական աղբյուրների օգտագործումը, էներգամատակարարման բարելավված անվտանգությունը, փոխադրման ավելի կարճ տարածությունները և էներգիայի փոխադրման ժամանակ ավելի քիչ կորուստները: Նման ապակենտրոնացումը նաև խթանում է Համայնքի զարգացումը և միասնականությունը՝ ապահովելով եկամուտի աղբյուրներ և տեղական մակարդակով աշխատատեղերի ստեղծում,

7) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի սեպտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի ներքին շուկայում էներգիայի վերականգնվող աղբյուրներից ստացված էլեկտրաէներգիան խթանելու մասին» 2001/77/ԵՀ հրահանգում [4] և Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի մայիսի 8-ի «Տրանսպորտում բիովառելիքի կամ այլ վերականգնվող վառելիքի օգտագործումը խթանելու մասին» 2003/30 ԵՀ հրահանգում [5] տրվեցին էներգիայի վերականգնվող աղբյուրների տարբեր տեսակների սահմանումները: Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունիսի 26-ի «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ներքին կանոնների մասին» 2003/54/ԵՀ հրահանգում [6] տրվեցին էլեկտրաէներգիայի ոլորտի ընդհանուր սահմանումները: Իրավական որոշակիության և հստակության նկատառումներով անհրաժեշտ է սույն Հրահանգում օգտագործել միևնույն սահմանումները կամ նման սահմանումներ,

8) «Վերականգնվող էներգիայի վերաբերյալ գործողությունների ծրագիր՝ վերականգնվող էներգիան 21-րդ դարում. Առավել կայուն ապագայի կերտում» Հանձնաժողովի 2007 թվականի հունվարի 10-ի Հաղորդագրության շնորհիվ պարզ դարձավ, որ էներգիայի վերականգնվող աղբյուրների ընդհանուր մասնաբաժնի 20% սահմանաչափը և տրանսպորտում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի 10 % սահմանաչափը, նպատակահարմար և իրագործելի նպատակներ են, և որ պարտադիր սահմանաչափեր ներառող շրջանակը, պետք է բիզնես համայնքի համար ապահովի երկարաժամկետ կայունություն, որն անհրաժեշտ է վերականգնվող էներգիայի ոլորտում նպատակահարմար և կայուն ներդրումներ անելու համար, որոնք կարող են կրճատել կախվածությունը ներկրվող հանածո վառելիքից և խթանել էներգիայի նոր տեխնոլոգիաների օգտագործումը: Այդ սահմանաչափերը ներառված են մինչև 2020 թվականը էներգաարդյունավետությունը 20%-ով բարելավելու համատեքստում, որը սահմանվել է Հանձնաժողովի «Էներգաարդյունավետությանն ուղղված գործողությունների ծրագիր. պոտենցիալի

իրականացում» 2006 թվականի հոկտեմբերի 19-ի Հաղորդագրությունում, որը հաստատվել է մարտի 27-ին կայացած Եվրոպական խորհրդի նիստում և Եվրոպական պառլամենտի կողմից այդ գործողությունների ծրագրի վերաբերյալ 2008 թվականի հունվարի 31-ի որոշման մեջ,

9) 2007 թվականի մարտին Եվրոպական խորհրդի նիստում վերահաստատվեց Համայնքի ամբողջ տարածքում 2010 թվականից հետո էներգիայի վերականգնվող աղբյուրների զարգացման մասով Համայնքի պարտավորությունը: Խորհուրդը հաստատեց մինչև 2020 թվականը Համայնքում էներգիայի ընդհանուր սպառման մեջ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժնի պարտադիր 20 % սահմանաչափ և մինչև 2020 թվականը տրանսպորտում օգտագործվող բենզինի և դիզելային վառելիքի սպառման մեջ բիովառելիքի ընդհանուր մասնաբաժնի պարտադիր նվազագույն 10% սահմանաչափ, որը պետք է ապահովվի բոլոր անդամ պետությունների կողմից և ներմուծվի ծախսաարդյունավետ եղանակով: Խորհուրդը նշեց, որ բիովառելիքի սահմանաչափի պարտադիր բնույթը նպատակահարմար կլինի, եթե արտադրությունը լինի կայուն, երկրորդ սերնդի բիովառելիքը դառնա հասանելի, իսկ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի հոկտեմբերի 13-ի «Բենզինի և դիզելային վառելիքի որակի մասին» 98/70/ԵՀ հրահանգը փոփոխվի՝ խառնուրդի համարժեք մակարդակներ թույլ տալու նպատակով: 2008 թվականի մարտի նիստում Եվրոպական խորհուրդը կրկնեց, որ կարևոր է մշակել ու կիրառել կայունության արդյունավետ չափորոշիչներ բիովառելիքի համար և ապահովել երկրորդ սերնդի բիովառելիքի առկայությունը շուկայում: 2008 թվականի հունիսի նիստում Եվրոպական խորհուրդը նորից անդրադարձավ կայունության չափորոշիչներին ու երկրորդ սերնդի բիովառելիքների զարգացմանը և ընդգծեց գյուղատնտեսական սննդամթերքի վրա բիովառելիքի արտադրության հնարավոր ազդեցությունը գնահատելու և, անհրաժեշտության դեպքում, թերությունները վերացնելու համար գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտությունը: Խորհուրդը նաև նշեց, որ հետագայում նույնպես պետք է գնահատվեն բիովառելիքների արտադրության ու սպառման բնապահպանական ու սոցիալական հետևանքները,

10) «Եվրոպայում վերականգնվող էներգիայի վերաբերյալ գործողությունների ծրագրի մասին» 2007 թվականի սեպտեմբերի 25-ի իր որոշման մեջ Եվրոպական պառլամենտը կոչ արեց Հանձնաժողովին մինչև 2007 թվականի վերջը ներկայացնել առաջարկ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օրենսդրական շրջանակի մասին՝ կապված Համայնքի և անդամ պետությունների մակարդակով վերականգնվող

աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժինների համար սահմանաչափեր սահմանելու կարևորության հետ,

11) անհրաժեշտ է սահմանել թափանցիկ ու հստակ կանոններ՝ էներգիայի վերականգնվող աղբյուրների մասնաբաժինը հաշվարկելու և այդ աղբյուրները սահմանելու համար: Այս համատեքստում պետք է ընդգրկվի ներկայումս օվկիանոսում և այլ ջրային օբյեկտներում ալիքների, ծովային հոսանքների, մակընթացության, օվկիանոսի ջերմային էներգիայի գրադիենտների կամ աղայնության գրադիենտների տեսքով առկա էներգիան,

12) բիոգազի արտադրության համար այնպիսի գյուղատնտեսական նյութերի օգտագործումը, ինչպիսիք են գոմաղբը, կիսահեղուկ թափոնները և այլ կենդանական կամ օրգանական թափոնները, ունի մեծ քանակով ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու պոտենցիալ և զգալի բնապահպանական առավելություններ՝ կապված ջերմության և էլեկտրաէներգիայի արտադրության և այն որպես բիովառելիք օգտագործման հետ: Բիոգազ արտադրող կայանները կարող են իրենց ապակենտրոնացված բնույթի և տարածաշրջանների զարգացմանը նպաստող կառուցվածքի շնորհիվ զգալիորեն նպաստել գյուղական տարածքների կայուն զարգացմանը և ֆերմերներին ընձեռել եկամուտի նոր հնարավորություններ,

13) Եվրոպական պառլամենտի, Խորհրդի և Հանձնաժողովի ընդունած դիրքորոշման լույսի ներքո՝ նպատակահարմար է սահմանել մինչև 2020 թվականը Համայնքում էներգասպառման մեջ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի 20 % մասնաբաժին և տրանսպորտում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի 10% մասնաբաժին համապատասխան պարտադիր ազգային սահմանաչափեր,

14) պարտադիր ազգային սահմանաչափերի հիմնական նպատակն է հստակություն սահմանել ներդրողների համար և խրախուսել այն տեխնոլոգիաների շարունակական զարգացումը, որոնց օգնությամբ կարելի է էներգիա ստանալ վերականգնվող աղբյուրների բոլոր տեսակներից: Սահմանաչափի պարտադիր լինելու մասին որոշման հետաձգումը մինչև որևէ հետագա իրադարձություն աննպատակահարմար է,

15) յուրաքանչյուր անդամ պետության սկզբնակետը, վերականգնվող էներգիայի ներուժը և էներգիայի կազմը տարբեր են: Հետևաբար անհրաժեշտ է Համայնքի 20% սահմանաչափը վերափոխել յուրաքանչյուր անդամ պետության համար առանձին սահմանաչափերի՝ հիմնվելով արդարացի և համարժեք բաշխման վրա՝ հաշվի առնելով անդամ պետությունների տարբեր սկզբնակետերը և պոտենցիալը, այդ թվում՝ վերականգնվող

աղբյուրների էներգիայի ներկա մակարդակը և էներգիայի կազմը: Անհրաժեշտ է սա անել՝ բաժանելով վերականգնվող աղբյուրների էներգիայի օգտագործման ավելացման պարտադիր ընդհանուր քանակությունը՝ յուրաքանչյուր անդամ պետության մասնաբաժնի հավասար ավելացման հիման վրա՝ հաշվարկված ըստ նրանց ՀՆԱ-ի, որը պետք է արտացոլի նրանց սկզբնականները, և հաշվի առնելով համախառն էներգասպառումը և վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման՝ անդամ պետությունների նախկին փորձը,

16) ի հակադրություն դրան՝ տրանսպորտի սեկտորում անհրաժեշտ է սահմանել վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժնի 10% սահմանաչափ յուրաքանչյուր անդամ պետության համար՝ տրանսպորտային վառելիքի հատկորոշումների և հասանելիության առումով հետևողականություն ապահովելու համար: Քանի որ տրանսպորտային վառելիքների վաճառքը հեշտ է, այն անդամ պետությունները, որոնք համապատասխան ռեսուրսների քիչ պաշարներ ունեն, կարող են հեշտությամբ բիովառելիք ձեռք բերել մեկ այլ տեղից: Մինչդեռ Համայնքը տեխնիկապես կարող է ապահովել տրանսպորտում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման սահմանաչափը միայն Համայնքի արտադրանքի հաշվին, հնարավոր է, ինչպես նաև ցանկալի է, որ սահմանաչափն իրականում ապահովվի Համայնքի արտադրանքի և ներկրումների համադրությամբ: Այս նպատակով Հանձնաժողովը պետք է վերահսկի Համայնքի շուկա բիովառելիքի մատակարարումը և պետք է, անհրաժեշտության դեպքում, առաջարկի համապատասխան միջոցներ՝ Համայնքի արտադրանքի և ներկրումների նկատմամբ հավասարակշռված մոտեցում հաստատելու համար՝ հաշվի առնելով, մասնավորապես, բազմակողմանի և երկկողմ առևտրային բանակցությունները, բնապահպանական, սոցիալական ու տնտեսական նկատառումները և էներգամատակարարման անվտանգությունը,

17) էներգաարդյունավետության բարելավումը Համայնքի առանցքային խնդիրներից է և Համայնքի նպատակն է մինչև 2020 թվականը ապահովել էներգաարդյունավետության 20% բարելավում: Այդ նպատակը՝ գործող և ապագա օրենսդրության, ներառյալ՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 16-ի «Շենքերի էներգետիկ արդյունավետության մասին» 2002/91/ԵՀ հրահանգը [9], էներգիա օգտագործող ապրանքների համար էկոնոմիկայում ներկայացվող պահանջները սահմանելու շրջանակ ստեղծող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի հուլիսի 6-ի 2005/32/ԵՀ հրահանգը [10], Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 5-ի

«Էներգիայի վերջնական սպառման արդյունավետության և էներգածառայությունների մասին» 2006/32/ԵՀ հրահանգը[11], չափազանց կարևոր է ապահովելու համար, որ կլիմայի և էներգիայի հետ կապված նպատակներն իրականացվում են նվազագույն ծախսերով և կարող են նաև հնարավորություններ ստեղծել Եվրոպական միության տնտեսության զարգացման համար: Էներգաարդյունավետությունը և էներգախնայողության քաղաքականությունն այն ամենարդյունավետ միջոցներից են, որոնց օգնությամբ անդամ պետությունները կարող են մեծացնել վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի տոկոսային մասնաբաժինը, և անդամ պետությունները դրանով կարող են ավելի հեշտ ապահովել սույն Հրահանգով սահմանված՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասով ընդհանուր ազգային և տրանսպորտի սեկտորի սահմանաչափերը,

18) անդամ պետությունները պարտավոր են իրականացնել զգալի բարելավումներ էներգաարդյունավետության առումով բոլոր ոլորտներում՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի իրենց սահմանաչափերն ապահովելու համար, որոնք արտահայտվում են համախառն վերջնական էներգասպառման տոկոսային մասով: Տրանսպորտի սեկտորում էներգաարդյունավետության անհրաժեշտությունը կարևոր է, քանի որ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի տոկոսային մասնաբաժինը կարող է չափազանց դժվար լինել ապահովել, եթե տրանսպորտի համար էներգիայի ընդհանուր պահանջարկը շարունակի աճել: Տրանսպորտի համար 10 % պարտադիր սահմանաչափը, որը պետք է ապահովվի անդամ պետությունների կողմից, պետք է հետևաբար սահմանվի որպես տրանսպորտում վերջնական էներգիայի սպառման մասնաբաժին, որը պետք է ապահովվի ընդհանուր վերականգնվող աղբյուրների, և ոչ միայն բիովառելիքների հաշվին,

19) ապահովելու համար, որ պարտադիր ազգային ընդհանուր սահմանաչափերն ապահովվում են, անդամ պետությունները պետք է մշակեն ինդիկատիվ հետազիծ, որը ներկայացնում է վերջնական պարտադիր սահմանաչափերն ապահովելու գործընթացը: Նրանք պետք է կազմեն վերականգնվող էներգիայի մասին գործողությունների ազգային ծրագիր, որը պետք է ներառի տեղեկություններ յուրաքանչյուր սեկտորի վերաբերյալ, հաշվի առնելով, որ կան բիոզանգվածի օգտագործման տարբեր ձևեր և հետևաբար կարևոր է մոբիլիզացնել բիոզանգվածի նոր ռեսուրսներ: Բացի դրանից անդամ պետությունները պետք է սահմանեն միջոցներ՝ այդ սահմանաչափերն ապահովելու համար: Յուրաքանչյուր անդամ պետություն, վերականգնվող էներգիայի մասին ազգային գործողությունների ծրագրում էներգիայի համախառն վերջնական սպառումը գնահատելիս, պետք է դիտարկի, թե ինչով կարող են էներգաարդյունավետությանն ու էներգիայի խնայողությանն ուղղված

միջոցները նպաստել ազգային սահմանաչափերի ապահովմանը: Անդամ պետությունները պետք է հաշվի առնեն էներգաարդյունավետ տեխնոլոգիաների օպտիմալ զուգադրումը վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի հետ,

20) որպեսզի տեխնոլոգիական առաջընթացի և մասշտաբի տնտեսությունների օգուտները զգալի լինեն, ինդիկատիվ հետազոտական համար պետք է հաշվի առնվի հետազայում վերականգնվող աղբյուրների օգտագործման առավել արագընթաց ավելացման հնարավորությունը Հետևաբար հատուկ ուշադրություն պետք է դարձվի այն ոլորտներին, որոնք անհամաչափորեն տուժում են տեխնոլոգիական առաջընթացի և մասշտաբի տնտեսության բացակայությունից և հետևաբար մնում են թերի զարգացած, բայց որը հետազայում կարող է զգալիորեն նպաստել 2020 թվականի համար սահմանաչափերի ապահովմանը,

21) ինդիկատիվ հետազոտական համար 2005 թվականը պետք է լինի որպես սկզբնակետ, քանի որ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի ազգային սահմանաչափերի վերաբերյալ տվյալները առաջին անգամ հասանելի կլինեն այդ տարվանից,

22) սույն Հրահանգի նպատակների իրականացման համար պահանջվում է, որ Համայնքը և անդամ պետությունները հատկացնեն զգալի ֆինանսական ռեսուրսներ վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների հետազոտության և զարգացման համար Մասնավորապես Նորարարությունների և տեխնոլոգիաների եվրոպական ինստիտուտը պետք է մեծ նախապատվություն տա վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների հետազոտությանն ու զարգացմանը,

23) անդամ պետությունները կարող են խրախուսել տեղական և տարածաշրջանային իշխանություններին սահմանել ազգային սահմանաչափերը գերազանցող սահմանաչափեր և կարող են ներգրավել տեղական և տարածաշրջանային իշխանություններին վերականգնվող էներգիայի վերաբերյալ գործողությունների ազգային ծրագրերի կազմմանն ու վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման օգուտների վերաբերյալ իրազեկության բարձրացմանը,

24) կենսազանգվածի ամբողջական պոտենցիալն օգտագործելու նպատակով Համայնքը և անդամ պետությունները պետք է խթանեն անտառանյութի ներկա պաշարների ավելի ընդլայնված մոբիլիզացումը և անտառատնտեսության նոր համակարգերի զարգացումը,

25) անդամ պետությունների՝ վերականգնվող էներգիայի պոտենցիալը տարբեր է, և նրանք ազգային մակարդակով օգտագործում են վերականգնվող աղբյուրներից էներգիայի

արտադրությանն օժանդակելու տարբեր համակարգեր: Անդամ պետությունների մեծ մասը կիրառում է աջակցության սխեմաներ, որոնք շահութաբեր են միայն իրենց անդամ պետության տարածքում վերականգնվող աղբյուրներից արտադրված էներգիայի համար : աջակցության Ազգային սխեմաների պատշաճ գործունեության համար կարևոր է, որ անդամ պետությունները կարողանան վերահսկել աջակցության իրենց ազգային սխեմաների ազդեցությունն ու ծախսերը՝ ըստ նրանց տարբեր պոտենցիալի: Սույն Հրահանգի նպատակն իրականացնելու մեկ կարևոր միջոց է 2001/77/ԵՀ հրահանգի համաձայն աջակցության ազգային սխեմաների պատշաճ գործունեության ապահովումը՝ ներդրողների վստահությունը շահելու համար և անդամ պետություններին սահմանաչափերի ապահովման ազգային արդյունավետ միջոցների նախագծումը թույլ տալու համար: Սույն Հրահանգն ուղղված է վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի միջսահմանային աջակցության խթանմանը՝ չազդելով աջակցության ազգային սխեմաների վրա: Այն ներկայացնում է անդամ պետությունների միջև կամավոր համագործակցության մեխանիզմներ, որոնք նրանց թույլ են տալիս սահմանել, թե որքանով մեկ անդամ պետությունը կօժանդակի մեկ այլ անդամ պետությունում էներգիայի արտադրությանը, և թե որքանով վերականգնվող աղբյուրներից էներգիայի արտադրությունը պետք է նպաստի երկու անդամ պետությունների ազգային սահմանաչափի ապահովմանը: Սահմանաչափի ապահովման երկու միջոցների՝ թե՛ աջակցության ազգային համակարգերի, թե՛ համագործակցության մեխանիզմների արդյունավետությունն ապահովելու համար, կարևոր է, որ անդամ պետությունները կարողանան որոշել՝ կիրառվում են արդյոք աջակցության ազգային իրենց սխեմաները այլ անդամ պետություններում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի նկատմամբ և որքանով են կիրառվում, և համաձայնության գալ սրա շուրջ՝ կիրառելով սույն Հրահանգով սահմանված համագործակցության մեխանիզմները,

26) ցանկալի է, որ էներգիայի գներն արտացոլեն էներգաարտադրության և սպառման արտաքին ծախսերը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, բնապահպանական, սոցիալական և առողջապահական ծախսերը,

27) հանրության աջակցությունն անհրաժեշտ է՝ վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի օգտագործման տարածմանը վերաբերող Համայնքի նպատակների հասնելու համար՝ մասնավորապես քանի դեռ ներքին շուկայում էլեկտրաէներգիայի գները չեն արտացոլում էներգիայի օգտագործվող աղբյուրների ամբողջական բնապահպանական և սոցիալական ծախսերն ու օգուտները,

28) Համայնքը և անդամ պետությունները պետք է փորձեն կրճատել տրանսպորտի սեկտորում էներգիայի ընդհանուր սպառումը և բարելավեն տրանսպորտի սեկտորում էներգաարդյունավետությունը: Տրանսպորտի սեկտորում էներգիայի օգտագործումը նվազեցնելու հիմնական միջոցներից են փոխադրումների նախագծումը, հասարակական տրանսպորտին ցուցաբերվող օժանդակությունը, արտադրության մեջ էլեկտրական մեքենաների մասնաբաժնի ավելացումը և այնպիսի մեքենաների արտադրումը, որոնք ավելի էներգաարդյունավետ են և փոքր են չափերով ու շարժիչի հզորությամբ,

29) անդամ պետությունները պետք է փորձեն տարբերակել վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի կազմը տրանսպորտի բոլոր սեկտորներում: Հանձնաժողովը պետք է մինչև 2015 թվականի հունիսի 1-ը Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ ներկայացնի հաշվետվություն, որում պետք է նկարագրվի տրանսպորտի յուրաքանչյուր սեկտորում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման ընդլայնման հնարավորությունը,

30) հիդրոէներգիայի և քամու էներգիայի օգտագործման օգուտների գնահատման ժամանակ կլիմայական փոփոխությունների ազդեցությունները պետք է կարգավորվեն ստանդարտացման կանոնի միջոցով: Ավելին, ջրակուտակիչ էլեկտրակայաններում այնպիսի ջրից արտադրված էլեկտրաէներգիան, որը նախկինում դուրս է մղվել պոմպով, չպետք է համարվի վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացված էլեկտրականություն,

31) ջերմային պոմպերի համար, որոնք նպաստավոր ջերմաստիճանում օդաջերմային, կենսաջերմային կամ հիդրոջերմային էներգիայի օգտագործումը հնարավոր դարձնող ջերմային պոմպերը գործի դնելու համար անհրաժեշտ է էլեկտրաէներգիա կամ այլ օժանդակ էներգիա: Ջերմային պոմպերը գործի դնելու համար օգտագործվող էներգիան հետևաբար պետք է մասհանվի օգտագործման ենթակա ընդհանուր ջերմությունից: Պետք է դիտարկվեն միայն այն ջերմային պոմպերը, որոնց արտադրողականությունը զգալիորեն գերազանցում է դրանք գործի դնելու համար անհրաժեշտ նախնական էներգիան,

32) պասիվ էներգետիկ համակարգերը կիրառում են շենքերի նախագծում՝ էներգիան օգտակար դարձնելու համար: Սա համարվում է խնայված էներգիա: Կրկնակի հաշվարկումից խուսափելու համար այս ձևով խնայված էներգիան չպետք է դիտարկվի սույն Հրահանգի նպատակներով,

33) որոշ անդամ պետությունների համախառն վերջնական էներգասպառման մեծ մասը բաժին է ընկնում ավիացիային: Ներկա տեխնոլոգիական և կարգավորող այն սահմանափակումները հաշվի առնելով, որոնք խոչընդոտում են ավիացիայում բիոմառելիքի օգտագործումը առևտրային նպատակներով, անհրաժեշտ է նման անդամ պետություններին տրամադրել արտոնություններ՝ էներգիայի համախառն վերջնական սպառման հաշվարկման մեջ չներառելով ազգային օդային տրանսպորտում օգտագործվող էներգիայի այն քանակությունը, որով նրանք մեկ ու կես անգամ գերազանցում են 2005 թվականին ավիացիայում Համայնքի համախառն վերջնական էներգասպառման միջինը ըստ Եվրաստատի, այսինքն՝ 6,18%-ով: Կիպրոսը և Մալթան, իրենց կղզային և ծայրամասային բնույթի պատճառով, օգտագործում են ավիացիան որպես տրանսպորտային միջոց, ինչը կարևոր է իրենց քաղաքացիների և տնտեսության համար: Որպես արդյունք՝ ազգային օդային տրանսպորտի սեկտորում Կիպրոսի և Մալթայի համախառն վերջնական էներգասպառումն անհամամասնորեն մեծ է, այսինքն՝ երեք անգամ ավելի, քան 2005 թվականի միջին էներգասպառումը Համայնքում, և հետևաբար այդ երկրներն անհամաչափորեն են ազդեցություն կրում տեխնոլոգիական և կարգավորող ներկա սահմանափակումներից: Հետևաբար այդ անդամ պետությունների համար անհրաժեշտ է նախատեսել, որ արտոնություն տրամադրվի այն քանակության մասով, որով նրանք գերազանցում են 2005 թվականին ավիացիայի ոլորտում Համայնքի համախառն վերջնական էներգասպառման միջինը ըստ Եվրաստատի, այսինքն՝ 4,12%-ով,

34) էներգիայի այնպիսի մոդել ձեռք բերելու համար, որը կնպաստի վերականգնվող աղբյուրներից էներգիայի արտադրությանը, անհրաժեշտ է խրախուսել անդամ պետությունների միջև ռազմավարական համագործակցությունը՝ ներառելով, անհրաժեշտության դեպքում, տարածաշրջաններն ու տեղական իշխանություններին,

35) հաշվի առնելով սույն Հրահանգի դրույթները՝ անդամ պետություններին անհրաժեշտ է խրախուսել համագործակցել հնարավոր բոլոր ձևերով՝ կապված սույն Հրահանգով սահմանված նպատակների հետ: Նման համագործակցությունը կարող է լինել բոլոր մակարդակներով, ինչպես նաև երկկողմ կամ բազմակողմ: Սահմանաչափի հաշվարկման և սահմանաչափի ապահովման կարգավորման մեխանիզմներից բացի, որոնք նախատեսված են միայն սույն Հրահանգով, և որոնք են՝ անդամ պետությունների միջև վիճակագրական փոխանցումները, համատեղ նախագծերն ու աջակցության համատեղ մեխանիզմները, համագործակցությունը կարող է լինել նաև օրինակ աջակցության մեխանիզմների տարբեր տեսակների կամավոր համակարգման տեսքով, ինչպես նաև տեղեկությունների և

լավագույն պրակտիկայի փոխանակման տեսքով, որը նախատեսված է , մասնավորապես, սույն Հրահանգով սահմանված թափանցիկության հարթակով,

36) սույն Հրահանգով սահմանված սահմանաչափերն ապահովելու ծախսերը կրճատելու հնարավորություններ ընձեռելու համար անհրաժեշտ է և՛ խթանել անդամ պետություններում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործումը, և՛ անդամ պետություններին հնարավորություն տալ այլ անդամ պետություններում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի սպառված քանակությունը ներառել իրենց ազգային սահմանաչափերի մեջ: Այս պատճառով անհրաժեշտ են ճկունության ապահովման միջոցներ, բայց դրանք մնում են անդամ պետությունների վերահսկողության ներքո՝ իրենց ազգային սահմանաչափերն ապահովելու հնարավորության վրա չազդելու նպատակով: Ճկունության ապահովման այդ միջոցները կարող են լինել վիճակագրական փոխանցումների, անդամ պետությունների միջև համատեղ նախագծերի կամ աջակցության համատեղ սխեմաների տեսքով,

37) պետք է հնարավոր լինի ներկրված էլեկտրաէներգիան, որն արտադրվել է վերականգնվող էներգիայի աղբյուրներից Համայնքի տարածքից դուրս, ներառել անդամ պետությունների սահմանաչափերում: Այնուամենայնիվ, ներկա վերականգնվող աղբյուրների փոփոխման հետևանքով ջերմոցային գազերի արտանետումների ընդհանուր աճից և էներգիայի ավանդական աղբյուրներով դրանց ամբողջական կամ մասնակի փոխարինումից խուսափելու համար, պետք է դիտարկել միայն այն էլեկտրաէներգիան, որն արտադրվում է սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո շահագործման հանձնված վերականգնվող էներգիայի կայաններում կամ ավելի մեծ արտադրական հզորությամբ կայանում, որը վերանորոգվել է այդ ամսաթվից հետո: Համայնքում, ինչպես նաև երրորդ երկրներում ավանդական էներգիան փոխարինող վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի համարժեք ազդեցությունը երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է ապահովել, որ նման ներկրումները հնարավոր լինի վերահսկվել և դրանց վերաբերյալ ներկայացվեն հաշվետվություն: Երրորդ երկրների հետ պետք է կնքվեն էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի վաճառքի կազմակերպման վերաբերյալ պայմանագրեր: Եթե էներգիայի վերաբերյալ Համայնքի պայմանագրի [12] շրջանակում ընդունված որոշման համաձայն այդ պայմանագրի պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել սույն Հրահանգի դրույթները, նրանց նկատմամբ կիրառվում են անդամ պետությունների միջև՝ սույն Հրահանգով նախատեսված համագործակցության միջոցները,

38) եթե անդամ պետություններն իրականացնում են էներգիայի վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիայի արտադրությանն ուղղված համատեղ նախագծեր մեկ կամ ավելի անդամ պետությունների հետ, անհրաժեշտ է, որ այդ համատեղ նախագծերը նախատեսված լինեն նոր կայանների կամ ավելացված հզորությամբ կայանների համար: Սրա օգնությամբ հնարավոր կլինի ապահովել, որ երրորդ երկրում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժինը չկրճատվի՝ Համայնք վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի ներկման հետևանքով: Բացի դրանից տվյալ անդամ պետությունները պետք է խթանեն համապատասխան երրորդ երկրի կողմից համատեղ նախագծերով կարգավորվող կայանում արտադրված էլեկտրաէներգիայի օգտագործումը արտադրող անդամ պետությունում: Ավելին, Հանձնաժողովը և անդամ պետությունները պետք է խրախուսեն երրորդ երկրներին մշակել վերականգնվող էներգիայի քաղաքականություն՝ ներառելով ցանկալի սահմանաչափերը,

39) հաշվի առնելով, որ երրորդ երկրների՝ Եվրոպայի համար մեծ հետաքրքրություն ներկայացնող նախագծերի համար, ինչպիսիք են Արևային էներգիայի միջերկրական պլանը, կարող է պահանջվել երկար ժամանակահատված մինչև Համայնքի տարածքն ընդգրկելը, անհրաժեշտ է խթանել դրանց մշակումը՝ թույլ տալով անդամ պետություններին հաշվի առնել իրենց ազգային սահմանաչափերում միացման խողովակաշարի կառուցման ընթացքում նման նախագծերով արտադրված էլեկտրաէներգիայի սահմանափակ քանակ,

40) վերականգնվող էներգիա արտադրող գործարանների լիազորման, հավաստագրման կամ լիցենզավորման համար պատասխանատու մարմինների կողմից օգտագործվող ընթացակարգը պետք է լինի օբյեկտիվ, թափանցիկ, ոչ խտրական և համամասնական՝ որոշակի նախագծերի նկատմամբ կանոնները կիրառելիս: Մասնավորապես անհրաժեշտ է խուսափել ցանկացած ոչ անհրաժեշտ բեռից, որը կարող է առաջանալ՝ վերականգնվող էներգիայի նախագծերը դասակարգելով ըստ այն կայանների, որոնք առողջության համար մեծ վտանգ են ներկայացնում,

41) թափանցիկության կանոնների և տարբեր լիազորող մարմինների միջև համակարգման բացակայությունը կանխել է վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործումը: Հետևաբար վերականգնվող էներգիայի սեկտորի յուրահատուկ կառուցվածքը պետք է հաշվի առնվի ազգային, տարածաշրջանային և տեղական մարմինների կողմից էներգիայի վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիայի կամ տրանսպորտային վառելիքների արտադրության և այդ աղբյուրների միջոցով ջեռուցման ու հովացման իրականացման գործարաններ և փոխադրման ու բաշխման ցանցի

ենթակառուցվածքներ կառուցելու ու շահագործելու թույլտվության տրամադրման վարչական ընթացակարգերը վերանայելիս: Թույլտվության վարչական ընթացակարգերը պետք է արդիականացվեն և նախատեսեն թափանցիկ ժամանակացույցեր վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիա օգտագործող կայանների համար: Պլանավորման կանոններն ու ուղեցույցը պետք է ադապտացվեն՝ հաշվի առնելու համար վերականգնվող էլեկտրաէներգիայի արտադրության և այդ աղբյուրների միջոցով ջեռուցման ու հովացման իրականացման ծախսարդյունավետ և շրջակա միջավայրի համար բարենպաստ սարքավորումները,

42) վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի լայնատարած օգտագործման համար և հաշվի առնելով դրա՝ շրջակա միջավայրի համար բարենպաստ կայուն որակը, անդամ պետություններն այն վարչական կանոնները, նախագծման ընթացակարգերը և օրենսդրությունը կիրառելիս, որոնք նախատեսված են աղտոտման նվազեցման և արդյունաբերական գործարանների վերահսկման, օդի աղտոտման դեմ պայքարի և շրջակա միջավայր վտանգավոր նյութերի արտանետման կանխման կամ նվազեցման առումով կայանքների լիցենզավորման հետ, հաշվի առնեն էներգիայի վերականգնվող աղբյուրների կարևորությունը բնապահպանական և կլիմայի փոփոխության հետ կապված նպատակների իրականացման համար՝ մասնավորապես հակադրելով այն կայաններին, որոնք չեն օգտագործում էներգիայի վերականգնվող աղբյուրներ,

43) սույն Հրահանգով սահմանված նպատակների իրականացմանն անհատ քաղաքացիների ունեցած ներդրումը խթանելու համար համապատասխան իշխանությունները վերականգնվող աղբյուրներից էներգիայի արտադրության համար փոքր ապակենտրոնացված սարքեր ներդնելիս պետք է հաշվի առնեն թույլտվությունները սովորական ծանուցումներով փոխարինելու հնարավորությունը,

44) պետք է ապահովվի համապատասխանությունը սույն Հրահանգի նպատակների և Համայնքի այլ բնապահպանական օրենսդրության միջև. Մասնավորապես վերականգնվող էներգիա օգտագործող կայանների գնահատման, նախագծման կամ լիցենզավորման գործընթացների ժամանակ անդամ պետությունները պետք է հաշվի առնեն Համայնքի բնապահպանական օրենսդրությունը և բնապահպանական ու կլիմայի փոփոխության հետ նպատակների իրականացմանը էներգիայի վերականգնվող աղբյուրների կարևորությունը՝ մասնավորապես համեմատած էներգիայի վերականգնվող աղբյուրներ չօգտագործող կայանքների հետ,

45) տեխնիկական ստանդարտների, կանոնակարգերի ու կանոնների ոլորտում տեղեկատվական հասարակության ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ընթացակարգը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգով կարգավորվող տեխնիկական հատկորոշումները, ինչպես նաև այլ պահանջներ, որոնք վերաբերում են, օրինակ, որակին, փորձարկման մեթոդներին և օգտագործման պայմաններին, չպետք է խոչընդոտեն ստեղծեն վերականգնվող էներգիայի սարքերի և համակարգերի առևտրի համար: Հետևաբար վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի աջակցության սխեմաներով չպետք է նախատեսվեն ազգային տեխնիկական հատկորոշումներ, որոնք չեն համապատասխանում Համայնքի գործող ստանդարտներին կամ, որոնց համաձայն պահանջվում է, որ հավանություն ստացած սարքավորումները կամ համակարգերը հավաստագրվեն կամ փորձարկվեն որևէ հատուկ վայրում կամ որևէ անձի կողմից,

46) անհրաժեշտ է, որ անդամ պետությունները նախատեսեն մեխանիզմներ էներգիայի վերականգնվող աղբյուրներից ստացված էներգիայի հաշվին կենտրոնացված ջեռուցման կամ հովացման իրականացումը խթանելու համար,

47) ազգային և տարածաշրջանային մակարդակով նոր և վերանորոգված շենքերում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման կանոններն ու նվազագույն պահանջների պարտավորությունները նպաստել են վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման զգալի աճին: Այդ միջոցները պետք է խրախուսվեն Համայնքի ավելի լայն համատեքստում՝ միևնույն ժամանակ խթանելով վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի առավել էներգաարդյունավետ օգտագործումները՝ կանոնակարգեր և օրենսգրքեր սահմանելու միջոցով,

48) շենքերում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման նվազագույն մակարդակների սահմանումը խթանելու և արագացնելու համար, կարող է անհրաժեշտ լինել, որ անդամ պետությունները նախատեսեն, որ այդ մակարդակներն ապահովվեն՝ ներմուծելով վերականգնվող աղբյուրների էներգիայի գործոնը, որը սահմանվել է «Յուրաքանչյուր շենքից ածխածնի արտանետումների էներգաարդյունավետ նվազեցման մասին» 2002/91/ԵՀ հրահանգի էներգաարդյունավետությանը ներկայացվող նվազագույն պահանջներում,

49) տեղեկությունների և վերապատրաստման բացերը, մասնավորապես ջեռուցման և հովացման սեկտորում, պետք է վերացվեն՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործումը խրախուսելու նպատակով,

50) եթե տեղադրող անձի մասնագիտության ձեռքբերումը կամ մասնագիտությամբ զբաղվելը կարգավորվում է մասնագիտական կանոններով, մասնագիտական որակավորումների ճանաչման նախապայմանները սահմանված են Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005 թվականի սեպտեմբերի 7-ի «Մասնագիտական որակավորումների ճանաչման մասին» 2005/36/ԵՀ հրահանգով: Սույն Հրահանգը հետևաբար կիրառվում է՝ չհակասելով 2005/36/ԵՀ հրահանգին,

51) հաշվի առնելով, որ 2005/36/ԵՀ հրահանգը սահմանում է պահանջներ մասնագիտական որակավորումների փոխադարձ ճանաչման համար, այդ թվում՝ ճարտարապետների համար, անհրաժեշտ է ապահովել, որ ճարտարապետներն ու նախագծողները իրենց պլաններում և նախագծերում նախատեսեն էներգիայի վերականգնվող աղբյուրների և բարձր արդյունավետություն ունեցող տեխնոլոգիաների համադրությունը: Անդամ պետությունները պետք է, հետևաբար, դրա վերաբերյալ սահմանեն հստակ ուղեցույց: Դա պետք է արվի՝ չհակասելով 2005/36/ԵՀ հրահանգի դրույթներին և մասնավորապես դրա 46-րդ և 49-րդ հոդվածներին,

52) սույն Հրահանգի նպատակով՝ որակի մասին տրամադրված երաշխիքների միակ ֆունկցիան վերջնական սպառողին ապացուցելն է, որ էներգիայի որոշակի մասնաբաժինը կամ քանակությունն արտադրվել է վերականգնվող աղբյուրներից: Ծագման երաշխիքը կարող է մեկ անձից փոխանցվել մեկ ուրիշին՝ անկախ այն հանգամանքից, թե որ էներգիային է այն վերաբերում: Այնուամենայնիվ, նպատակ ունենալով ապահովել, որ էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիայի միավորի մասին հաճախորդը տեղեկացվում է միայն մեկ անգամ, պետք է խուսափել կրկնակի հաշվարկումից և երկու անգամ տեղեկացնելուց: Վերականգնվող աղբյուրներից ստացվող այն էներգիան, որի համար արտադրողի կողմից առանձին վաճառվել է ծագման մասին ուղեկցող երաշխիքը, պետք չէ ներկայացնել կամ վաճառել վերջնական գնորդին՝ որպես վերականգնվող աղբյուրներից արտադրված էներգիա: Կարևոր է տարբերակել աջակցության սխեմաների համար օգտագործվող կանաչ սերտիֆիկատներն ու ծագման երաշխիքները,

53) անհրաժեշտ է վերականգնվող էներգիայից արտադրվող էլեկտրաէներգիայի ձևավորվող սպառողական շուկային թույլ տալ իր ներդրում ունենալ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի նոր կայանների կառուցմանը: Անդամ պետությունները պետք է հետևաբար կարողանան պահանջել էլեկտրաէներգիայի այն մատակարարներից, ովքեր իրենց էներգիայի կազմի մասին տեղեկացնում են հաճախորդներին 2003/54/ԵՀ հրահանգի 3(6) հոդվածի համաձայն, ներառել ծագման երաշխիքների նվազագույն տոկոսային մաս նոր կառուցված կայաններից, որոնք էներգիա են արտադրում վերականգնվող աղբյուրներից՝ պայմանով, որ նման պահանջը համապատասխանի Համայնքի օրենսդրությանը,

54) կարևոր է տեղեկություններ տրամադրել, թե ինչպես է էլեկտրաէներգիան հատկացվում վերջնական սպառողին՝ 2003/54/ԵՀ հրահանգի 3(6) հոդվածի համաձայն: Հաճախորդներին տրամադրվող այդ տեղեկությունների որակի բարելավման նպատակով, մասնավորապես՝ կապված նոր կայաններում վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիայի քանակության հետ, Հանձնաժողովը պետք է գնահատի անդամ պետությունների կողմից ձեռնարկվող միջոցների արդյունավետությունը,

55) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի փետրվարի 11-ի «էներգիայի ներքին շուկայում ջերմության օգտակար պահանջարկի հիման վրա համակցված արտադրությունը խթանելու մասին» 2004/8/ԵՀ հրահանգը նախատեսում է ծագման երաշխիքներ՝ բարձր արդյունավետությամբ համակցված արտադրության գործարաններում արտադրվող էլեկտրաէներգիայի ծագումը հաստատելու համար: Ծագման նման երաշխիքները չեն կարող օգտագործվել՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման մասին 2003/54/ԵՀ հրահանգի 3(6) հոդվածի համաձայն տեղեկացնելիս, քանի որ սա կարող է բերել կրկնակի հաշվարկման կամ երկու անգամ տեղեկացման,

56) ծագման երաշխիքները իրավունք չեն տալիս օգտվել աջակցության ազգային սխեմաներից,

57) կարիք կա օժանդակել վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի ներառումը փոխադրման և բաշխման ցանցի մեջ և էներգիայի պահեստավորման համակարգերի օգտագործումը վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի համատեղ արտադրության համար,

58) վերականգնվող էներգիայի նախագծերի, այդ թվում՝ էներգիայի տրանսեվրոպական ցանցի ծրագրի շրջանակում Եվրոպայի համար հետաքրքրություն ներկայացնող՝ վերականգնվող էներգիային վերաբերող նախագծերի մշակման գործընթացը պետք է արագացվի: Այդ նպատակով Հանձնաժողովը պետք է վերլուծի, թե ինչպես կարող է բարելավվել նման նախագծերի ֆինանսավորումը: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել վերականգնվող էներգիայի նախագծերին, որոնք կնպաստեն Համայնքում և հարևան երկրներում էներգիայի մատակարարման անվտանգության զգալի աճին,

59) երկրների միջև միացման խողովակաշարը խթանում է վերականգնվող էներգիայի աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի ինտեգրումը: Փոփոխականությունը կարգավորելուց բացի, միացման խողովակաշարը կարող է նվազեցնել բալանսավորման ծախսերը, խրախուսել ավելի ցածր գներ ապահովող իրական մրցակցությունը և նպաստել ցանցերի ձևավորմանը: Բացի դրանից, փոխանցման հնարավորության ու բաշխման օպտիմալ օգտագործումը կարող է օգնել խուսափել նոր հզորության չափազանց մեծ կարիքից,

60) վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի առաջնային հասանելիությունը և երաշխավորված հասանելիությունը կարևոր են էներգիայի վերականգնվող աղբյուրները էլեկտրականության ներքին շուկայում ներառելու համար՝ համաձայն 11(2) հոդվածի և ընդլայնելով 2003/54/ԵՀ հրահանգի 11(3) հոդվածը: Ցանցի վստահելիությանը և անվտանգության պահպանմանը վերաբերող պահանջները կարող են տարբեր լինել՝ ազգային ցանցի և դրա անվտանգ շահագործման առանձնահատկություններով պայմանավորված: Ցանցի առաջնային հասանելիության շնորհիվ վերականգնվող էներգիայի աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի փոխկապակցված արտադրողները կկարողանան վաճառել և փոխանցել վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող էլեկտրականությունը՝ համաձայն փոխկապակցվածության կանոնների համաձայն աղբյուրները հասանելի լինելու: Եթե վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող էներգիան ներմուծվի մանրածախ շուկա, երաշխավորված հասանելիությունը կապահովի, որ վաճառվող և օժանդակվող ամբողջ էլեկտրաէներգիան հնարավոր լինի ներառել ցանցի մեջ՝ հնարավոր դարձնելով վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրականության մինիմալ օգտագործումը ցանցի միացրած կայաններում: Այնուամենայնիվ, սա չի ենթադրում, որ անդամ պետությունները պարտավոր են օժանդակել կամ ներմուծել գներու պարտավորություն վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի համար: Այլ համակարգերում

վերականգնվող էներգիայի աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի համար սահմանված է ֆիքսված գին՝ սովորաբար համակարգի օպերատորի համար գնելու պարտավորության հետ համադրությամբ: Նման դեպքում արդեն ապահովվել է առաջնային հասանելիություն,

61) որոշ հանգամանքներում հնարավոր չէ ամբողջությամբ ապահովել էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի փոխադրում և բաշխում՝ չազդելով ցանցային համակարգի վստահելիության կամ անվտանգության վրա: Նման հանգամանքներում կարող է անհրաժեշտ լինել այդ արտադրողներին տրամադրել ֆինանսական փոխհատուցում: Այնուամենայնիվ, սույն Հրահանգի նպատակների համար պահանջվում է վերականգնվող էներգիայի աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի փոխանցման և բաշխման կայուն աճ՝ չազդելով ցանցային համակարգի վստահելիության կամ անվտանգության վրա: Այս նպատակով անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ վերականգնվող էներգիայի աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի ավելի բարձր թափանցելիություն ապահովելու համար՝ հաշվի առնելով փոփոխական ռեսուրսների ու այն ռեսուրսների առանձնահատկությունները, որոնք դեռ պահեստավորման ենթակա չեն: Այնքանով, որքանով պահանջվում է սույն Հրահանգի նպատակներով, վերականգնվող էներգիայի կայանների միացումը պետք է ապահովվի հնարավորինս շուտ: Ցանցին միացման ընթացակարգերը արագացնելու նպատակով անդամ պետությունները կարող են նախատեսել առաջնային միացման կամ վերապահված միացման հնարավորություններ էներգիայի վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիա արտադրող նոր կայանների համար,

62) էներգիայի վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիա և գազ արտադրողների միացումը էլեկտրական և գազաբաշխիչ ցանցերին պետք է լինի օբյեկտիվ, թափանցիկ ու ոչ խտրական, ինչպես նաև անհրաժեշտ է պատշաճ կերպով հաշվի առնել այն օգուտը, որը վերականգնվող էներգիայի աղբյուրներից էլեկտրականություն արտադրողները և վերականգնվող աղբյուրներից գազի տեղական արտադրողներն ունեն էլեկտրական և գազաբաշխիչ ցանցերի համար,

63) էլեկտրաէներգիա արտադրող այն ընկերությունները, որոնք ուզում են օգտագործել վերականգնվող աղբյուրների էներգիայի պոտենցիալը Համայնքի հեռավոր շրջաններում, մասնավորապես կղզային տարածաշրջաններում և բնակչության փոքր խտություն ունեցող տարածաշրջաններում, պետք է, հնարավորության դեպքում, փոխկապակցման համար ավելի քիչ ծախսեր կատարելու հնարավորություն ունենան՝ ապահովելու համար, որ նրանք

ավելի կենտրոնական, առավել զարգացած արդյունաբերություն ունեցող և ավելի խիտ բնակեցված տարածաշրջաններում գտնվող ընկերությունների համեմատ անարդարացիորեն չեն տուժում,

64) 2001/77/ԵՀ հրահանգը սահմանում է վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի ցանցին միանալու շրջանակը: Այնուամենայնիվ, անդամ պետությունները տարբերվում են ցանցին միանալու իրենց հնարավորություններով: Այս պատճառով անհրաժեշտ է ամրապնդել շրջանակը և պարբերաբար վերանայել դրա կիրառումը ազգային մակարդակով,

65) բիովառելիքի արտադրությունը պետք է լինի կայուն: Սույն Հրահանգով սահմանված սահմանաչափերն ապահովելու համար օգտագործվող բիովառելիքները, ինչպես նաև այն բիովառելիքները, որոնց օգտագործմանը նպաստում են աջակցության ազգային սխեմաները, պետք է հետևաբար բավարարեն կայունության չափորոշիչներ,

66) սույն Հրահանգի համատեքստում Համայնքը պետք է ձեռնարկի անհրաժեշտ քայլեր, ներառյալ՝ բիովառելիքի կայունության չափորոշիչների խթանումը և Համայնքում ու ամբողջ աշխարհում երկրորդ և երրորդ սերնդի բիովառելիքի արտադրության զարգացումը, և այդ ոլորտներում ընդլայնի գյուղատնտեսական հետազոտությունները և գիտելիքները,

67) բիովառելիքի համար կայունության չափորոշիչների սահմանումը իր նպատակին չի ծառայի, եթե այն ապրանքները, որոնք չեն համապատասխանում այդ չափորոշիչներին և որպես բիովառելիք օգտագործվելու փոխարեն օգտագործվում են որպես բիոհեղուկներ ջեռուցման կամ էլեկտրաէներգիայի սեկտորներում: Այս պատճառով կայունության չափորոշիչները պետք է կիրառվեն ընդհանուր առմամբ բիովառելիքների նկատմամբ,

68) 2007 թվականի մարտի Եվրոպական պառլամենտը առաջարկեց Հանձնաժողովին ներկայացնել համապարփակ Հրահանգ էներգիայի վերականգնվող ռեսուրսների օգտագործման մասին, որը կարող էր պարունակել չափորոշիչներ և դրույթներ բիոէներգիայի մատչելիության և օգտագործման վերաբերյալ: Կայունության նման չափորոշիչները պետք է կազմեն բոլոր բիոհեղուկները և ոչ միայն բիովառելիքներն ընդգրկող ավելի լայն սխեմայի բաղկացուցիչ մասը: Սույն Հրահանգում պետք է, հետևաբար, ընդգրկվեն կայունության նման չափորոշիչներ: Էներգետիկ և բնապահպանական քաղաքականությունների նկատմամբ հետևողական մոտեցում ապահովելու և ավելորդ բիզնես ծախսերից ու շրջակա միջավայրի նկատմամբ անհետևողական մոտեցումից խուսափելու համար, որը կապված կլինի ոչ

համաձայնեցված մոտեցման հետ, կարևոր է սահմանել կայունության նույն չափորոշիչները բիովառելիքների օգտագործման համար՝ մի կողմից սույն Հրահանգի, մյուս կողմից՝ 98/70/ԵՀ հրահանգի նպատակների համար: Միևնույն պատճառներով այս համատեքստում անհրաժեշտ է խուսափել երկու անգամ հաշվետվություններ ներկայացնելուց: Ավելին, Հանձնաժողովը և իրավասու ազգային մարմինները պետք է համակարգեն իրենց գործունեությունը այն կոմիտեի շրջանակում, որն անմիջապես պատասխանատու է կայունության հետ կապված հարցերի համար: Հանձնաժողովը պետք է 2009 թվականին վերանայի բիոզանգվածի այլ օգտագործումների և դրան առնչվող պայմանների հնարավոր ընդգրկումը,

69) աշխարհում բիովառելիքների և բիոհեղուկների աճող պահանջարկը և դրա օգտագործման խրախուսման միջոցները, որոնք նախատեսված են սույն Հրահանգով, չպետք է նպաստեն կենսաբազմազան հողերի ոչնչացմանը: Այդ սպառվող ռեսուրսները, որոնք տարբեր միջազգային փաստաթղթերում ճանաչվել են արժեքավոր ամբողջ մարդկության համար, պետք է պահպանվեն: Բացի դրանից, Համայնքի սպառողների համար բարոյապես անընդունելի կլինեն իրենց կողմից բիովառելիքների և բիոհեղուկների առավել լայն օգտագործման հետևանքով կենսաբազմազան հողերի ոչնչացումը: Այս պատճառներով անհրաժեշտ է սահմանել կայունության չափորոշիչներ, որոնք կապահովեն, որ բիովառելիքների ու բիոհեղուկների օգտագործման համար խրախուսման միջոցները սահմանվեն միայն այն դեպքում, երբ հնարավոր է երաշխավորել, որ դրանց սկզբնաղբյուրը կենսաբազմազան տարածքները չեն, իսկ եթե դրանց սկզբնաղբյուրն այնպիսի տարածքներ են, որոնք նախատեսված են բնության պահպանման կամ հազվադեպ կամ վտանգված էկոհամակարգերի, կենդանատեսակների կամ բուսատեսակների պահպանման համար, երբ իրավասու մարմինն ապացուցում է, որ հումքի արտադրությունը չի խոչընդոտում այդ նպատակների իրականացումը: Կայունության չափորոշիչների համար անտառը դիտարկվում է որպես կենսաբազմազան տարածք, եթե դա կուսական անտառ է՝ համաձայն այն սահմանման, որն օգտագործվել է Միացյալ ազգերի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից Անտառային ռեսուրսների համաշխարհային գնահատման մեջ, որն ամբողջ աշխարհում երկրներն օգտագործում են կուսական անտառների ծավալի մասին հաշվետվություն ներկայացնելու համար, կամ եթե այն պաշտպանվում է բնության պաշտպանության մասին ազգային իրավունքով: Այն տարածքները, որտեղ իրականացվում է ոչ փայտային անտառային արտադրանքի հավաքում, պետք է ընդգրկվեն՝ պայմանով, որ անթրոպոգեն ազդեցությունը լինի աննշան: ՊԳԿ-ի կողմից սահմանված անտառների այլ

տեսակները, ինչպիսիք են փոփոխված բնական անտառները, կիսաբնական անտառներն ու պլանտացիաները, չպետք է համարվեն կուսական անտառներ: Ավելին, հաշվի առնելով թե՛ մերձարևադարձային, թե՛ արևադարձային խոտածածկ տարածքների կենսաբազմազան բնույթը, այդ թվում՝ կենսաբազմազան սավաննաների, տափաստանների, թփերի մացառուտների, սույն Հրահանգով սահմանված խրախուսման միջոցները չպետք է նախատեսվեն այն հումքից պատրաստվող բիովառելիքների համար, որոնց սկզբնաղբյուրն այդ տարածքներն են: Հանձնաժողովը պետք է սահմանի համապատասխան չափորոշիչներ և արեալներ կենսաբազմազան խոտածածկ տարածքները սահմանելու համար՝ առկա լավագույն գիտական փաստերի և համապատասխան միջազգային չափանիշների համաձայն,

70) եթե հողում կամ բուսականությունում մեծ քանակությամբ ածխածին պարունակող հողատարածքը փոխակերպվում է՝ հումքից բիովառելիքների կամ բիոհեղուկների մշակման համար, պարունակվող ածխածնի մի մասն արտանետվում է մթնոլորտ՝ նպաստելով ածխաթթու գազի գոյացմանը: Առաջացող ջերմոցային գազի վտանգավոր ազդեցությունը կարող է չեզոքացնել ջերմոցային գազերի վրա բիովառելիքների կամ բիոհեղուկների դրական ազդեցությունը, որոշ դեպքերում՝ շատ մեծ ծավալներով: Այդ փոխակերպման ժամանակ ածխածնի ներգործությունը պետք է, հետևաբար, դիտարկվի որոշ բիովառելիքների և բիոհեղուկների՝ ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու պոտենցիալը հաշվարկելու համար: Սա անհրաժեշտ է ապահովելու համար, որ ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման հաշվարկման համար հաշվի է անռվում բիովառելիքների և բիոհեղուկների օգտագործման ժամանակ ածխածնի ներգործությունը,

71) ջերմոցային գազերի վրա հողի փոխակերպման ազդեցությունը գնահատելիս տնտեսվարող սուբյեկտները պետք է կարողանան օգտագործել փաստացի արժեքներ ածխածնի քանակության համար՝ կապված հողօգտագործման և հողի օգտագործմանը փոխակերպումից հետո: Նրանք նաև պետք է հնարավորություն ունենան օգտագործել նորմատիվ արժեքներ: Նման նորմատիվ արժեքների հիմքում ընկած են կլիմայի փոփոխության հարցերով միջազգային խորհրդի աշխատանքները: Այդ աշխատանքները ներկայումս չեն արտահայտվում այնպիսի ձևով, որն անմիջականորեն կիրառելի կլինի տնտեսվարող սուբյեկտների կողմից: Հանձնաժողովը պետք է հետևաբար ներկայացնի այդ աշխատանքների վերաբերյալ ուղեցույց, որը հիմք կլինի սույն Հրահանգի նպատակներով ածխածնի քանակության փոփոխությունները հաշվարկելու համար՝ ներառյալ

փոփոխությունները 10-30%-ով բուսականությամբ ծածկված անտառածածկ տարածքներում, սավաննաներում և պրերիաներում,

72) Հանձնաժողովը պետք է մշակի մեթոդոլոգիա՝ նպատակ ունենալով գնահատել տորֆածահիճների ցամաքեցման ազդեցությունը ջերմոցային գազի արտանետումների վրա,

73) հողը չպետք է փոխակերպվի բիովառելիքների արտադրության համար, եթե դրա ածխածնի կորուստը փոխակերպումից հետո, հաշվի առնելով կլիմայի փոփոխության խնդիրը լուծելու հրատապությունը, չի կարող վերականգնվել ողջամիտ ժամանակահատվածում բիովառելիքների կամ բիոհեղուկների արտադրության արդյունքում առաջացող ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման միջոցով: Սա կկանխի տնտեսվարող սուբյեկտների կողմից ոչ անհրաժեշտ ուսումնասիրությունները և ածխածնի մեծ քանակություն պարունակող այնպիսի հողի փոխակերպումը, որը հետագայում բիովառելիքների և բիոհեղուկների արտադրության համար որպես հումք պիտանի չէր լինի: Ամբողջ աշխարհում ածխածնի պաշարների ռեգիստրը ցույց է տալիս, որ ճահճացած հողերը և շարունակ անտառապատվող տարածքները, որոնք 30%-ով ծածկված են բուսականությամբ, չպետք է ընդգրկվեն այդ կատեգորիայի մեջ: Անտառածածկ տարածքները, որոնք 10-30%-ով ծածկված են բուսականությամբ, նույնպես պետք է ընդգրկվեն, քանի դեռ չկա վկայություն, որ դրանց ածխածնի պաշարները չափազանց քիչ են՝ դրանց փոխակերպումը սույն Հրահանգով սահմանված կանոնների համաձայն հիմնավորելու համար: Ճահճացած տարածքներին հղում կատարելու համար անհրաժեշտ է նաև հաշվի առնել «Միջազգային կարևորության ճահճացած տարածքների մասին, մասնավորապես որպես ջրլողների համար բնական միջավայր» 1971 թվականի փետրվարի 2-ին Ռամսարում ընդունված Կոնվենցիայի սահմանումը,

74) սույն Հրահանգով նախատեսված խրախուսման միջոցները կնպաստեն ամբողջ աշխարհում բիովառելիքների և բիոհեղուկների առավել լայնածավալ արտադրությանը: Եթե բիովառելիքները և բիոհեղուկները պատրաստվում են Համայնքի տարածքում արտադրված հումքից, դրանք նաև պետք է բավարարեն գյուղատնտեսության համար սահմանված Համայնքի բնապահպանական պահանջները, ներառյալ այն պահանջները, որոնք վերաբերում են ստորերկրյա ու մակերևութային ջրերի որակին, և սոցիալական պահանջները: Այնուամենայնիվ, կա մտահոգություն, որ բիովառելիքների և բիոհեղուկների արտադրության ժամանակ որոշ երրորդ երկրներում հաշվի չեն առնում մինիմալ բնապահպանական կամ սոցիալական պահանջները: Հետևաբար անհրաժեշտ է

խրախուսել բազմակողմ և երկկողմ պայմանագրերի և կամավոր միջազգային կամ ազգային սխեմաների մշակումը, որոնք ընդգրկում են հիմնական բնապահպանական և սոցիալական նկատառումները՝ ամբողջ աշխարհում բիոլատելիքների և բիոհեղուկների արտադրությունը խթանելու համար: Նման համաձայնագրերի կամ սխեմաների բացակայության դեպքում անդամ պետությունները պետք է տնտեսվարող սուբյեկտներից պահանջեն, որպեսզի նրանք հաշվետվություններ ներկայացնեն այդ խնդիրների վերաբերյալ,

75) կենսազանգվածի էներգետիկ կիրառումների կայունության սխեմային ներկայացվող պահանջները պետք է վերլուծության ենթարկվեն Հանձնաժողովի կողմից 2009 թվականին՝ հաշվի առնելով կենսազանգվածի ռեսուրսները կայուն միջոցներով կառավարելու անհրաժեշտությունը,

76) կայունության չափորոշիչներն արդյունավետ կլինեն, եթե միայն դրանք հանգեցնեն շուկայի մասնակիցների վարքագծի փոփոխությանը: Այդ փոփոխությունները կլինեն , եթե միայն բիոլատելիքներն ու բիոհեղուկները, որոնք համապատասխանում են այդ չափորոշիչներին, ավելի թանկ լինեն՝ համեմատած այն բիոլատելիքների ու բիոհեղուկների հետ, որոնք այդ չափորոշիչներին չեն համապատասխանում: Չափորոշիչների հետ համապատասխանությունը ստուգելու՝ զանգվածի հավասարակշռման մեթոդի համաձայն, ֆիզիկական կապ կա կայունության չափորոշիչներին համապատասխանող բիոլատելիքների ու բիոհեղուկների արտադրության և Համայնքում բիոլատելիքների ու բիոհեղուկների սպառման միջև՝ համապատասխան հավասարակշռություն ապահովելով առաջարկի ու պահանջարկի միջև, և ապահովելով գնի աճ, որն ավելի մեծ է, քան այն համակարգերում, որտեղ նման կապ չկա: Ապահովելու համար, որ կայունության չափորոշիչներին համապատասխանող բիոլատելիքներն ու բիոհեղուկները են կարող են վաճառվել ավելի բարձ գնով, զանգվածի հավասարակշռման մեթոդը պետք է հետևաբար օգտագործվի՝ այդ համապատասխանությունը ստուգելու նպատակով: Սա պետք է ապահովի համակարգի ամբողջականությունը՝ միևնույն ժամանակ խուսափելով արդյունաբերության համար ավելորդ բեռ ստեղծելուց: Պետք է, այնուամենայնիվ, դիտարկվեն ստուգման այլ մեթոդներ,

77) անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը պետք է հաշվի առնի էկոհամակարգի հազարամյակի գնահատման մասին փաստաթուղթը, որը պարունակում է օգտակար տվյալներ՝ առնվազն այն տարածքների պահպանման համար, որոնք տրամադրում են էկոհամակարգի հիմնական ծառայություններն արտակարգ իրավիճակներում, ինչպիսիք են ջրաբաժան գծի պահպանման և քայքայման վերահսկումը,

78) անհրաժեշտ է վերահսկել կենսազանգվածի օգտագործման ազդեցությունը, օրինակ հողօգտագործման փոփոխման, ներառյալ՝ տեղահանման, ինվազիվ օտար տեսակների ներմուծումն ու կենսաբազմազանության վրա այլ ազդեցությունները, և ազդեցությունները սննդի արտադրության և այդ վայրի զարգացման վրա: Հանձնաժողովը պետք է հաշվի առնի տեղեկությունների բոլոր համապատասխան աղբյուրները, ներառյալ՝ ՊԳԿ քաղցի քարտեզը: Բիովառելիքները անհրաժեշտ է խթանել այնպիսի ձևով, որը կնպաստի գյուղատնտեսական ավելի մեծ արտադրողականությանն ու դեգրադացված հողերի օգտագործմանը,

79) Համայնքի շահերից է բխում երկկողմ ու բազմակողմ և կամավոր միջազգային կամ ազգային սխեմաների մշակման խրախուսումը, որոնցով կսահմանվեն չափանիշներ բիովառելիքների և բիոհեղուկների կայուն արտադրության համար, և որոնք ապահովում են, որ բիովառելիքների և բիոհեղուկների արտադրությունը համապատասխանում են այդ չափանիշներին: Այդ պատճառով պետք է դրույթ սահմանվի, որի համաձայն նման համաձայնագրերը կամ սխեմաները կճանաչվեն որպես վստահելի փաստեր ու տվյալներ՝ պայմանով, որ դրանք համապատասխանեն հուսալիության, թափանցիկության և անկախ աուդիտի համապատասխան չափանիշներին,

80) անհրաժեշտ է սահմանել պարզ կանոններ բիովառելիքներից ու բիոհեղուկներից և հանածո վառելիքից արտանետվող ջերմոցային գազերի հաշվարկման համար,

81) վառելիքների արտադրության և օգտագործման ուղեկցող ապրանքները պետք է հաշվի առնվեն ջերմոցային գազերի արտանետումների հաշվարկման ժամանակ: Փոխարինման մեթոդը նպատակահարմար է քաղաքականության վերլուծության, սակայն ոչ առանձին տնտեսվարող սուբյեկտների և տրանսպորտային վառելիքի չափաքանակների կարգավորման համար: Այդ դեպքերում էներգիայի բաշխման մեթոդն ամենահամապատասխան մեթոդն է, քանի որ այն հեշտ է կիրառել, կանխատեսելի է ժամանակի ընթացքում, նվազեցնում է անարդյունավետ խրախուսման միջոցները և հանգեցնում է այնպիսի արդյունքների, որոնք սովորաբար համեմատելի են փոխարինման մեթոդով ձեռք բերված արդյունքների հետ: Քաղաքականության վերլուծության նպատակներով Հանձնաժողովը պետք է նաև իր զեկույցներում ներկայացնի փոխարինման մեթոդով ձեռք բերված արդյունքները,

82) անհամաչափ վարչական պատասխանատվությունից խուսափելու համար պետք է սահմանվի բիովառելիքի արտադրական ընդհանուր ուղղությունների համար նոմինալ

արժեքների ցանկ, իսկ այդ ցուցակը պետք է թարմացվի և ընդլայնվի ավելի վստահելի տվյալների առկայության դեպքում: Տնտեսվարող սուբյեկտները պետք է միշտ իրավունք ունենան սահմանել ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման մակարդակ այդ ցուցակով սահմանված բիովառելիքների և բիոհեղուկների համար: Եթե ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման նոմինալ արժեքը ջերմոցային գազի արտանետումների մակարդակի պահանջվող մինիմալ մակարդակից պակաս է, այն արտադրողները, ովքեր ուզում են ապացուցել, որ բավարարում են այս մինիմալ մակարդակը, պետք է պարտավորված լինեն ներկայացնել փաստեր, որ իրենց արտադրական գործընթացների իրական արտանետումները ավելի քիչ են, քան այն արտանետումները, որոնք հաշվարկվել էին նոմինալ արժեքներում,

83) անհրաժեշտ է, որ նոմինալ արժեքների հաշվարկման համար օգտագործվող տվյալները ձեռք բերվեն անկախ, գիտական աղբյուրներից և թարմացվեն այդ աղբյուրների աշխատանքների ընթացքում: Հանձնաժողովը պետք է խրախուսի այդ աղբյուրներին իրենց աշխատանքները թարմացնելիս դիտարկել հողի մշակումից առաջացող արտանետումները, տարածաշրջանային և կլիմայական պայմանների ազդեցությունը գյուղատնտեսական և օրգանական բույսերի մեթոդներ օգտագործող մշակման ազդեցությունները և Համայնքի ներսում ու այլ երկրներում արտադրողների և քաղաքացիական հասարակության ներդրումը,

84) խուսափելու համար բիովառելիքների և բիոհեղուկների համար հումքի արտադրությունից այն վայրերում, որտեղ դա կհանգեցնի ջերմոցային գազերի արտանետումներին, նոմինալ արժեքների կիրառումը պետք է սահմանափակվի այն տարածաշրջաններով, որտեղ նման ազդեցությունից հնարավոր կլինի խուսափել: Այնուամենայնիվ, անհամաչափ վարչական պատասխանատվությունից խուսափելու համար անհրաժեշտ է, որ անդամ պետությունները սահմանեն ազգային կամ տարածաշրջանային միջին մակարդակներ մշակումից՝ ներառյալ պարարտանյութերի օգտագործումից առաջացող արտանետումների համար,

85) աճում է գյուղատնտեսական ապրանքների համաշխարհային պահանջարկը: Այդ աճող պահանջարկի մի մասը կբավարարվի գյուղատնտեսությանը հատկացված հողի քանակի մեծացման հաշվին: Դեգրադացված կամ թունավորված և հետևաբար իրենց ներկա վիճակում գյուղատնտեսական նպատակներով օգտագործման համար ոչ պիտանի հողերի վերականգնումը մշակման համար պիտանի հողերի քանակը մեծացնելու միջոց է: Կայունության սխեման պետք է խթանի վերականգնված դեգրադացված հողերի

օգտագործումը, քանի որ բիովառելիքների և բիոհեղուկների օգտագործումը կնպաստի գյուղատնտեսական ապրանքների պահանջարկի աճին: Նույնիսկ եթե բիոառելիքներն պատրաստվել են հերկելի հողերից ստացված հումքի օգտագործմամբ, բերքի պահանջարկի աճը, որն առաջացել է բիովառելիքի խթանուման հետևանքով, կարող է հանգեցնել հնձած տարածքների ընդհանուր աճին: Սա կարող է ազդել ածխածնի մեծ պարունակությամբ հողերի վրա, ինչը կհանգեցնի ածխածնի պաշարների կորստին: Այդ վտանգից խուսափելու համար անհրաժեշտ է ներմուծել հարակից միջոցներ՝ խրախուսելու համար արդեն իսկ մշակման համար օգտագործվող հողերում արտադրողականության գործակցի աճը, դեգրադացված հողերի օգտագործումը և բիովառելիք օգտագործող այլ երկրներում կայունության պահանջների ընդունումը, որոնք համեմատելի են սույն Հրահանգով բիովառելիքի օգտագործման համար սահմանված պահանջների հետ: Հանձնաժողովը պետք է մշակի կոնկրետ մեթոդոլոգիա՝ հողօգտագործման ոչ անմիջական փոփոխություններից բխող ջերմոցային գազերի արտանետումները կրճատելու համար: Այս նպատակով Հանձնաժողովը առկա լավագույն գիտական փաստերի հիման վրա մասնավորապես պետք է դիտարկի ջերմոցային գազերի արտանետումների հաշվարկման մեջ հողօգտագործման ոչ անմիջական փոփոխությունների գործոնի ներառումը և կայուն վառելիքների համար խրախուսման միջոցների անհրաժեշտությունը, որը նվազագույնին կհասցնի հողօգտագործման փոփոխությունների ազդեցությունը և բարելավել բիովառելիքի կայունությունը՝ կապված հողօգտագործման ոչ անմիջական փոփոխությունների հետ: Այդ մեթոդաբանությունը մշակելիս Հանձնաժողովը պետք է մասնավորապես հաշվի առնի հողօգտագործման ոչ անմիջական փոփոխությունների հնարավորությունը, որոնք առաջանում են ոչ սննդային ցեղուկոգային նյութերից և լիզոնցեղուկոգային նյութից արտադրվող բիովառելիքներից,

86) շուկայում բիովառելիքների համարժեք մասնաբաժին ապահովելու նպատակով անհրաժեշտ է թույլ տալ դիզելային վառելիքի բաղադրության մեջ բիոդիզելի ավելի մեծ քանակությամբ խառնուրդների շուկայահանում, քան այն խառնուրդները, որոնք նախատեսված են EN590/2004 ստանդարտով,

87) այն բիովառելիքների շահավետությունն ապահովելու նպատակով, որոնց համար օգտագործվում է տարաբնույթ նախնական հումք, այդ բիովառելիքները պետք է ունենան ավելի մեծ մասնաբաժին ազգային պարտավորությունների ներքո,

88) կանոնավոր կերպով հաշվետվություններ ներկայացնելն անհրաժեշտ է՝ ազգային և Համայնքի մակարդակով վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի զարգացման

առաջընթացի վրա շարունակական ուշադրությունն ապահովելու համար: Անհրաժեշտ է պահանջել ներդաշնակեցված ձևաչափի օգտագործում վերականգնվող էներգիայի մասին անդամ պետությունների կողմից ներկայացվող գործողությունների ազգային ծրագրերի համար: Նման ծրագրերը կարող են ընդգրկել նախատեսված միջոցների, գործող էներգետիկ ցանցի ենթակառուցվածքի ընդլայնմանը կամ ամրապնդմանն ուղղված միջոցների գնահատված ծախսերն ու օգուտները, վերականգնվող աղբյուրներից էներգիա ստանալու գնահատված ծախսերն ու օգուտները, որը կգերազանցի ինդիկատիվ հետազոծվող պահանջվող էներգիայի քանակությունը, տեղեկություններ աջակցության ազգային սխեմաների և տեղեկություններ նոր կամ վերանորոգված շենքերում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման մասին,

89) աջակցության իրենց համակարգերը նախագծելիս անդամ պետությունները կարող են խրախուսել այնպիսի բիովառելիքների օգտագործումը, որոնք տալիս են հավելյալ օգուտներ՝ ներառյալ թափոններից, մնացորդներից, ոչ սննդային ցելյուլոզային նյութերից, լիգնոցելյուլոզային նյութերից և ջրիմուռներից, ինչպես նաև անապատեցման դեմ պայքարելու համար չոր տարածքներում չոռոգվող բույսերից պատրաստված բիովառելիքների բազմազանեցման օգուտները՝ հաշվի առնելով մի կողմից ավանդական բիովառելիքներից մյուս կողմից լրացուցիչ օգուտներ ապահովող բիովառելիքներից էներգիա ստանալու տարբեր գները: Անդամ պետությունները կարող են խրախուսել ուսումնասիրություններ և զարգացում՝ կապված վերականգնվող էներգիայի այդ և այլ տեխնոլոգիաների հետ, որոնք պահանջում են ժամանակ՝ մրցունակ դառնալու համար,

90) սույն Հրահանգի իրականացումը պետք է, անհրաժեշտության դեպքում, արտացոլի «Բնապահպանական հարցերում տեղեկությունների մատչելիության, որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Կոնվենցիայի դրույթները, որը մասնավորապես կիրարկվել է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի «Շրջակա միջավայրին առնչվող տեղեկությունների հանրային մատչելիության մասին» 2003/4/ԵՀ հրահանգի միջոցով:

91) սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է ընդունվեն Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշման համաձայն, որը սահմանում է Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը [17],

92) Հանձնաժողովը պետք է մասնավորապես լիազորված լինի համապատասխանեցնել մեթոդոլոգիական սկզբունքներն ու արժեքները, որոնք անհրաժեշտ են բիոլաոռնիքների և բիոհեղուկների կայունության չափորոշիչների գնահատումն իրականացնելու համար, համապատասխանեցնել տրանսպորտային վառելիքների էներգետիկ կազմը գիտական առաջընթացին, սահմանել չափորոշիչներ և արեալներ՝ կենսաբազմազան խոտածածկ տարածքները որոշելու համար, և սահմանել համապարփակ սահմանումներ դեգրադացված կամ թունավորված հողերի համար. Քանի որ այդ ակտերն ընդհանուր բնույթ են կրում և նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու և, մասնավորապես, ոչ էական տարրերով լրացնելու համար, դրանք պետք է ընդունվեն թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգի համաձայն,

93) 2001/77/ԵՀ հրահանգի և 2003/30/ԵՀ հրահանգի դրույթները, որոնք համընկնում են սույն Հրահանգի դրույթների հետ, պետք է բացառվեն հնարավորինս ուշ սույն Հրահանգի փոխատեղումից հետո: Այն դրույթները, որոնք վերաբերում են սահմանաչափերին և 2010 թվականի համար հաշվետվությունների ներկայացմանը, ուժի մեջ են մնում մինչև 2011 թվականի վերջը: Հետևաբար անհրաժեշտ է համապատասխանաբար փոփոխել 2001/77/ԵՀ հրահանգը և 2003/30/ԵՀ հրահանգը,

94) քանի որ 17-19-րդ հոդվածներով նախատեսված միջոցները նույնպես ազդեցություն ունեն ներքին շուկայի գործունեության վրա՝ ներդաշնակեցնելով սույն Հրահանգով սահմանաչափերի հաշվարկման համար բիոլաոռնիքների և բիոհեղուկների կայունության չափորոշիչները, և հետևաբար 17(8) հոդվածի համաձայն նպաստում, անդամ պետությունների միջև այդ պայմաններին համապատասխանող բիոլաոռնիքների և բիոհեղուկների առևտրին, դրանք հիմնված են Պայմանագրի 95-րդ հոդվածի վրա,

95) կայունության սխեման չպետք է խոչընդոտի անդամ պետություններին հաշվի առնել աջակցության իրենց ազգային սխեմաներում այն բիոլաոռնիքների և բիոհեղուկների արտադրության հետ կապված ծախսերը, որոնք ապահովում են կայունության սխեմայով սահմանված նվազագույն օգուտները գերազանցող օգուտներ,

96) քանի որ սույն Հրահանգի նպատակը, այն է՝ ապահովել Համայնքում էներգիայի վերջնական համախառն սպառման մեջ մինչև 2020 թվականը վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի 20% մասնաբաժին և յուրաքանչյուր անդամ պետության տրանսպորտում էներգիայի սպառման մեջ վերականգնվող աղբյուրներից ստացվող

էներգիայի 10% մասնաբաժին, չեն կարող բավարար կերպով ապահովվել անդամ պետությունների կողմից և ուստի կարող են գործողությունների մասշտաբից ելնելով առավել լավ իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է սահմանել միջոցներ՝ սուբսիդիարության սկզբունքին համապատասխան, ինչպես սահմանված է Պայմանագրի 5-րդ հոդվածով: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգը չի գերազանցում այդ նպատակների իրականացման համար անհրաժեշտ շրջանակը,

97) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետին համապատասխան [18]՝ անդամ պետություններին պետք է խրախուսել, իրենց և Համայնքի շահերից ելնելով, կազմել սույն Հրահանգի և փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ և հրապարակել դրանք,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

Սույն Հրահանգը սահմանում է ընդհանուր շրջանակ՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիան խթանելու համար: Այն սահմանում է պարտադիր ազգային սահմանաչափեր էներգիայի վերջնական համախառն սպառման մեջ վերականգնվող էներգիայի ընդհանուր մասնաբաժնի և տրանսպորտի ոլորտում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժնի համար: Այն սահմանում է կանոններ, որոնք վերաբերում են անդամ պետությունների միջև վիճակագրական փոխանմցումներին, անդամ պետությունների և երրորդ երկրների միջև համատեղ նախագծերին, ծագման երաշխիքներին, վարչական ընթացակարգերին, տեղեկություններին ու վերապատրաստմանը և վերականգնվող աղբյուրների էներգիայի համար էլեկտրական ցանցի մատչելիությանը: Այն սահմանում է կայունության չափորոշիչներ բիովառելիքների և բիոհեղուկների համար:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են 2003/54/ԵՀ հրահանգի սահմանումները:

Հետևյալ սահմանումները նույնպես կիրառվում են՝

ա) «վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիա» նշանակում է էներգիա վերականգնվող ոչ հանածո աղբյուրներից, մասնավորապես՝ քամու, արևային, օդաջերմային, կենսաջերմային, հիդրոջերմային և օվկիանոսի էներգիա, հիդրոէներգիա, կենսազանգված, աղբավայրերից արտանետված գազ, կոյուղաջրերի մշակման գործարաններից արտանետված գազը և բիոգազեր.

բ) «օդաջերմային էներգիա» նշանակում է տաքության ձևով մթնոլորտային օդում առկա էներգիա.

գ) «կենսաջերմային էներգիա» նշանակում է կարծր հողի մակերեսի տակ տաքության ձևով առկա էներգիա.

դ) «հիդրոջերմային էներգիա» նշանակում է տաքության ձևով մակերևութային ջրերում առկա էներգիա.

ե) «Կենսազանգված» նշանակում է գյուղատնտեսական (ներառյալ՝ բուսական և կենդանական նյութերը), անտառատնտեսության և հարակից արդյունաբերությունների՝ ներառյալ ձկնարդյունաբերության և ջրային տնտեսության կենսաբանական ծագման արտադրանքի, թափոնների և մնացորդների, ինչպես նաև արդյունաբերական և քաղաքային թափոնների կենսաբանորեն քայքայվող մասը:

զ) «էներգիայի վերջնական համախառն սպառում» նշանակում է էներգակիրներ, որոնք էներգետիկ նպատակներով տրամադրվում են արդյունաբերությանը, տրանսպորտին, տնային տնտեսություններին, ծառայություններին՝ ներառյալ հանրային ծառայություններին, գյուղատնտեսությանը, անտառատնտեսությանը և ձկնարդյունաբերությանը, ինչպես նաև էլեկտրականության և ջերմության արտադրության համար էներգետիկ ճյուղի կողմից էլեկտրական և ջերմային էներգիայի սպառումը և ներառյալ էլեկտրական ու ջերմային էներգիայի կորուստները բաշխման և տեղափոխման ժամանակ.

է) «կենտրոնացված ջեռուցում» կամ «կենտրոնացված սառեցում» նշանակում է գոլորշու, տաք ջրի կամ պաղեցրած հեղուկների տեսքով առկա ջերմային էներգիայի բաշխում

արտադրության կենտրոնացված աղբյուրից ցանցի միջոցով մի քանի շենքերի կամ տեղանքների՝ ջեռուցման կամ սառեցման օգտագործման համար.

«բիոհեղուկներ» նշանակում է հեղուկ վառելիք, որն օգտագործվում է էներգետիկ նպատակներով, բացառությամբ՝ տրանսպորտի ոլորտի, ներառյալ՝ կենսազանգվածից արտադրվող էլեկտրաէներգիան, և դրա միջոցով իրականացվող ջեռուցումն ու հովացումը.

«բիոհեղուկներ» նշանակում է կենսազանգվածից արտադրված հեղուկ կամ գազային վառելիք, որն օգտագործվում է տրանսպորտի ոլորտում.

«ծագման երաշխիք» նշանակում է էլեկտրոնային փաստաթուղթ, որի միակ գործառույթն է տրամադրել ապացույց վերջնական սպառողին, որ էներգիայի որոշ մասնաբաժինը կամ քանակն արտադրվել է վերականգնվող աղբյուրներից՝ 2003/54/ԵՀ հրահանգի 3(6) հոդվածի համաձայն.

«աջակցության համակարգ» նշանակում է ցանկացած փաստաթուղթ, սխեմա կամ մեխանիզմ, որը կիրառվում է անդամ պետության կամ անդամ պետությունների խմբի կողմից, և որը խթանում է վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործումը՝ կրճատելով այդ էներգիայի ծախսերը, բարձրացնելով դրա վաճառքի գինը, կամ մեծացնելով գնվող նման էներգիայի ծավալները վերականգնվող էներգիայի մասով պարտավորության շնորհիվ. Սա ներառում է, բայց չի սահմանափակվում ներդրումային օգնությամբ, հարկային ազատումներով կամ կրճատումներով, հարկային փոխհատուցումներով, վերականգնվող էներգիայի մասով պարտավորության օժանդակության սխեմաներով, ներառյալ այնպիսի սխեմաներով, որոնք օգտագործում են կանաչ հավաստագրեր, և գնային օժանդակության անմիջական սխեմաներ՝ ներառյալ սակագներ և պրեմիում վճարումներ.

«վերականգնվող էներգիայի մասով պարտավորություն» նշանակում է աջակցության ազգային սխեմա, որով արտադրողներից պահանջվում է իրենց էներգաարտադրության մեջ ներառել վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի որոշակի մասնաբաժին՝ պահանջելով էներգամատակարարողներից էներգիայի մատակարարման մեջ ներառել վերականգնվող աղբյուրների էներգիայի որոշակի մասնաբաժին կամ սպառողներից պահանջնելով ներառել էներգասպառման մեջ ներառել վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի որոշակի մասնաբաժին. Սա ներառում է սխեմաներ, որոնց շրջանակում նման պահանջները կարող են բավարարվել՝ օգտագործելով կանաչ հավաստագրեր.

փաստացի արժեք նշանակում է ջերմոցային գազերի արտանետումների նվազեցում որոշակի բիովառելիքի արտադրության գործընթացի բոլոր կամ մի քանի փուլերի համար՝ հաշվարկված համաձայն V հավելվածի Գ մասով սահմանված մեթոդաբանության.

«բնորոշ արժեք» նշանակում է որոշակի բիովառելիքի արտադրության գործընթացի համար ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման մոտավոր արժեք.

«նախնական արժեք» նշանակում է բնորոշ արժեքի հիման վրա հաշվարկված արժեք նախապես որոշված գործոնների կիրառումն միջոցով, և դա կարող է սույն Հրահանգով նախատեսված հանգամանքներում օգտագործվել իրական արժեքի փոխարեն:

Հոդված 3

Վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման ազգային պարտադիր ընդհանուր սահմանաչափերն ու միջոցները

1. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժինը, որը հաշվարկվել է 5-11-րդ հոդվածների համաձայն, 2020 թվականի էներգիայի վերջնական համախառն սպառման համար առնվազն այդ տարի կազմում է ազգային ընդհանուր սահմանաչափ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժնի համար, ինչպես սահմանված է I հավելվածի Ա մասի աղյուսակի երրորդ սյունակում: Նման պարտադիր ազգային ընդհանուր սահմանաչափերը համապատասխանում են 2020 թվականին Համայնքում էներգիայի վերջնական համախառն սպառման

2. Անդամ պետությունները ներկայացնում են միջոցներ, որոնք արդյունավետ կերպով կարող են ապահովել, որ վերականգնվող աղբյուրների մասնաբաժինը հավասար է կամ գերազանցում է այն մասնաբաժինին , որը նշված է I հավելվածի Բ մասով սահմանված ինդիկատիվ հետազոծում.:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված սահմանաչափերին համապատասխանելու համար անդամ պետությունները կարող են, մասնավորապես, կիրառել հետևյալ միջոցներ՝

ա) աջակցության սխեմաներ.

բ) տարբեր անդամ պետությունների և երրորդ երկրների միջև համագործակցության միջոցներ՝ 5-11-րդ հոդվածների համաձայն իրենց ազգային ընդհանուր սահմանաչափերն ապահովելու համար.

Չհակասելով պայմանագրի 87-րդ և 88-րդ հոդվածներին՝ անդամ պետություններն իրավունք ունեն որոշել, սույն Հրահանգի 5-11-րդ հոդվածների համաձայն, ինչքանով են իրենք աջակցում մեկ այլ անդամ պետությունում վերականգնվող աղբյուրներից էներգիան արտադրությանը:

4. Յուրաքանչյուր անդամ պետություն ապահովում է, որ 2020 թվականին տրանսպորտի բոլոր ձևերում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժինը այդ անդամ պետությունում տրանսպորտում էներգիայի վերջնական սպառման առնվազն 10 %-ն է կազմում:

Սույն պարբերության նպատակներով կիրառվում են հետևյալ դրույթները՝

ա) համարիչի, այսինքն առաջին ենթապարբերության նպատակներով տրանսպորտում օգտագործված՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի ընդհանուր քանակության հաշվարկման համար դիտարկվում են ճանապարհային և երկաթուղային տրանսպորտում օգտագործվող բենզինը, դիզելը, բիոկառելիքները և էլեկտրաէներգիան.

բ) համարիչի, այսինքն առաջին ենթապարբերության նպատակներով տրանսպորտում օգտագործված վերականգնվող աղբյուրների էներգիայի քանակության հաշվարկման համար դիտարկվում են տրանսպորտի բոլոր ձևերում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործված բոլոր տեսակները.

գ) վերականգնվող աղբյուրներից արտադրվող և էլեկտրական փոխադրամիջոցների բոլոր տեսակներում սպառվող էլեկտրաէներգիայի օգուտները գնահատելու համար անդամ պետությունները կարող են օգտագործել Համայնքում էներգիայի վերականգնվող աղբյուրների միջին մասնաբաժինը կամ իրենց երկրում վերականգնվող էներգիայի աղբյուրների էլեկտրականության մասնաբաժինը՝ հաշվարկված ըստ նախորդ երկու տարիների: Ավելին, էլեկտրական ճանապարհային փոխադրամիջոցներում էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի օգտագործված քանակության հաշվարկման համար, այդ քանակությունը համարվում է էներգիայի վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրականության հզորության էներգետիկ բաղադրությունից 2,5 անգամ ավելի:

Մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, ներկայացնում է առաջարկություն՝ թույլ տալով որոշակի պայմանների կիրառմամբ դիտարկել էլեկտրական փոխադրամիջոցներում օգտագործվող՝ վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի ամբողջ քանակությունը:

Մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը Հանձնաժողովը նաև ներկայացնում է, անհրաժեշտության դեպքում, մեթոդաբանության առաջարկ՝ վառելիքի ամբողջական կազմում վերականգնվող աղբյուրներից ստացվող ջրածնի մասնաբաժինը հաշվարկելու համար:

Հոդված 4

Վերականգնվող էներգիայի մասին գործողությունների ազգային ծրագրերը

1. Յուրաքանչյուր անդամ պետություն ընդունում է վերականգնվող էներգիային մասին գործողությունների ազգային ծրագիր: Վերականգնվող էներգիայի մասին գործողությունների ազգային ծրագրերով սահմանվում են տրանսպորտի, էլեկտրաէներգիայի, ջեռուցման կամ հովացման սեկտորներում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժնի՝ անդամ պետությունների ազգային սահմանաչափերը 2020 թվականի համար՝ հաշվի առնելով էներգիայի վերջնական սպառման մեջ էներգաարդյունավետությանը վերաբերող այլ միջոցների ազդեցությունները և ազգային ընդհանուր սահմանաչափերն ապահովելու համար ձեռնարկվելիք համապատասխան միջոցները՝ ներառյալ համագործակցությունը տեղական, տարածաշրջանային և ազգային մարմինների միջև, նախատեսված վիճակագրական փոխանցումները կամ համատեղ նախագծերը, տարբեր օգտագործումների համար ներկա կենսազանգվածի ռեսուրսները զարգացնելու, կենսազանգվածի նոր ռեսուրսներ մոբիլիզացնելու ազգային քաղաքականությունները և 13-19-րդ հոդվածներն իրականացնելու համար ձեռնարկվելիք միջոցառումները:

Մինչև 2009 թվականի հունիսի 30-ը Հանձնաժողովն ընդունում է վերականգնվող էներգիային առնչվող գործողությունների ազգային ծրագրերի օրինակելի ձևը: Այդ օրինակելի ձևը ներառում է VI հավելվածով սահմանված նվազագույն պահանջները: Անդամ պետությունները հետևում են այդ օրինակելի ձևին վերականգնվող էներգիային առնչվող իրենց ազգային ծրագրերը ներկայացնելիս:

2. Անդամ պետությունները ծանուցում են վերականգնվող էներգիայի մասին իրենց ազգային ծրագրերը Հանձնաժողովին մինչև 2010 թվականի հունիսի 30-ը:

3. Յուրաքանչյուր անդամ պետություն վերականգնվող էներգիային առնչվող իր ազգային գործողությունների ծրագրի վերջնաժամկետից 6 ամիս առաջ հրապարակում և Հանձնաժողովին ծանուցում է նախնական փաստաթուղթ, որտեղ նշվում են՝

ա) մինչև 2020 թվականը ինդիկատիվ հետագծի համեմատ վերականգնվող աղբյուրներից էներգիայի արտադրության հաշվարկված քանակությունը, որը կարող է փոխանցվել այլ անդամ պետությունների՝ 6-11-րդ հոդվածների համաձայն, ինչպես նաև համատեղ նախագծեր իրականացնելու հաշվարկված ներուժը, և

բ) մինչև 2020 թվականը վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի հաշվարկված պահանջարկը, որը պետք է բավարարվի ոչ թե տեղական արտադրության հաշվին, այլ ուրիշ միջոցներով:

Այդ տեղեկությունները կարող են ներառել ծախսերին ու օգուտներին և ֆինանսավորմանը վերաբերող կետեր: Այդ նախնական փաստաթուղթը թարմացվում է անդամ պետությունների հաշվետվություններում, ինչպես սահմանված է 22(1)(1) ու (խ) հոդվածում:

4. Այն անդամ պետությունը, որի՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժինը պակաս է ինդիկատիվ հետագծի I հավելվածի Բ մասով սահմանված նախորդ երկու տարվա ժամկետից անմիջապես առաջ, մինչև հաջորդ տարվա հունիսի 30-ը Հանձնաժողով է ներկայացնում վերականգնվող էներգիային առնչվող գործողությունների փոփոխված ազգային ծրագիր՝ սահմանելով համարժեք և համաչափ միջոցներ խելամիտ ժամանակահատվածում I հավելվածի Բ մասի ինդիկատիվ հետագծին միանալու համար:

Եթե անդամ պետությունը չի բավարարում ինդիկատիվ հետագծի սահմանափակ չափով և հաշվի առնելով անդամ պետությունների կողմից ձեռնարկվող ներկա և հետագա միջոցները, Հանձնաժողովը կարող է որոշել անդամ պետությանն ազատել վերականգնվող էներգիային առնչվող գործողությունների փոփոխված ազգային ծրագիր ներկայացնելու պարտավորությունից:

5. Հանձնաժողովը գնահատում է վերականգնվող էներգիային առնչվող գործողությունների ազգային ծրագրերը, մասնավորապես 3(2) հոդվածի համաձայն անդամ պետությունների կողմից նախատեսված միջոցների համարժեքությունը: Ի պատասխան վերականգնվող էներգիային առնչվող գործողությունների ազգային ծրագրին կամ վերականգնվող

Էներգիային առնչվող գործողությունների փոփոխված ծրագրին՝ Հանձնաժողովը կարող է ներկայացնել առաջարկություն:

6. Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ է ուղարկում վերականգնվող էներգիային առնչվող գործողությունների ազգային ծրագրերն ու նախնական փաստաթղթերն այնպիսի ձևով, որով դրանք պետք է հրապարակվեն թափանցիկության ծրագրում՝ 24(2) հոդվածի համաձայն, ինչպես նաև սույն հոդվածի 5-րդ պարբերությամբ նշված ցանկացած առաջարկ:

Հոդված 5

Վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժնի հաշվարկումը

1. Յուրաքանչյուր անդամ պետությունում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի համախառն սպառված քանակությունը հաշվարկվում է որպես հետևյալի գումար՝

ա) էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի համախառն սպառված քանակության.

բ) ջեռուցման և հովացման համար վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի համախառն սպառված քանակության և

գ) տրանսպորտում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի սպառված քանակության:

Էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրվող գազը, էլեկտրաէներգիան և ջրածինը դիտարկվում են միայն մեկ անգամ առաջին պարբերության (ա), (բ) կամ (գ) կետերում՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի համախառն սպառման մասնաբաժինը հաշվարկելու համար:

17(1) հոդվածի երկրորդ ենթապարբերության համաձայն՝ բիովառելիքները և բիոհեղուկները, որոնք չեն բավարարում 17(2) –(6) հոդվածով սահմանված տևականության չափորոշիչները, հաշվի չեն առնվում:

2. Եթե անդամ պետությունը համարում է, որ ֆորս մաժորային իրավիճակի պատճառով հնարավոր չէ բավարարել 2020 թվականին էներգիայի համախառն սպառման մեջ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի իր մասնաբաժինը, որը սահմանված է I հավելվածի աղյուսակի երրորդ սյունակում, այն հնարավորինս շուտ այդ մասին տեղեկացնում է Հանձնաժողովին: Հանձնաժողովը որոշում է, թե արդյոք եղել է ֆորս

մաժորային իրավիճակ: Եթե Հանձնաժողովը որոշում է, որ եղել է ֆորս մաժորային իրավիճակ, այն սահմանում է, թե ինչ փոփոխություններ պետք է արվեն 2020 թվականի համար վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի համախառն սպառմանը:

3. 1(ա) պարբերության նպատակներով՝ էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի համախառն սպառումը հաշվարկվում է որպես անդամ պետությունում էներգիայի վերականգնվող աղբյուրներից ստացված էլեկտրականության քանակ՝ բացառությամբ պահեստավորման կայաններում ջրից ստացված էլեկտրականության:

Բազմավառելիքային կայաններում, որոնք օգտագործում են վերականգնվող և սովորական աղբյուրներ, հաշվի է առնվում էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի միայն մի մասը: Այս հաշվարկումների նպատակներով՝ էներգիայի յուրաքանչյուր աղբյուրի մասնաբաժինը հաշվարկվում է դրա էներգետիկ բաղադրության հիման վրա:

Հիդրոէներգետիկայի և քամու էներգիայի հաշվին արտադրված էլեկտրաէներգիան հաշվարկվում է՝ II հավելվածով սահմանված նորմալացման կանոնների համաձայն:

4. 1(բ) պարբերության նպատակներով՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի համախառն սպառված քանակությունը ջեռուցման և հովացման համար հաշվարկվում է՝ որպես կենտրոնացված ջեռուցման և հովացման քանակություն, որն արտադրվել է անդամ պետություններում վերականգնվող աղբյուրներից, ինչպես նաև արդյունաբերությունում, տնային տնտեսություններում, ծառայությունների ոլորտում, գյուղատնտեսությունում, անտառային տնտեսություններում և ձկնաբուծության մեջ ջեռուցման, սառեցման և վերամշակման գործընթացների համար վերականգնվող աղբյուրներից ստացվող այլ էներգիայի քանակությունը:

Բազմավառելիքային գործարաններում, որոնք օգտագործում են վերականգնվող և ավանդական աղբյուրներ, դիտարկվում է էներգիայի վերականգնվող աղբյուրների միջոցով իրականացված ջեռուցման ու հովացման միայն մի մասը: Այս հաշվարկման նպատակներով՝ էներգիայի յուրաքանչյուր աղբյուրի մասնաբաժինը հաշվարկվում է դրա էներգետիկ բաղադրության հիման վրա:

Ջերմային պոմպերով օդաջերմային, կենսաջերմային և հիդրոջերմային էներգիան դիտարկվում է 1(բ) պարբերության նպատակներով՝ պայմանով, որ արտադրված էներգիայի վերջնական քանակությունը զգալիորեն գերազանցի էներգիայի այն նախնական

քանակությունը, որն անհրաժեշտ է ջերմային պոմպերը գործի դնելու համար: Ջերմության այն քանակությունը, որը պետք է համարվի վերականգնվող էներգիայից ստացվող էներգիա՝ սույն Հրահանգի նպատակներով, հաշվարկվում է VII հավելվածով սահմանված մեթոդաբանության համաձայն:

Պասիվ էներգետիկ համակարգերում արտադրված ջերմային էներգիան, որով ապահովվում է էներգիայի սպառման ավելի ցածր մակարդակ՝ շենքերի նախագծման կամ ոչ վերականգնվող աղբյուրներից էներգիայից ստացվող ջերմության միջոցով, չի դիտարկվում՝ 1(բ) պարբերության նպատակներով:

5. III հավելվածում նշված տրանսպորտային վառելիքների էներգետիկ բաղադրությունը հաշվի է առնվում այնպես, ինչպես սահմանված է այդ հավելվածում: III հավելվածը կարող է համապատասխանեցվել տեխնիկական և գիտական առաջընթացին: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ ակտերը պետք է ընդունվեն 25(4) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

6. Վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժինը հաշվարկվում է որպես վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի համախառն սպառված քանակություն՝ բաժանած էներգիայի բոլոր աղբյուրներից էներգիայի համախառն սպառված քանակության և արտահայտված տոկոսով:

Առաջին ենթապարբերության նպատակներով՝ 1-ին պարբերությամբ նշված քանակությունը հարմարեցվում է 6-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներին:

Որևէ անդամ պետության էներգիայի համախառն սպառված քանակությունը հաշվարկելիս սույն Հրահանգով սահմանված սահմանաչափերի և ինդիկատիվ հետազդի հետ համապատասխանությունը ստուգելու համար, ավիացիայում օգտագործված էներգիան, որպես այդ անդամ պետության էներգիայի վերջնական սպառման մասնաբաժին, համարվում է 6.18%-ից ոչ ավելի: Կիպրոսի և Մալթայի համար ավիացիայում սպառվող էներգիայի քանակությունը, որպես այդ անդամ պետությունների էներգիայի համախառն սպառված քանակության մասնաբաժին, համարվում է 4.12%.-ից ոչ ավելի:

7. Վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժինը հաշվարկելի օգտագործվող մեթոդաբանությունն ու սահմանումները պետք է լինեն Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի «էներգետիկ վիճակագրության

մասին» թիվ 1099/2008/ԵՀ կանոնակարգով սահմանված մեթոդաբանությունն ու սահմանումները:

Անդամ պետություններն ըստ սեկտորների և ընդհանուր մասնաբաժինները հաշվարկելիս ապահովում են վիճակագրական տեղեկությունների և թիվ 1099/2008/ԵՀ կանոնակարգի համաձայն Հանձնաժողով ներկայացված վիճակագրական տեղեկությունների համապատասխանությունը:

Հոդված 6

Անդամ պետությունների միջև վիճակագրական փոխանցումները

1. Անդամ պետությունները կարող են համաձայնվել մեկ անդամ պետությունից մյուս անդամ պետությանը վերականգնվող էներգիայից ստացվող էներգիայի որոշ քանակի վիճակագրական փոխանցման շուրջ և ձեռնարկեն անհրաժեշտ միջոցները դրա ուղղությամբ: Փոխանցված քանակությունը՝

ա) մասհանվում է վերականգնվող աղբյուրներից ստացվող այն էներգիայի քանակությունից, որը համապատասխանությունը ստուգելիս դիտարկվում է այն անդամ պետությունների կողմից, որոնք 3(1) ու (2) հոդվածների համաձայն կատարում են փոխանցումը և

բ) գումարվում է վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի այն քանակությանը, որը համապատասխանությունը ստուգելիս դիտարկվում է մեկ այլ անդամ պետության կողմից, որն ընդունում է փոխանցվող էներգիան 3(1) ու (2) պահանջների համաձայն:

Վիճակագրական փոխանցումը չի ազդում այն անդամ պետության կողմից ազգային սահմանաչափի ապահովման վրա, որը կատարում է փոխանցումը:

2. 1-ին պարբերությամբ նշված միջոցները կարող են տևել մեկ տարի կամ ավելի: Դրանց մասին Հանձնաժողովը տեղեկացվում է ոչ ուշ, քան այդ միջոցների երեք ամիս այն տարվա ավարտից հետո, : Հանձնաժողովին ուղարկված տեղեկությունները ներառում են այդ էներգիայի քանակությունն ու գինը:

3. Փոխանցումները ուժի մեջ են մտնում միայն այն բանից հետո, երբ բոլոր անդամ պետությունները, որոնք ներառված են փոխանցման մեջ, փոխանցման մասին տեղեկացրել են Հանձնաժողովին:

Հոդված 7

Անդամ պետությունների համատեղ նախագծերը

1. Երկու կամ ավելի անդամ պետություններ կարող են համագործակցել համատեղ նախագծերի շուրջ, որոնք վերաբերում են էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիային, և այդ աղբյուրների միջոցով իրականացվող ջեռուցմանն ու հովացմանը: Այդ համագործակցությունը կարող է ներառել անհատ օպերատորներ:

2. Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին 2009 թվականի հունիսի 25-ից հետո իրենց տարածքում իրականացված ցանկացած համատեղ նախագծի արդյունքում կամ այդ ամսաթվից հետո վերափոխված կայանի ավելացված հզորության շնորհիվ էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիայի, և այդ աղբյուրների միջոցով իրականացված ջեռուցման ու հովացման մասնաբաժնի կամ քանակության մասին, որը պետք է ներառվի այլ անդամ պետության ազգային ընդհանուր սահմանաչափում՝ սույն Հրահանգի հետ համապատասխանությունը ստուգելու նպատակներով:

3. 2-րդ պարբերությամբ նշված ծանուցագրում՝

ա) նկարագրվում է նախատեսված կայանը կամ նշվում է վերափոխված կայանը.

բ) նշվում է այն կայանում արտադրված էլեկտրաէներգիայի, և այդ աղբյուրների միջոցով իրականացվող ջեռուցման ու հովացման մասնաբաժինը կամ քանակությունը, որը պետք է ներառվի մեկ այլ անդամ պետության ընդհանուր ազգային սահմանաչափում.

գ) նշվում է այն անդամ պետությունը, որի համար ուղարկվում է այդ ծանուցումը և

դ) նշվում է այն ժամանակահատվածը՝ ամբողջական օրացուցային տարիներով, որի ընթացքում կայանում էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիան, և այդ աղբյուրների միջոցով իրականացվող ջեռուցումն ու հովացումը ներառվում է մյուս անդամ պետության ազգային ընդհանուր սահմանաչափի մեջ.

4. 3(դ) նշված ժամանակահատվածը չպետք է անցնի 2020 թվականի սահմանագիծը: Համատեղ նախագծի տևողությունը կարող է անցնել 2020 թվականի սահմանագիծը:

5. Սույն հոդվածով ներկայացված ծանուցումը չի փոփոխվում կամ դադարեցվում առանց ծանուցումը ներկայացնող անդամ պետության և 3(գ) պարբերության համաձայն նշված անդամ պետության համաձայնության:

Անդամ պետությունների համատեղ նախագծերի ազդեցությունները

1. 7(3)(դ) հոդվածով նշված ժամանակահատվածի մաս կազմող յուրաքանչյուր տարվա վերջին երեք ամիսների ընթացքում 7-րդ հոդվածի համաձայն ծանուցագիր ուղարկված անդամ պետությունը ներկայացնում է ծանուցում, որտեղ նշվում է՝

ա) տարվա ընթացքում կայանում էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիայի, և այդ աղբյուրների միջոցով իրականացված ջեռուցման ու հովացման ընդհանուր ծավալը, որի մասին ծանուցվել էր 7-րդ հոդվածի համաձայն և

բ) այդ տարվա ընթացքում այդ կայանում էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիայի, և այդ աղբյուրների միջոցով իրականացված ջեռուցման ու հովացման ընդհանուր ծավալը, որը պետք է ներառվի այդ անդամ պետության ազգային ընդհանուր սահմանաչափերում՝ ծանուցման պայմանների համաձայն:

2. Ծանուցող անդամ պետությունը ծանուցման նամակ է ուղարկում Հանձնաժողովին և այն անդամ պետությանը, որի համար ծանուցումն արվել է:

3. Սույն Հրահանգի՝ ազգային ընդհանուր սահմանաչափերին վերաբերող պահանջների համաձայն սահմանաչափերի ապահովումը ստուգելու նպատակներով էներգիայի վերականգնվող աղբյուրներից ստացված էլեկտրաէներգիայի քանակությունը, կամ այդ աղբյուրների միջոցով իրականացված ջեռուցման կամ հովացման ծավալը, որի մասին ծանուցում են 1(բ) պարբերության համաձայն՝

ա) մասհանվում է վերականգնվող աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիայի, իրականացված ջեռուցման կամ հովացման ծավալից՝ 1-ին պարբերության համաձայն ծանուցման նամակ ներկայացնող անդամ պետության կողմից համապատասխանությունը ստուգելիս.

բ) գումարվում է էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի, իրականացված ջեռուցման կամ հովացման ծավալին՝ ծանուցման նամակը 2-րդ պարբերության համաձայն ստացող անդամ պետության կողմից սահմանաչափերի ապահովումը ստուգելիս:

Անդամ պետությունների և երրորդ երկրների համատեղ նախագծերը

1. Մեկ կամ ավելի անդամ պետություններ կարող են համագործակցել մեկ կամ ավելի երրորդ երկրների հետ էներգիայի վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիայի արտադրությանը վերաբերող նախագծերի շուրջ: Նման համագործակցությունը կարող է ներառել առանձին օպերատորներ:

2. Երրորդ երկրում էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիան դիտարկվում է միայն՝ ազգային ընդհանուր սահմանաչափերին վերաբերող՝ սույն Հրահանգի պահանջների հետ համապատասխանությունը ստուգելու նպատակով, եթե բավարարված են հետևյալ պայմանները՝

ա) էլեկտրաէներգիան սպառվում է Համայնքում ներսում՝ պահանջ, որը համարվում է բավարարված, եթե՝

(i) ծագման երկրում, նշանակման երկրում և, հնարավորության դեպքում, տարանցիկ երրորդ երկրում տարանցման համակարգերի բոլոր պատասխանատու օպերատորները միացման խողովակաշարի իրենց հատվածի հզորության համար նախատեսել են հաշվարկված էլեկտրաէներգիայի քանակությանը համարժեք քանակություն.

(ii) միացման խողովակաշարի Համայնքի հատվածի՝ փոխկապակցման համակարգի պատասխանատու օպերատորի կողմից բալանսավորման ժամանակացույցում գրանցվել է հաշվարկված էլեկտրաէներգիայի քանակությանը համարժեք քանակություն.

(iii) նախատեսված հզորությունը և 2(բ) պարբերությունում նշված կայանում էներգիայի վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիայի արտադրությունը սահմանված են միևնույն ժամանակահատվածի համար.

բ) էլեկտրաէներգիան արտադրվում է նոր կառուցված կայանում, որը շահագործման է հանձնվել 2009 թվականի հունիսի 25-ից հետո, կամ այդ ամսաթվից հետ վերանորոգված կայանի ավելացված հզորության հաշվին՝ 1-ին պարբերությամբ նշված համատեղ նախագծի շրջանակում.

գ) արտադրված կամ արտահանված էլեկտրաէներգիայի քանակությունը չի ներառվել երրորդ երկրի աջակցության սխեմայում, և աջակցությունը եղել է միայն այդ կայանին տրամադրված ներդրումային օգնության տեսքով:

3. 5-րդ հոդվածի նպատակներով՝ անդամ պետությունները կարող են դիմել Հանձնաժողովին, որպեսզի վերջինս դիտարկի երրորդ երկրում վերականգնվող էներգիայի աղբյուրներից արտադրված և սպառված էլեկտրաէներգիան՝ անդամ պետության և երրորդ երկրի միջև միացման խողովակաշարի կառուցման համատեքստում, եթե բավարարված են հետևյալ պայմանները՝

ա) խողովակաշարի կառուցումը սկսվել է մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը.

բ) խողովակաշարը չի կարող շահագործման հանձնվել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը.

գ) խողովակաշարը կարող է շահագործման հանձնվել մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը.

դ) շահագործման հանձնվելուց հետո խողովակաշարն օգտագործվելու է Համայնք օգտագործվելու է էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիան Համայնք արտահանելու նպատակով՝ 2-րդ պարբերության համաձայն.

ե) դիմումը կապված է համատեղ նախագծի հետ, որը բավարարում է 2-րդ պարբերության (բ) ու (գ) կետերով սահմանված չափորոշիչները, և որն օգտագործելու է խողովակաշարը այն բանից հետո, երբ դա ենթակա կլինի շահագործման, և կապված է էլեկտրաէներգիայի այնպիսի քանակի հետ, որը չի գերազանցում խողովակաշարը շահագործման հանձնվելուց հետո Համայնք արտահանվող էլեկտրականության քանակը:

4. Հանձնաժողովին պետք է ծանուցեն երրորդ երկրի տարածքում գտնվող կայանում արտադրված էլեկտրաէներգիայի այն մասնաբաժնի կամ քանակի մասին, որը պետք է ներառվի մեկ կամ ավելի անդամ պետությունների ազգային սահմանաչափերում՝ 3-րդ հոդվածի հետ համապատասխանությունը ստուգելու նպատակով: Եթե ներգրավված է ավելի, քան մեկ անդամ պետություն, Հանձնաժողովին պետք է ծանուցվի անդամ պետությունների միջև այս մասնաբաժնի կամ քանակության բաշխման մասին: Այս մասնաբաժինը կամ քանակությունը չպետք է գերազանցի Համայնք ներկրված և Համայնքում սպառված էլեկտրականության մասնաբաժինը կամ քանակությունը, որը պետք է համապատասխանի սույն հոդվածի 2(ա)(i) և (ii) պարբերությամբ սահմանված քանակին և բավարարի դրա 2(ա) պարբերությամբ սահմանված պայմանները: Ծանուցումը ներկայացվում է յուրաքանչյուր այն անդամ պետության կողմից, ում ընդհանուր ազգային սահմանաչափում ներառվում է էլեկտրաէներգիայի մասնաբաժինը կամ քանակությունը:

5. 4-րդ պարբերությամբ նշված ծանուցագրում՝

ա) նկարագրվում է նախատեսված կայանը կամ նշվում է վերափոխված կայանը.

բ) նշվում է այն կայանում արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը կամ քանակությունը, որը պետք է ներառվի մեկ այլ անդամ պետության ընդհանուր ազգային սահմանաչափում, ինչպես նաև համապատասխան ֆինանսական միջոցառումները՝ գաղտնիության պահանջների կիրառմամբ.

գ) նշվում է այն ժամանակահատվածը՝ օրացուցային տարիներով, որի ընթացքում էլեկտրաէներգիայի մասնաբաժինը կամ քանակությունը պետք է ներառվի այդ անդամ պետության ընդհանուր ազգային սահմանաչափում.

դ) ներառվում է այն երրորդ երկրների կողմից (բ) և (գ) կետերի գրավոր հաստատումը, որոնց տարածքում կայանը պետք է շահագործվի, և այդ կայանում արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը կամ քանակությունը, որը պետք է օգտագործվի այդ երրորդ երկրի ներսում:

6. 5(դ) պարբերությամբ նշված ժամանակահատվածը չպետք է անցնի 2020 թվականի սահմանագիծը: Համատեղ նախագծի տևողությունը կարող է անցնել 2020 թվականի սահմանագիծը:

7. Սույն հոդվածով ներկայացված ծանուցումը չի փոփոխվում կամ դադարեցվում առանց ծանուցումը ներկայացնող անդամ պետության և 5(դ) պարբերության համաձայն համատեղ նախագիծը հաստատող անդամ պետության համատեղ համաձայնության:

8. Անդամ պետությունները և Համայնքը խրախուսում են Էներգիայի Համայնքի մասին պայմանագրի համապատասխան մարմիններին, Էներգիայի Համայնքի մասին պայմանագրի համաձայն, ձեռնարկել միջոցներ, որոնք անհրաժեշտ են, որ այդ պայմանագրի պայմանավորվող կողմերը կարողանան սույն Հրահանգի դրույթները կիրառել անդամ պետությունների միջև համագործակցության նկատմամբ:

Հոդված 10

Անդամ պետությունների և երրորդ երկրների համատեղ նախագծերի ազդեցությունները

1. 9(5)(գ) հոդվածով նշված ժամանակահատվածի մաս կազմող յուրաքանչյուր տարվա վերջին երեք ամիսների ընթացքում 9-րդ հոդվածի համաձայն ծանուցում ուղարկած անդամ պետությունը ներկայացնում է ծանուցման նամակ, որտեղ նշվում է՝

ա) այդ տարվա ընթացքում կայանում էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիայի ընդհանուր քանակությունը, որը ենթակա էր ծանուցման 9-րդ հոդվածի համաձայն.

բ) տարվա ընթացքում այդ կայանում էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիայի քանակությունը, որը պետք է ներառվի ազգային ընդհանուր սահմանաչափում՝ 9-րդ հոդվածով սահմանված ծանուցման պայմանների համաձայն.

գ) 9(2) հոդվածով սահմանված պայմանների բավարարման ապացույց:

2. Անդամ պետությունն ուղարկում է ծանուցման նամակը Հանձնաժողովին և այն երրորդ երկրին, որը ճանաչել է նախագիծը 9(5)(դ) հոդվածի համաձայն :

3. Սահմանաչափերի ապահովումը սույն Հրահանգի՝ ազգային ընդհանուր սահմանաչափերին վերաբերող պահանջների հետ համապատասխանությունը ստուգելու նպատակով՝ էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի քանակությունը, որի մասին ծանուցվել է 1(բ) պարբերության համաձայն, գումարվում է վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի քանակությունը՝ ծանուցման նամակը ներկայացնող անդամ պետության կողմից սահմանաչափերի ապահովումը ստուգելիս:

Հոդված 11

Աջակցության համատեղ սխեմաները

1. Չհակասելով անդամ պետությունների՝ 3-րդ հոդվածով սահմանված պարտավորություններին՝ երկու կամ ավելի անդամ պետություններ կարող են որոշել կամավոր հիմունքներով միավորվել կամ մասամբ համակարգել աջակցության ազգային սխեմաները: Նման դեպքերում մասնակցող մեկ անդամ պետության տարածքում

վերականգնվող աղբյուրների որոշ քանակություն ներառվում է մասնակից անդամ պետության ազգային ընդհանուր սահմանաչափում, եթե տվյալ անդամ պետությունները՝

ա) կատարում են վերականգնվող աղբյուրներից ստացված էներգիայի որոշ քանակի վիճակագրական փոխանցում մեկ անդամ պետությունից մյուսին՝ 6-րդ հոդվածի համաձայն.

բ) սահմանում են բաշխման կանոն, որը համաձայնեցվել է անդամ պետությունների կողմից, որով վերականգնվող աղբյուրներից ստացված էներգիան բաշխվում է անդամ պետությունների միջև: Նման կանոնի մասին Հանձնաժողովը ծանուցվում է ոչ ուշ, քան այդ կանոնն ուժի մեջ մտնելու տարվա ավարտից երեք ամիս առաջ:

2. Յուրաքանչյուր տարվա վերջին երեք ամիսների ընթացքում յուրաքանչյուր անդամ պետություն, որը ծանուցում է ուղարկել 1(բ) պարբերության համաձայն, ներկայացնում է ծանուցման նամակ, որտեղ նշվում է տարվա ընթացքում էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիայի, և այդ աղբյուրների միջոցով իրականացված ջեռուցման ու հովացման ծավալը, որը ենթակա է բաշխման կանոնին:

3. Սույն Հրահանգի՝ ընդհանուր ազգային սահմանաչափերին վերաբերող պահանջների նպատակներով՝ 2-րդ պարբերության համաձայն էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիայի, և այդ աղբյուրների միջոցով իրականացված ջեռուցման ու հովացման ծավալը վերաբաշխվում է համապատասխան անդամ պետությունների միջև՝ բաշխման կանոնի համաձայն:

Հոդված 12

Հզորության ավելացումը

7(2) հոդվածի և 9(2)(բ) հոդվածի նպատակով՝ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի միավորները, որոնք կարելի է վերագրվել կայանի հզորության ավելացմանը, համարվում են արտադրված մեկ այլ կայանի կողմից, որը շահագործման է հանձնվել հզորության ավելացման իրականացման ժամանակ:

Վարչական ընթացակարգերը, կանոնակարգերը և կանոնագրքերը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ էներգիայի վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիայի արտադրության ու այդ աղբյուրների միջոցով ջեռուցման ու հովացման իրականացման կայանների, դրանց միացված փոխադրման ու բաշխման ցանցի ենթակառուցվածքների, և կենսազանգվածը՝ բիովառելիքների կամ այլ էներգակիրների փոխակերպման գործընթացի նկատմամբ կիրառվող լիազորման, հավաստագրման և լիցենզավորման ընթացակարգերը լինեն համաչափ և հարկի: Անդամ պետությունները, մասնավորապես, քայլեր են ձեռնարկում՝ ապահովելու համար, որ՝

ա) հաշվի առնելով անդամ պետությունների վարչական կառուցվածքի և կազմակերպման տարբերությունները՝ ազգային, տարածաշրջանային և տեղական վարչական մարմինների՝ լիազորման, հավաստագրման և լիցենզավորման ընթացակարգերը, այդ թվում՝ տարածքային պլանավորման ընթացակարգերի համապատասխան պարտականությունները, հստակ համակարգվում են ու սահմանվում, և նախատեսված են կառուցապատման ու շինարարության թույլտվությունների մասին որոշումներ կայացնելու թափանցիկ ժամանակացույցեր:

բ) վերականգնվող էներգիայի կայանների համար լիազորման, հավաստագրման և լիցենզավորման ընթացքի և հայտատուներին հասանելի օժանդակության մասին համապարփակ տեղեկությունները տրամադրվում են պատշաճ մակարդակով:

գ) վարչական ընթացակարգերը ռացիոնալացվում են և համապատասխանեցվում համարժեք վարչական մակարդակին: դ) լիազորումը, հավաստագրումը և լիցենզավորումը կարգավորող կանոններն օբյեկտիվ են, թափանցիկ ու համաչափ, դրանք հայտատուների նկատմամբ խտրական վերաբերմունքի հիմք չեն հանդիսանում, և այդ կանոնների համար ամբողջովին հաշվի է առնվում վերականգնվող էներգիայի տարբեր տեխնոլոգիաների առանձնահատկությունները:

դ) սպառողների, նախագծողների, ճարտարապետների, կառուցապատողների և սարքավորումներ ու համակարգեր տեղադրողների ու մատակարարների վարչական վճարները թափանցիկ են ու համապատասխանում են ծախսերին, և

ե) ավելի փոքրածավալ նախագծերի և վերականգնվող աղբյուրներից էներգիայի արտադրության ապակենտրոնացած սարքավորումների համար սահմանվում են

թույլտվության տրամադրման պարզեցված ընթացակարգեր, այդ թվում՝ թույլտվության տրամադրում սովորական ծանուցումների միջոցով, եթե դա թույլատրվում է կիրառվող կարգավորող շրջանակով:

2. Անդամ պետությունները հստակորեն սահմանում են բոլոր այն տեխնիկական մասնագրերը, որոնք պետք է բավարարեն վերականգնվող էներգիայի սարքավորումներն ու համակարգերը՝ աջակցության սխեմաներում ընդգրկվելու համար: Եթե կան եվրոպական ստանդարտներ, այդ թվում՝ ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից սահմանված էկո-պիտակներ, էներգաարդյունավետության պիտակներ և այլ տեխնիկական հղումների համակարգեր, նման տեխնիկական մասնագրերը պետք է լինեն այդ ստանդարտների տեսքով: Նման տեխնիկական մասնագրերով չպետք է նախատեսվի, թե որտեղ պետք է հավաստագրվեն սարքավորումներն ու համակարգերը, և դրանք չպետք է խոչընդոտեն ներքին շուկայի գործունեությունը:

3. Անդամ պետությունները պետք է խրախուսեն բոլոր շահագրգիռ կողմերին և, մասնավորապես, տեղական և տարածաշրջանային վարչական մարմիններին ապահովել, որ արդյունաբերական կամ բնակելի տարածքների պլանավորման, նախագծման, կառուցման և վերանորոգման ժամանակ նախատեսվի էներգիայի վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրականության և այդ աղբյուրների միջոցով ջեռուցման ու հովացման իրականացման և կենտրոնացված ջեռուցման ու հովացման իրականացման սարքավորումների ու համակարգերի տեղադրումը: Անդամ պետությունները պետք է, մասնավորապես, խրախուսեն տեղական և տարածաշրջանային վարչական մարմիններին, անհրաժեշտության դեպքում, քաղաքի ենթակառուցվածքների նախագծման ժամանակ հաշվի առնել էներգիայի վերականգնվող աղբյուրների միջոցով ջեռուցման ու հովացման իրականացման հնարավորությունը:

4. Անդամ պետությունները շինարարության մասին իրենց կանոնակարգերում և կանոնգրքերում ներառում են անհրաժեշտ միջոցները՝ շինարարության ոլորտում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի բոլոր տեսակների մասնաբաժինը մեծացնելու նպատակով:

Նման միջոցները սահմանելիս կամ տարածաշրջանային օժանդակության իրենց սխեմաներում անդամ պետությունները կարող են դիտարկել էներգաարդյունավետության զգալի մեծացմանը, համակցված արտադրությանը և պասիվ, ցածր կամ զրոյական

Էներգասպառմամբ շենքերին վերաբերող ու ազգային մակարդակով ձեռնարկվող միջոցները:

Մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը անդամ պետությունները պետք է շինարարության մասին իրենց կանոնակարգերում ու կանոնագրքերում կամ համարժեք ազդեցությունն ապահովող այլ ձևերով, անհրաժեշտության դեպքում, պահանջեն նոր շենքերում կամ հիմնանորոգման ենթակա գոյություն ունեցող շենքերում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործումը մինիմալ քանակությամբ: Անդամ պետությունները պետք է թույլատրեն բավարարել այդ մինիմալ մակարդակները մասնավորապես կենտրոնացված ջեռուցման ու հովացման հաշվին, որի իրականացման համար օգտագործվում է էներգիայի վերականգնվող աղբյուրների զգալի մասնաբաժին:

Առաջին ենթապարբերության պահանջները կիրառվում են զինված ուժերի նկատմամբ այնքանով, որքանով դրա կիրառումը չի հակասում զինված ուժերի գործունեության բնույթին և հիմնական նպատակին, և բացառապես ռազմական նպատակներով օգտագործվող նյութերի բացառությամբ:

5. Անդամ պետություններն ապահովում են, որ նորակառույց հասարակական շենքերը և հիմնանորոգման ենթակա գոյություն ունեցող շենքերը ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակով սույն Հրահանգի համատեքստում լինեն օրինակելի՝ սկսած 2012 թվականի հունվարի 1-ից: Անդամ պետությունները կարող են, մասնավորապես, թույլ տալ, որ այդ պարտավորությունն իրականացվի՝ համապատասխանելով զրոյական էներգասպառմամբ շենքերի համար սահմանված չափանիշներին կամ նախատեսելով, որ հասարակական կամ հասարակական/մասնավոր շենքերի տանիքները երրորդ կողմերն օգտագործեն այն կայանների համար, որոնք արտադրում են էներգիա վերականգնվող աղբյուրներից:

6. Հաշվի առնելով շինարարության մասին իրենց կանոնակարգերն ու կանոնագրքերը՝ անդամ պետությունները պետք է խթանեն վերականգնվող էներգիայի ջեռուցման և հովացման համակարգերի ու սարքավորումների օգտագործումը, որոնք կարող են ապահովել էներգասպառման զգալի կրճատում: Անդամ պետությունները պետք է կիրառեն էներգաարդյունավետության պիտակներ, էկո-պիտակներ կամ ազգային կամ Համայնքի մակարդակով սահմանված համապատասխան այլ հավաստագրեր կամ չափանիշներ, դրանց առկայության դեպքում, որպես հիմք՝ նման համակարգերի և սարքավորման օգտագործման խրախուսման համար:

Կենսազանգվածի դեպքում անդամ պետությունները պետք է խթանեն փոխակերպման այն տեխնոլոգիաների օգտագործումը, որոնք կարող են ապահովել փոխակերպման առնվազն 85% արդյունավետություն կենցաղային ու կոմերցիոն նպատակներով օգտագործման դեպքում, և առնվազն 70% արդյունավետություն՝ արդյունաբերական նպատակով օգտագործման դեպքում:

Ջերմային պոմպերի դեպքում անդամ պետությունները պետք է խթանեն այն պոմպերը, որոնք բավարարում են էլեկտրական, գազով աշխատող կամ գազակլանիչ ջերմային պոմպերը էկոպիտակավորելու համար էկոլոգիական չափանիշներ սահմանող՝ Հանձնաժողովի 2007 թվականի նոյեմբերի 9-ի որոշմամբ սահմանված էկոպիտակավորման նվազագույն պահանջները [20]:

Արևաջերմային էներգիայի դեպքում անդամ պետությունները պետք է խթանեն հավաստագրված սարքավորումների և համակարգերի օգտագործումը՝ հիմնվելով եվրոպական չափանիշների վրա, դրանց առկայության դեպքում, այդ թվում՝ էկոպիտակների, էներգաարդյունավետության պիտակների և ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից սահմանված տեխնիկական հղումների այլ համակարգերի վրա:

Սույն պարբերության նպատակներով փոխակերպման արդյունավետությունը և սարքավորումների ու համակարգերի արտադրանքի ու արտադրական ծախսերի հարաբերակցությունը գնահատելիս անդամ պետությունները պետք է կիրառեն Համայնքի ընթացակարգերը, կամ, դրանց բացակայության դեպքում, միջազգային ընթացակարգեր՝ նման ընթացակարգերի առկայության դեպքում:

Հոդված 14

Տեղեկությունները և ուսուցումը

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ օժանդակության միջոցների մասին տեղեկությունները տրամադրվեն բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերին, այսինքն՝ ջեռուցման, հովացման և էլեկտրաէներգիայի սարքավորումներ ու համակարգեր, ինչպես նաև վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման հետ համատեղելի փոխադրամիջոցներ օգտագործողներին, կառուցողներին, տեղադրողներին, ճարտարապետներին և մատակարարներին:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի, և այդ աղբյուրների միջոցով իրականացվող ջեռուցման ու հովացման սարքավորումների և համակարգերի ընդհանուր օգուտների, ծախսերի և էներգաարդյունավետության մասին տեղեկությունները տրամադրվեն կա՛մ սարքավորման կամ համակարգի մատակարարի, կա՛մ ազգային իրավասու մարմնի կողմից:

3. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հավաստագրման սխեմաները կամ որակավորման համարժեք սխեմաները հասանելի դառնան կամ հասանելի լինեն մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը՝ կենսազանգվածի փոքր կաթսաներ և վառարաններ, արևային ֆոտոգալվանային և արևաջերմային համակարգեր, կենսաջերմային համակարգեր և ջերմային պոմպեր տեղադրողների համար: Այդ սխեմաների համար կարելի է դիտարկել համապատասխան գործող սխեմաները և կառուցվածքները, և դրանք կարող են հիմնվել 4-րդ հավելվածով սահմանված չափորոշիչների վրա: Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ճանաչի մեկ այլ անդամ պետության կողմից այդ չափորոշիչների համաձայն տրամադրված հավաստագրումը:

4. Անդամ պետությունները հանրությանը տրամադրում են տեղեկություններ 3-րդ պարբերությամբ նշված հավաստագրման սխեմաների կամ որակավորման համարժեք սխեմաների մասին: Անդամ պետությունները նաև կարող են տրամադրել այն տեղադրողների ցանկը, ովքեր որակավորված են կամ հավաստագրված՝ 3-րդ պարբերությամբ նշված դրույթների համաձայն:

5. Անդամ պետություններն ապահովում են, որ բոլոր շահագրգիռ կողմերի, և մասնավորապես նախագծողներին և ճարտարապետներին, տրամադրվի ուղեցույց, որպեսզի նրանք կարողանան պատշաճ կերպով դիտարկել էներգիայի վերականգնվող աղբյուրների, բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաների և կենտրոնացված ջեռուցման ու հովացման օպտիմալ զուգադրումը՝ արդյունաբերական կամ բնակելի տարածքների պլանավորման, նախագծման, կառուցման և վերանորոգման ժամանակ:

6. Անդամ պետությունները, տեղական և տարածաշրջանային իշխանությունների մասնակցությամբ, մշակում են տեղեկատվական, իրազեկման բարձրացման, ուղեցույցային կամ վերապատրաստման ծրագրեր՝ քաղաքացիներին վերականգնվող աղբյուրների էներգիայի մշակման և օգտագործման օգուտները և գործնական լինելը:

Վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի և այդ աղբյուրների միջոցով իրականացվող ջեռուցման ու հովացման ծագման հավաստագրերը

1. Վերջնական սպառողին մատակարարվող էներգիայի կազմում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժինը կամ քանակությունը սույն Հրահանգի 3(6) հոդվածի համաձայն հավաստելու համար, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի ծագումը կարող է երաշխավորվել սույն Հրահանգի իմաստով՝ օբյեկտիվ, թափանցիկ և ոչ խտրական չափորոշիչների համաձայն:

2. Այդ նպատակով անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ծագման հավաստագիրը տրամադրվի էներգիայի վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիա արտադրողի պահանջի դեպքում: Անդամ պետությունները կարող են սահմանել պայման, որի համաձայն՝ ծագման հավաստագրերը տրամադրվեն էներգիայի վերականգնվող աղբյուրների միջոցով ջեռուցում ու հովացում իրականացնողների պահանջի դեպքում: Նման պայմանը կարող է սահմանվել՝ հզորության նվազագույն սահմանաչափի կիրառմամբ: Ծագման հավաստագիրը պետք է լինի 1ՄՎտ/ժամ ստանդարտ չափով: Արտադրվող էներգիայի յուրաքանչյուր միավորի համար պետք է տրամադրվի միայն մեկ ծագման հավաստագիր:

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի միևնույն միավորը դիտարկվում է միայն մեկ անգամ:

Անդամ պետությունները կարող են նախատեսել, որ արտադրողը չպետք է ստանա աջակցություն, եթե այդ արտադրողին տրամադրվել է ծագման հավաստագիր վերականգնվող աղբյուրներից արտադրված նույն էներգիայի համար:

Ծագման հավաստագիրը չունի որևէ ուժ՝ կապված անդամ պետությունների կողմից 3-րդ հոդվածի դրույթներին համապատասխանելու հետ: Ծագման երաշխիքների փոխանցումը, առանձին կամ էներգիայի փաստացի փոխանցման հետ, որևէ կերպ չպետք է ազդի անդամ պետությունների՝ սահմանաչափերն ապահովելու կամ 5-րդ հոդվածի համաձայն վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի վերջնական համախառն սպառումը հաշվարկելու համար վիճակագրական փոխանցումներ, համատեղ նախագծեր կամ աջակցության համատեղ սխեմաներ օգտագործելու որոշումների վրա:

3. Ցանկացած նպատակով ծագման հավաստագրի կիրառումը պետք է իրականացվի էներգիայի համապատասխան միավորի արտադրությանը հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ծագման հավաստագիրը կիրառումից հետո կորցնում է իր ուժը:

4. Անդամ պետությունները կամ նշանակված իրավասու մարմինները պետք է վերահսկեն ծագման հավաստագրերի տրամադրումը, փոխանցումը կամ դրանց գործողության դադարեցումը: Նշանակված իրավասու մարմինները պետք է ունենան ըստ տարածաշրջանների տարբերակված պարտավորություններ, և պետք է գործեն արտադրական, առևտրային և մատակարարման գործունեությունից անկախ:

5. Անդամ պետությունները կամ նշանակված իրավասու մարմինները պետք է կիրառեն համապատասխան մեխանիզմներ՝ ապահովելու համար, որ ծագման հավաստագրերը տրամադրվում են, փոխանցում և չեղյալ ճանաչվում էլեկտրոնային եղանակով, և այդ ծագման երաշխիքները ճշգրիտ են, վստահելի և չկեղծված:

6. Ծագման հավաստագրում առնվազն նշվում է՝

ա) այն էներգիայի աղբյուրը, որից արտադրվել է էներգիան, և արտադրության մեկնարկման և ավարտի օրերը.

բ) արդյոք այն վերաբերում է՝

(i) էլեկտրաէներգիային, թե

(ii) ջեռուցմանն ու հովացմանը.

գ) այն կայանի անվանումը, գտնվելու վայրը, տեսակը և հզորությունը, որտեղ արտադրվել է այդ էներգիան.

դ) արդյոք կայանը ստացել է ներդրումային օժանդակություն և ինչ չափով, արդյոք էներգիայի միավորը որևէ այլ ձևով ընդգրկվել է աջակցության ազգային սխեմայում և ինչ չափով, ինչպես նաև աջակցության սխեմայի տեսակը.

ե) կայանի շահագործման մեկնարկի օրը.

զ) լիազորման օրն ու լիազորող երկիրը և նույնականացման համարը:

7. Եթե էլեկտրաէներգիա մատակարարողը պետք է հավաստի էներգիայի կազմում վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժինը կամ

քանակությունը 2003/54/ԵՀ հրահանգի 3(6) հոդվածի նպատակներով, նա կարող է դա անել՝ օգտագործելով ծագման հավաստագրերը:

8. Էլեկտրաէներգիա մատակարարողի կողմից երրորդ կողմին վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի փոխանցված քանակությունը, որը նշված է ծագման հավաստագրերում, պետք է մասհանվի իր էներգիայի կազմում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժնից՝ 2003/54/ԵՀ հրահանգի 3(6) հոդվածի նպատակներով:

9. Անդամ պետությունները պետք է ճանաչեն այլ անդամ պետություններից կողմից տրամադրված ծագման հավաստագրերը՝ սույն Հրահանգի համաձայն, բացառապես որպես 1-ին և 6(ա)–(զ) պարբերություններում նշված տարրերի հավաստում: Անդամ պետությունը կարող է մերժել ծագման հավաստագրի ճանաչումը, եթե այն հիմնավոր կասկածներ ունի դրա ճշտության, վստահելիության և հավաստիության վերաբերյալ: Անդամ պետությունը Հանձնաժողովին ծանուցում է նման մերժման և իր հիմնավորման մասին:

10. Եթե Հանձնաժողովը գտնում է, որ ծագման հավաստագիրը ճանաչելու մերժումը չհիմնավորված է, Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել՝ պահանջելով, որ տվյալ պետությունը ճանաչի այն:

11. Անդամ պետությունը կարող է, Համայնքի իրավունքի համաձայն, ներկայացնել օբյեկտիվ, թափանցիկ և ոչ խտրական չափորոշիչներ ծագման հավաստագրերի օգտագործման համար՝ 2003/54/ԵՀ հրահանգի 3(6) հոդվածով սահմանված պարտավորությունների համաձայն:

12. Եթե էներգիա մատակարարողները սպառողների համար շուկա են ներմուծում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիա՝ հղում անելով վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի բնապահպանական կամ այլ օգուտներին, անդամ պետությունները կարող են պահանջել, որ այդ էներգամատակարարները համառոտ նկարագրի ձևով տրամադրեն տեղեկություններ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժնի կամ քանակության մասին, որը մատակարարվում է այն կայաններից, որոնք շահագործման են հանձնվել 2009 թվականի հունիսի 25-ից հետո, կամ որոնց հզորությունը ավելացվել է այդ ամսաթվից հետո:

Ցանցերի մատչելիությունը և շահագործումը

1. Անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան քայլեր՝ փոխադրման ու բաշխման ցանցերի ենթակառուցվածքներ, ինտելեկտուալ ցանցեր, պահեստավորման օբյեկտներ և էլեկտրաէներգիայի համակարգ ձևավորելու համար՝ էներգիայի վերականգնվող աղբյուրներից էլեկտրականության արտադրության հետագա զարգացման, այդ թվում՝ անդամ պետությունների և անդամ պետությունների ու երրորդ երկրների միջև միացման խողովակաշարի կառուցման ընթացքում էլեկտրաէներգիայի համակարգի անվտանգ գործունեությունն ապահովելու նպատակով: Անդամ պետությունները նաև ձեռնարկում են անհրաժեշտ քայլեր՝ ցանցի ենթակառուցվածքի լիազորման ընթացակարգերն արագացնելու և ցանցի ենթակառուցվածքի լիազորումը վարչական ու նախագծման ընթացակարգերին համապատասխանեցնելու համար: 2. Պահպանելով ցանցի վստահելիության և անվտանգության պահպանմանը վերաբերող պահանջները և հիմնվելով իրավասու ազգային մարմինների կողմից սահմանված թափանցիկ և ոչ խտրական չափորոշիչների վրա՝

ա) անդամ պետությունները պետք է ապահովեն, որ փոխադրման համակարգի օպերատորները և բաշխման համակարգի օպերատորները իրենց տարածքում երաշխավորեն էներգիայի վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի փոխադրումը և բաշխումը.

բ) անդամ պետությունները պետք է նաև նախատեսեն էներգիայի վերականգնող աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի ցանցային համակարգի կա՛մ առաջնային, կա՛մ երաշխավորված հասանելիությունը.

գ) անդամ պետությունները պետք է ապահովեն, որ էլեկտրաէներգիայի արտադրության կայանները շահագործելիս փոխադրման համակարգի օպերատորները նախապատվություն տան այն կայաններին, որոնք օգտագործում են էներգիայի վերականգնվող աղբյուրներ՝ այնքանով, որքանով դա թույլ է տալիս ազգային էլեկտրական համակարգերի անվտանգ շահագործումը և հիմնվելով թափանցիկ և ոչ խտրական չափորոշիչների վրա: Անդամ պետությունները պետք է ապահովեն , որ ձեռնարկվում են ցանցին և շուկային վերաբերող բոլոր համապատասխան միջոցները՝ էներգիայի վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի կրճատումը նվազագույնին հասցնելու համար: Եթե ձեռնարկվում են միջոցներ էներգիայի վերականգնվող աղբյուրները կրճատելու ուղղությամբ՝ ազգային

Էլեկտրաէներգիայի համակարգի անվտանգությունը և էլեկտրամատակարարման անվտանգությունը երաշխավորելու նպատակով, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ համակարգի համապատասխան օպերատորները հաշվետվություն ներկայացնեն կարգավորող իրավասու մարմնին այդ միջոցների վերաբերյալ, և նշեն, թե ինչ ուղղիչ միջոցներ են իրենք նախատեսում ձեռնարկել՝ ոչ նպատակահարմար կրճատումներից խուսափելու նպատակով:

3. Անդամ պետությունները պետք է պահանջեն, որ փոխադրման համակարգի օպերատորները և բաշխման համակարգի օպերատորները սահմանեն և հանրությանը հասանելի դարձնեն իրենց ստանդարտային կանոնները, որոնք վերաբերում են տեխնիկական համապատասխանեցման ծախսերի կատարմանը և բաշխմանը, ինչպիսիք են ցանցային միացումները և ցանցի վերաշահագործումը, ցանցի բարելավված գործունեությունը, ինչպես նաև կանոններ ցանցերի մասին օրենսգրքերի ոչ խտրական կիրարկման վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են էներգիայի վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիա արտադրողներին համակցված ցանցի մեջ ընդգրկելու համար:

Այդ կանոնները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ, թափանցիկ և ոչ խտրական չափորոշիչների վրա՝ մասնավորապես հաշվի առնելով ցանցի մեջ այդ արտադրողներին ընդգրկելու հետ կապված ծախսերն ու օգուտները, ինչպես նաև հեռավոր շրջաններում և բնակչության փոքր խտություն ունեցող շրջաններում գտնվող արտադրողների հետ կապված հանգամանքները: Այդ կանոններով կարող են նախատեսվել ցանցին միացման տարբեր տեսակներ:

4. Անհրաժեշտության դեպքում, անդամ պետությունները կարող են պահանջել, որ փոխադրման և բաշխման համակարգերի օպերատորներն ամբողջությամբ կամ մասամբ իրենց վրա վերցնեն 3-րդ պարբերությամբ նշված ծախսերը: Անդամ պետությունները պետք է դիտարկեն և ձեռնարկեն անհրաժեշտ քայլերը՝ 3-րդ պարբերությամբ նշված ծախսերը կրելու և բաշխելու շրջանակն ու կանոնները բարելավելու ուղղությամբ մինչև 2011 թվականի հունիսի 30-ը, իսկ այնուհետև՝ մինչև 2011 թվականի հունիսի 30-ը՝ նոր արտադրողների ընդգրկումն ապահովելու համար, ինչպես սահմանված է այդ պարբերությամբ:

5. Անդամ պետությունները պետք է գազի փոխադրման համակարգի և ու բաշխման համակարգի օպերատորներից պահանջեն համակարգին միանալու ցանկություն հայտնաձև՝ վերականգնվող աղբյուրներից էներգիայի ցանկացած նոր արտադրողին տրամադրել պահանջվող համապարփակ և անհրաժեշտ տեղեկությունները, այդ թվում՝

- ա) ցանցին միանալու հետ կապված ծախսերի համապարփակ և մանրամասն գնահատումը.
- բ) ցանցին միանալու դիմումը ստանալու և վերանայելու ողջամիտ ու ճշգրիտ ժամանակացույց.
- գ) ողջամիտ ինդիկատիվ ժամանակացույց՝ ցանցին միանալու յուրաքանչյուր դեպքի համար:
- Անդամ պետությունները կարող են թույլ տալ, որ էներգիայի վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիայի այն արտադրողները, ովքեր ուզում են միանալ ցանցին, հանդես գան ցանցին միանալու համար մրցույթի հայտարարությամբ:
6. 3-րդ պարբերությամբ նշված ծախսերի բաշխումն իրականացվում է օբյեկտիվ, թափանցիկ և ոչ խտրական չափորոշիչների վրա հիմնված մեխանիզմի միջոցով՝ հաշվի առնելով այն օգուտները, որոնք կարող են ունենալ սկզբում և հետագայում միացած արտադրողները, ինչպես նաև փոխադրման համակարգի օպերատորները և բաշխման համակարգի օպերատորները այդ միացման արդյունքում:
7. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ փոխադրման և բաշխման սակագների գանձմամբ խտրական վերաբերմունք չի ցուցաբերվում էներգիայի վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի նկատմամբ, մասնավորապես այն էլեկտրաէներգիայի, որն արտադրվում է էներգիայի վերականգնվող աղբյուրներից հեռավոր շրջաններում, ինչպիսիք են կղզային շրջանները, և բնակչության փոքր խտությամբ շրջաններում: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ փոխադրման և բաշխման սակագների գանձմամբ խտրական վերաբերմունք չի ցուցաբերվում էներգիայի վերականգնվող աղբյուրներից ստացվող գազի դեպքում:
8. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ էներգիայի վերականգնվող աղբյուրներ օգտագործող կայաններից էլեկտրաէներգիայի փոխադրման և բաշխման համար փոխադրման համակարգերի օպերատորների և բաշխման համակարգի օպերատորների կողմից գանձվող սակագներն արտացոլեն ծախսերն ու եկամուտները, որոնք կապված են այն հանգամանքի հետ, որ կայանը միացած է ցանցին: Այդ ծախսերն ու եկամուտները կարող են կապված լինել ցածրավոլտ ցանցի անմիջական օգտագործման հետ:
9. Անհրաժեշտության դեպքում անդամ պետությունները պետք է գնահատեն գործող գազատար ցանցն ընդլայնելու անհրաժեշտությունը՝ էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրվող գազի ընդգրկումը խթանելու համար:

10. Համապատասխան դեպքում անդամ պետությունները հաղորդման համակարգի օպերատորներից և բաշխման համակարգի օպերատորներից պետք է պահանջեն սահմանել տեխնիկական կանոններ՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունիսի 26-ի «Բնական գազի ներքին շուկայի ընդհանուր կանոնների մասին» 2003/55/ԵՀ հրահանգի 6-րդ հոդվածի համաձայն [21], մասնավորապես ցանցին միանալու կանոններ, որոնք ներառում են գազի որակին, գազի հոտավորմանը և գազի ճնշմանը ներկայացվող պահանջները: Անդամ պետությունները փոխադրման և բաշխման համակարգի օպերատորներից պետք է պահանջեն սահմանել ցանցին միանալու սակագները՝ գազի վերականգնվող աղբյուրները թափանցիկ և ոչ խտրական չափորոշիչների հիման վրա ընդգրկելու համար:

11. Անդամ պետությունները վերականգնվող աղբյուրների մասին ազգային ծրագրերում պետք է գնահատեն էներգիայի վերականգնվող աղբյուրների միջոցով իրականացվող կենտրոնացված ջեռուցման ու հովացման համար նոր ենթակառուցվածք կառուցելու անհրաժեշտությունը՝ 3(1) հոդվածով նշված 2020 թվականի ազգային սահմանաչափն ապահովելու նպատակով: Այդ գնահատմանը համապատասխան՝ անդամ պետությունները, անհրաժեշտության դեպքում, պետք է քայլեր ձեռնարկեն կենտրոնացված ջեռուցման ենթակառուցվածք կառուցելու ուղղությամբ՝ կենսազանգվածի, արևային և կենսաջերմային էներգիա օգտագործող կայանների միջոցով ջեռուցման ու հովացման իրականացումը հնարավոր դարձնելու նպատակով:

Հոդված 17

Բիովառելիքների և բիոհեղուկների կայունության չափորոշիչները

1. Անկախ այն փաստից, թե որտեղ է արտադրվել հումքը՝ Համայնքի տարածքում, թե Համայնքի տարածքից դուրս, բիովառելիքների և բիոհեղուկների էներգիան պետք է դիտարկվի (ա), (բ) ու (գ) կետերում նշված նպատակներով, եթե դրանք բավարարում են 2-6-րդ պարբերություններով սահմանված կայունության չափորոշիչները:

ա) ազգային սահմանաչափերի վերաբերյալ սույն Հրահանգի պահանջներին համապատասխանությունը ստուգելու համար.

բ) վերականգնվող էներգիայի մասով պարտավորությունների կատարումը ստուգելու համար.

գ) բիովառելիքների և բիոհեղուկների սպառման համար ֆինանսական օժանդակություն ստանալու թույլտվության համար:

Այնուամենայնիվ, այն բիովառելիքներն ու բիոհեղուկները, որոնք արտադրվում են թափոններից և մնացորդներից՝ բացառությամբ գյուղատնտեսական, ջրային կուլտուրային, ձկնարդյունաբերության և առնտառնտեսության մնացորդների, պետք է բավարարեն միայն 2-րդ պարբերությամբ սահմանված չափորոշիչները՝ (ա), (բ) ու (գ) կետերի նպատակներով դիտարկվելու համար:

2. Բիովառելիքների ու բիոհեղուկների օգտագործման միջոցով ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման ցուցանիշը, որը դիտարկվում է (ա), (բ) ու (գ) կետերի նպատակներով, պետք է լինի առնվազն 35%:

Սկսած 2017 թվականի հունվարի 1-ից բիովառելիքների ու բիոհեղուկների օգտագործման միջոցով ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման ցուցանիշը, որը դիտարկվում է (ա), (բ) ու (գ) կետերի նպատակներով, պետք է լինի առնվազն 50 %: Սկսած 2018 թվականի հունվարի 1-ից՝ ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման ցուցանիշը պետք է լինի առնվազն 60% այն բիովառելիքների և բիոհեղուկների համար, որոնք արտադրվել են այն կայաններում, որոնցում արտադրությունը սկսվել է 2017 թվականի հունվարի 1-ից հետո:

Բիովառելիքների և բիոհեղուկների միջոցով ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման ցուցանիշը պետք է հաշվարկվի 19(1) հոդվածի համաձայն:

Այն բիովառելիքների և բիոհեղուկների դեպքում, որոնք արտադրվել են այն կայաններում, որոնք շահագործման մեջ են եղել 2008 թվականի հունվարի 23-ին, առաջին պարբերությունը պետք է կիրառվի 2013 թվականի ապրիլի 1-ից հետո:

3. Այն բիովառելիքները և բիոհեղուկները, որոնք դիտարկվում են 1-ին պարբերության (ա), (բ) ու (գ) կետերով նշված նպատակներով, չպետք է արտադրված լինեն հարուստ կենսաբազմազանություն ունեցող հողային տարածքներից վերցված հումքից, մասնավորապես այն հողային տարածքներից, որոնք ունեցել են հետևյալ կարգավիճակներից մեկը 2008 թվականի հունվարին կամ դրանից հետո՝ անկախ այն փաստից՝ արդյոք այդ հողային տարածքներն ունեն այդ կարգավիճակը ներկայումս, թե ոչ՝

ա) կուսական անտառ և այլ անտառաձածկ տարածք, մասնավորապես աբորիգեն տեսակի անտառ և այլ անտառաձածկ տարածք, որտեղ չկան մարդկային գործունեության նկատելի հետքեր և էկոլոգիական պրոցեսները զգալիորեն վնասված չեն.

բ) տարածքներ, որոնք նախատեսված են՝

(i) օրենքով կամ համապատասխան իրավասու մարմնի կողմից՝ բնապահպանական նպատակների համար, կամ

(ii) միջազգային պայմանագրերով ճանաչված կամ միջկառավարական կազմակերպությունների և Բնության պահպանման միջազգային միավորման կողմից կազմած ցանկերում ընդգրկված հազվագյուտ կամ վտանգված էկոհամակարգերի կամ տեսակների պաշտպանության համար՝ պայմանով, որ դրանք պետք է ճանաչվեն 18(4) երկրորդ ենթապարբերության համաձայն,

քանի դեռ չկա վկայություն այն մասին, որ այդ հումքի արտադրությունը հակասել է այդ բնապահպանական նպատակներին.

գ) հարուստ կենսաբազմազանությամբ մարգագետին, որը՝

(i) բնական է, այսինքն՝ մարգագետին է, որը կապահպանի մարգագետնի կարգավիճակը մարդու միջամտության բացակայության պայմաններում, և որտեղ պահպանված են բնական տեսակների կազմը և էկոլոգիական բնութագրերն ու պրոցեսները.

(ii) ոչ բնական է, այսինքն՝ մարգագետին է, որը կկորցնի մարգագետնի կարգավիճակը մարդու միջամտության բացակայության դեպքում, և որը հարուստ են բուսատեսակներով ու կենդանատեսակներով և դեգրադացված չէ, քանի դեռ չկա վկայություն այն մասին, որ հումքի օգտագործումն անհրաժեշտ է՝ մարգագետնի կարգավիճակը պահպանելու համար:

Հանձնաժողովը սահմանում է չափորոշիչներ և աշխարհագրական սահմանագծեր՝ որոշելու համար, թե որ մարգագետիններն են ընդգրկվելու առաջին ենթապարբերության (գ) կետում: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 25(4) հոդվածում նշված՝ ուսումնասիրություններ առող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

4. Այն բիոլաոռնիքները և բիոհեղուկները, որոնք դիտարկվում են 1-ին պարբերության (ա), (բ) ու (գ) կետերով նշված նպատակներով, չպետք է արտադրված լինեն ածխածնի մեծ պարունակությամբ հողային տարածքներից վերցված հումքից, մասնավորապես այն

հողային տարածքներից, որոնք ունեցել են հետևյալ կարգավիճակներից մեկը 2008 թվականի հունվարին կամ դրանից հետո, սակայն այլևս չունեն այդ կարգավիճակը՝

ա) ճահճացած տարածքներ, այսինքն՝ հողային տարածք, որը մշտապես կամ տարվա մեծ մասը ծածկված է ջրով.

բ) մշտապես անտառներով ծածկված տարածքներ, այսինքն՝ ավելի քան մեկ հեկտար մակերեսով հողատարածք, որն ավելի քան 30%-ով ծածկված է բուսականությամբ կամ հինգ մետրից բարձր ծառերով կամ այնպիսի ծառերով, որոնց բարձրությունը կարող է հասնել այդ սահմաններին.

գ) ավելի քան մեկ հեկտար մակերեսով հողատարածք՝ ավելի քան հինգ մետր բարձրությամբ ծառերով և 10%-30% բուսածածկով, կամ այնպիսի ծառերով, որոնք կարող են հասնել այդ սահմաններին, քանի դեռ չկա վկայություն այն մասին, որ այդ տարածքի ածխածնի պաշարը փոխակերպումից առաջ և հետո այնպիսին է, որ V հավելվածի Գ մասով սահմանված մեթոդաբանության կիրառման դեպքում հնարավոր կլինի բավարարել սույն հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված պայմանները:

Սույն պարբերության դրույթները չպետք է կիրառվեն, եթե հումքի ստացման ժամանակ հողատարածքն ուներ այն նույն կարգավիճակը, որն այն ուներ 2008 թվականի հունվարին:

5. Բիովառելիքներն ու բիոհեղուկները, որոնք դիտարկվում են 1-ին պարբերության (ա), (բ) ու (գ) կետերով նշված նպատակներով, չպետք է արտադրված լինեն այն հումքից, որը վերցվել է այն հողային տարածքներից, որոնք 2008 թվականի հունվարին եղել են տորֆաճահիճներ, քանի դեռ չկա վկայություն այն մասին, որ այդ հումքի աճեցման և հավաքման համար պարտադիր չէ նախկինում չցամաքեցված հողի ցամաքեցումը:

6. Համայնքի տարածքում մշակված և բիովառելիքների ու բիոհեղուկների արտադրության համար օգտագործված գյուղատնտեսական հումքը, որը դիտարկվում է 1-ին պարբերության (ա), (բ) ու (գ) կետերով նշված նպատակներով, պետք է արդյունահանվի՝ Ա մասի «Շրջակա միջավայր» գլխում և Ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության շրջանակում ֆերմերների համար անմիջական աջակցության սխեմաներ սահմանող և ֆերմերների համար աջակցության որոշ սխեմաներ սահմանող՝ Խորհրդի 2009 թվականի հունվարի 19-ի թիվ 73/2009 Կանոնակարգի (ԵՀ) II հավելվածի 9-րդ կետում նշված դրույթներով սահմանված պահանջների և չափանիշների, ինչպես նաև բնականոն գյուղատնտեսական և բնապահպանական պայմաններին ներկայացվող՝ այդ Կանոնակարգի 6(1) հոդվածով սահմանված նվազագույն պահանջների համաձայն:

7. Հանձնաժողովը յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ պետք է Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ զեկույց ներկայացնի այն երրորդ երկրների և անդամ պետությունների վերաբերյալ, որոնք Համայնքի տարածքում սպառվող բիովառելիքների կամ բիովառելիքների համար հումքի կարևոր աղբյուր են, ինչպես նաև 2-5-րդ պարբերություններով սահմանված կայունության չափորոշիչների բավարարման և հողի, ջրերի և օդի պահպանման ուղղությամբ ձեռնարկված ազգային միջոցների վերաբերյալ: Առաջին զեկույցը պետք է ներկայացվի 2012 թվականին:

Հանձնաժողովը յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ հաշվետվություն է ներկայացնում Համայնքում և երրորդ երկրներում բիովառելիքների ավելացված պահանջարկի սոցիալական կայունության վրա ազդեցության մասին, մասնավորապես զարգացող երկրներում ապրող մարդկանց համար մատչելի գներով սննդամթերքի առկայության վրա բիովառելիքների մասով Համայնքի քաղաքականության ազդեցության մասին, և զարգացմանը վերաբերող այլ հարցերի մասին: Զեկույցում պետք է անդրադառնալ հողօգտագործման իրավունքների պահպանմանը: Զեկույցներում Համայնքի տարածքում սպառվող բիովառելիքների հումքի կարևոր աղբյուր հանդիսացող երրորդ երկրների և անդամ պետությունների համար նշվում է, թե արդյոք այդ երկիրը վավերացրել ու կիրարկել է Աշխատանքի համաշխարհային կազմակերպության հետևյալ կոնվենցիաները՝

– «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» կոնվենցիա (թիվ 29)

– «Միավորումների ազատության և կազմակերպելու իրավունքի պաշտպանության մասին» կոնվենցիա (թիվ 87)

«Կոլեկտիվ բանակցություններ կազմակերպելու և վարելու իրավունքի սկզբունքների կիրառման մասին» կոնվենցիա (թիվ 98)

– «Հավասար աշխատանքի դիմաց տղամարդկանց ու կանանց հավասար վարձատրության մասին» Կոնվենցիա (թիվ 100)

– «Հարկադիր աշխատանքի վերացման մասին» Կոնվենցիա (թիվ 105)

– «Աշխատանքի և մասնագիտության հետ կապված խտրականության մասին» Կոնվենցիա (թիվ 111)

– «Աշխատանքի ընդունման նվազագույն տարիքի մասին» Կոնվենցիա (թիվ 138)

– «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և վերացման անհապաղ միջոցների մասին» Կոնվենցիա (թիվ 182)

Զեկույցներում Համայնքի տարածքում սպառվող բիովառելիքների հումքի կարևոր աղբյուր հանդիսացող երրորդ երկրների և անդամ պետությունների համար նշվում է, թե արդյոք այդ երկիրը վավերացրել ու կիրարկել է՝

– Կենսաանվտանգության մասին Կարթագենյան արձանագրությունը.

– «Կենդանական ու բուսական աշխարհի վտանգված վայրի տեսակների միջազգային առևտրի մասին» Կոնվենցիա

Առաջին զեկույցը պետք է ներկայացվի 2012 թվականին: Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, առաջարկում է ուղղիչ միջոցներ, մասնավորապես եթե կա վկայություն այն մասին, որ բիովառելիքների արտադրությունը զգալի ազդեցություն ունի սննդամթերքի գների վրա:

8. 1-ին պարբերության (ա), (բ) ու (գ) կետերի նպատակներով՝ անդամ պետությունները չպետք է հրաժարվեն սույն հոդվածի համաձայն արտադրված բիովառելիքներն ու բիոհեղուկներ դիտարկելուց:

9. Հանձնաժողովը մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը զեկույց է ներկայացնում կենսազանգվածը որպես բիովառելիք և բիոհեղուկ օգտագործումից բացի էներգետիկ այլ նպատակներով օգտագործման կայունության սխեմայի վերաբերյալ: Այդ զեկույցին, համապատասխան դեպքերում, կցվում են առաջարկություններ կենսազանգվածի՝ էներգետիկ այլ նպատակներով օգտագործման համար կայունության սխեմաների մասին՝ ուղղված Եվրոպական պառլամենտին և Խորհրդին: Այդ զեկույցը և դրանում ընդգրկված ցանկացած առաջարկություն պետք է հիմնված լինի առկա լավագույն գիտական փաստերի վրա՝ հաշվի առնելով նորարարական գործընթացների նոր զարգացումները: Եթե այդ նպատակով իրականացված վերլուծությունը վկայում է, որ նպատակահարմար կլինեք բարեփոխումներ իրականացնել՝ կապված անտառներում առկա կենսազանգվածի ու V հավելվածի հաշվարկման մեթոդաբանության կամ բիովառելիքներում ու բիոհեղուկներում ածխածնի պարունակությանը վերաբերող կայունության չափորոշիչների հետ, Հանձնաժողովը, համապատասխան դեպքերում, այդ նույն ժամանակ դրա վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ:

**Կայունության չափորոշիչների հետ բիովառելիքների ու բիոհեղուկների
համապատասխանության ստուգումը**

1. Եթե բիովառելիքներն ու բիոհեղուկները պետք է դիտարկվեն 17(1) հոդվածի (ա), (բ) ու (գ) կետերի նպատակով, անդամ պետությունները պետք է պահանջեն, որ տնտեսվարող սուբյեկտները ներկայացնեն ապացույցներ, որ 17(2) – (5) հոդվածով սահմանված կայունության չափորոշիչները բավարարվել են: Այդ նպատակով նրանք կարող են օգտվել զանգվածի հավասարակշռման համակարգից, որը՝

ա) թույլ է տալիս խառնել կայունության տարբեր առանձնահատկություններով հումքի կամ բիովառելիքի խմբաքանակներ.

բ) պահանջում են տեղեկություններ (ա) կետով նշված խմբաքանակների կայունության առանձնահատկությունների և չափերի մասին, որոնք պետք է վերագրվեն խառնուրդին.

2. Հանձնաժողովը զեկույց է ներկայացնում Եվրոպական պառլամենտ ու Խորհուրդ 2010 թվականին և 2012 թվականին 1-ին պարբերությամբ նկարագրված՝ զանգվածի հավասարակշռման միջոցով ստուգման մեթոդի մասին և հումքի, բիովառելիքների ու բիոհեղուկների մասով ստուգման այլ մեթոդների հնարավորությունների մասին: Իր գնահատման մեջ Հանձնաժողովը դիտարկում է ստուգման այն մեթոդները, որոնց Գնահատման համար հաշվի է առնվում ստուգման համակարգի ինտեգրման ու արդյունավետության պահպանման անհրաժեշտությունը՝ միևնույն ժամանակ խուսափելով արդյունաբերության համար ավելորդ բեռ ստեղծելուց: Զեկույցին կից, անհրաժեշտության դեպքում, Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ ներկայացվում են առաջարկներ ստուգման այլ մեթոդների օգտագործման վերաբերյալ:

3. Անդամ պետությունները ձեռնարկում են միջոցներ՝ ապահովելու համար, որ տնտեսվարող սուբյեկտները ներկայացնում են վստահելի տեղեկություններ և անդամ պետություններին, վերջիններիս պահանջի դեպքում, տրամադրում են այն տվյալները, որոնք օգտագործվել են այդ տեղեկությունները մշակելու համար: Անդամ պետությունները պետք է տնտեսվարող սուբյեկտներից պահանջեն մշակել ներկայացված տեղեկությունների անկախ աուդիտի համարժեք ստանդարտ, և տրամադրել տվյալներ դրա իրականացման մասին: Աուդիտի միջոցով պետք է հաստատվի, որ տնտեսվարող սուբյեկտների կողմից օգտագործվող համակարգերը ճշգրիտ են, վստահելի ու պաշտպանված են կեղծիքից: Դրա

միջոցով գնահատվում է նմուշավորման հաճախականությունն ու մեթոդաբանությունը և տվյալների հուսալիությունը:

Առաջին ենթապարբերությամբ նշված տեղեկությունները ներառում են, մասնավորապես, տեղեկություններ 17(2)– (5) հոդվածով սահմանված կայունության չափորոշիչների հետ համապատասխանության մասին, համապատասխան տեղեկություններ հողի, ջրերի ու օդի պաշտպանության, դեգրադացված հողի վերականգնման ու ջրասակավ տարածքներում ջրերի արդյունավետ օգտագործման համար ձեռնարկված միջոցների մասին, ինչպես նաև անհրաժեշտ ու համապատասխան տեղեկություններ այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվել են 17(7) հոդվածի երկրորդ ենթապարբերությամբ նշված խնդիրների ուղղությամբ:

Հանձնաժողովը, 25(3) հոդվածով նշված խորհրդատվական ընթացակարգի համաձայն, սահմանում է առաջին երկու պարբերություններով նշված անհրաժեշտ ու համապատասխան տեղեկությունների ցանկը: Այն մասնավորապես ապահովում է, որ այդ տեղեկությունների տրամադրումը ավելորդ վարչական պատասխանատվություն չներկայացնի օպերատորների կամ փոքր ֆերմաների սեփականատերերի, արտադրական կազմակերպությունների և մասնավորապես կոոպերատիվների համար:

Սույն պարբերությամբ սահմանված պարտավորությունները պետք է կիրառվեն անկախ այն հանգամանքից՝ արդյոք այդ բիովառելիքներն ու բիոհեղուկներն արտադրվել են Համայնքի տարածքում, թե ներմուծվել:

Անդամ պետություններն ընդհանրացված ձևով Հանձնաժողով են ներկայացնում սույն պարբերության առաջին ենթապարբերությամբ նշված տեղեկությունները: Հանձնաժողովը այդ տեղեկությունները ամփոփ ձևով հրապարակում է 24-րդ հոդվածով նշված թափանցիկության հարթակում՝ պահպանելով կոմերցիոն տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիությունը:

4. Համայնքի պետք է փորձի երրորդ երկրների հետ կնքել երկկողմ կամ բազմակողմ պայմանագրեր, որոնք կպարունակեն դրույթներ սույն Հրահանգի կայունության չափորոշիչներին համապատասխանող կայունության չափորոշիչների վերաբերյալ: Եթե Համայնքը կնքել է պայմանագրեր, որոնք պարունակում են դրույթներ 17(2)–(5) հոդվածով սահմանված՝ կայունության չափորոշիչներով կարգավորվող հարցերի վերաբերյալ, Հանձնաժողովը կարող է որոշել, որ այդ պայմանագրերը վկայում են, որ այդ երկրներում մշակված հումքից արտադրված բիովառելիքներն ու բիոհեղուկները բավարարում են

համապատասխան չափորոշիչները: Այդ պայմանագրերի կնքման ժամանակ պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն 17(7) հոդվածի երկրորդ ենթապարբերությամբ նշված հարցերն ու այն միջոցները, որոնք ձեռնարկվում են արտակարգ իրավիճակներում էկոհամակարգի հիմնական ծառայությունները (ինչպիսիք են, օրինակ, ջրաբաժան գծի պահպանումը և էրոզիայի վերահսկումը) տրամադրող տարածքների պահպանման, հողի, ջրերի ու օդի պաշտպանության, հողօգտագործման ոչ անմիջական փոփոխությունների, դեգրադացված հողի վերականգնման, ջրասակավ տարածքներում ջրերի արդյունավետ օգտագործման համար:

Հանձնաժողովը կարող է որոշել, որ կամավոր ազգային կամ միջազգային սխեմաները, որոնցով սահմանվում են կենսազանգվածի արտադրության չափանիշները, պարունակեն տվյալներ՝ 17(2) հոդվածի նպատակով կամ հավաստեն, որ բիովառելիքի խմբաքանակները համապատասխանում են 17(3) – (5) հոդվածով սահմանված կայունության չափորոշիչներին: Հանձնաժողովը կարող է որոշել, որ այդ սխեմաները պարունակում են ճշգրիտ տվյալներ 17(7) հոդվածի երկրորդ ենթապարբերությամբ նշված հարցերի ու այն միջոցների վերաբերյալ, որոնք ձեռնարկվում են արտակարգ իրավիճակներում էկոհամակարգի հիմնական ծառայությունները (ինչպիսիք են, օրինակ, ջրաբաժան գծի պահպանումը և էրոզիայի վերահսկումը) տրամադրող տարածքների պահպանման, հողի, ջրերի ու օդի պաշտպանության, դեգրադացված հողի վերականգնման, ջրասակավ տարածքներում ջրերի արդյունավետ օգտագործման համար: Հանձնաժողովը նաև կարող է սահմանել տարածքներ միջկառավարական կազմակերպությունների և Բնության պահպանման միջազգային միավորման կողմից կազմած ցանկերում ընդգրկված հազվագյուտ կամ վտանգված էկոհամակարգերի կամ տեսակների պաշտպանության համար՝ 17(3)(բ)(ii) հոդվածի նպատակներով:

Հանձնաժողովը կարող է որոշել, որ ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման կամավոր ազգային կամ միջազգային սխեմաները ներառում են տվյալներ՝ 17(2) հոդվածի նպատակներով:

Հանձնաժողովը կարող է որոշել, որ այն հողային տարածքները, որոնք ներառված են վերականգնման ազգային կամ տարածաշրջանային ծրագրում, որն ուղղված է չափազանց դեգրադացված կամ աղտոտված հողերի բարելավմանը, բավարարում են V հավելվածի Գ մասի 9-րդ կետով նշված չափորոշիչները:

5. Հանձնաժողովն ընդունում է որոշումներ՝ 4-րդ պարբերության համաձայն, եթե տվյալ պայմանագիրը կամ սխեման համապատասխանում է վստահելիության, թափանցիկության կամ անկախ աուդիտի համարժեք չափանիշներին: Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման ցուցանիշի հաշվարկման սխեմաների դեպքում նման սխեմաները պետք է նաև համապատասխանեն V հավելվածով սահմանված մեթոդաբանական պահանջներին: Հարուստ կենսաբազմազանությամբ տարածքների ցուցակը, ինչպես նշված է 17(3)(բ)(ii) հոդվածում, պետք է բավարարի անաչառության չափանիշները և համապատասխանի միջազգային մակարդակով ճանաչված չափանիշներին, ինչպես նաև նախատեսի բողոքարկման համապատասխան ընթացակարգեր:

6. 4-րդ պարբերությամբ սահմանված որոշումները պետք է ընդունվեն 25(3) հոդվածում նշված խորհրդատվական ընթացակարգի համաձայն: Այդ որոշումները պետք է ուժի մեջ լինեն ոչ ավելի, քան հինգ տարի:

7. Եթե տնտեսվարող սուբյեկտը տրամադրում է 4-րդ պարբերությամբ սահմանված որոշման առարկա հանդիսացող պայմանագրի կամ սխեմայի համաձայն ձեռք բերված ապացույց կամ տվյալներ՝ այդ որոշմամբ սահմանված չափով, անդամ պետությունը չպետք է պահանջի, որ մատակարարողը տրամադրի դրանցից բացի այլ վկայություններ 17(2) –(5) հոդվածով սահմանված կայունության չափորոշիչների հետ համապատասխանության վերաբերյալ կամ տեղեկություններ սույն հոդվածի 3-րդ պարբերության երկրորդ ենթապարբերությամբ նշված միջոցների մասին:

8. Անդամ պետության պահանջի դեպքում կամ իր սեփական նախաձեռնությամբ Հանձնաժողովն ուսումնասիրում է 17-րդ հոդվածի կիրառումը՝ կապված բիոլառելիքների կամ բիոհեղուկների աղբյուրի հետ, և պահանջին հաջորդող վեց մասիների ընթացքում ու 25(3) հոդվածով նշված խորհրդատվական ընթացակարգի համաձայն որոշում է կայացնում՝ արդյոք տվյալ անդամ պետությունը կարող է այդ աղբյուրներից արտադրված բիոլառելիքներն ու բիոհեղուկները դիտարկել՝ 17(1) հոդվածի (ա), (բ) ու (գ) կետերի նպատակներով:

9. Մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը Հանձնաժողովը զեկույց է ներկայացնում Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ հետևյալի մասին՝

ա) կայունության չափորոշիչների մասին տեղեկություններ տրամադրելու համար օգտագործվող համակարգի արդյունավետության.

բ) արդյոք հնարավոր և նպատակահարմար է օդի, հողի կամ ջրերի պաշտպանությանը վերաբերող պարտադիր պահանջների ներմուծումը՝ հաշվի առնելով գիտական ամենաթարմ տվյալները և Համայնքի միջազգային պարտավորությունները:

Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, առաջարկում է ուղղիչ միջոցներ:

Հոդված 19

Բիովառելիքների և բիոհեղուկների ջերմոցային ազդեցության հաշվարկումը

1. 17(2) հոդվածի նպատակներով բիովառելիքների ու բիոհեղուկների օգտագործման հաշվին ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման ցուցանիշների հաշվարկումն իրականացվում է հետևյալ կերպ՝

ա) եթե արտադրական ցիկլի համար ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման ցուցանիշի նոմինալ արժեքը սահմանված է V հավելվածի Ա կամ Բ մասով, և եթե այդ բիովառելիքների կամ բիոհեղուկների համար V հավելվածի Գ մասի 7-րդ կետի համաձայն հաշվարկված ԱՀ արժեքը զրո է կամ փոքր է զրոյից, օգտագործելով այդ նոմինալ արժեքը.

բ) օգտագործելով փաստացի արժեք, որը հաշվարկված է V հավելվածի Գ մասով սահմանված մեթոդաբանության համաձայն.

գ) օգտագործելով որևէ արժեք, որը հաշվարկված է որպես V հավելվածի Գ մասի 1-ին կետով նշված բանաձևի գործակիցների գումար, եթե V հավելվածի Դ կամ Ե մասի նոմինալ արժեքները կարող են օգտագործվել որևէ գործակիցների համար, և փաստացի արժեքներ, որոնք հաշվարկվել են V հավելվածի Գ մասով սահմանված մեթոդաբանության համաձայն, բոլոր գործակիցների համար:

2. Մինչև 2010 թվականի մարտի 31-ը անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում հաշվետվություն՝ ներառելով իրենց պետության սահմաններում գտնվող տարածքների ցանկը, որոնք համարվում են 2-րդ մակարդակի տարածքներ ըստ Տարածքային միավորների վիճակագրական անվանացանկի կամ ՏՄՎԱ-ի այլ մակարդակի տարածքներ՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի մայիսի 26-ի «Տարածքային միավորների վիճակագրական ընդհանուր դասակարգման» մասին թիվ 1059/2003 Կանոնակարգի (ԵՀ) համաձայն, եթե գյուղատնտեսական հումքի աճեցման հետևանքով կատարվող ջերմոցային գազերի արտանետումները կարող են լինել սույն

Հրահանգի V հավելվածի Դ մասի «Մշակման համար առանձնացված նոմինալ արժեքներ» գլխում նշված արտանետումներից պակաս կամ դրանց հավասար արտանետումներ, և հաշվետվությանը կցելով այդ ցանկը սահմանելու համար օգտագործված մեթոդն ու տվյալները: Այդ մեթոդի համար պետք է հաշվի առնել հողի առանձնահատկությունները, կլիման և հումքը, որն ակնկալվում է ստանալ:

3. V-րդ հավելվածի Ա մասով սահմանված նոմինալ արժեքները բիոլառելիքների համար և V-րդ հավելվածի Դ մասով մշակման համար սահմանված առանձնացված նոմինալ արժեքները բիոլառելիքների և բիոհեղուկների համար, կարող են օգտագործվել, եթե դրանց հումքը՝

ա) աճեցվում է Համայնքի տարածքից դուրս.

բ) աճեցվում է այն տարածքներում, որոնք ընդգրկված են 2-րդ պարբերությամբ սահմանված ցանկերում.

գ) թափոն կամ մնացորդներ են, բացառությամբ գյուղատնտեսական, ջրակուլտուրային կամ ձկնարդյունաբերության մնացորդների:

Այն բիոլառելիքների և բիոհեղուկների համար, որոնք չեն ընդգրկվում (ա), (բ) կամ (գ) կետերում, օգտագործվում են աճեցման համար սահմանված փաստացի արժեքները:

4. Մինչև 2010 թվականի մարտի 31-ը Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ հաշվետվություն է ներկայացնում երրորդ երկների սահմաններում գտնվող այն տարածքների ցանկը սահմանելու հնարավորության մասին, որտեղ գյուղատնտեսական հումքի աճեցման հետևանքով կատարվող ջերմոցային գազերի արտանետումները կարող են լինել V հավելվածի Դ մասի «Մշակում» գլխով ներկայացված արտանետումներից պակաս կամ դրանց հավասար, և հաշվետվությանը, անհրաժեշտության դեպքում, կցվում է նման ցանկեր և այդ ցանկերը սահմանելու համար օգտագործված մեթոդն ու տվյալները: Անհրաժեշտության դեպքում՝ այս հաշվետվությանը կից ներկայացվում են համապատասխան առաջարկներ:

5. Հանձնաժողովը մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ դրանից հետո՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, հաշվետվություն է ներկայացնում V հավելվածի Բ ու Ե մասերի հաշվարկված բնորոշ և նոմինալ արժեքների մասին՝ մասնավորապես հաշվի առնելով տրանսպորտային միջոցներից և վերամշակման արդյունքում կատարվող արտանետումները, և կարող է, անհրաժեշտության դեպքում, որոշել փոփոխել արժեքները:

Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ ակտերը պետք է ընդունվեն 25(4) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

6. Հանձնաժողովը մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ հաշվետվություն է ներկայացնում՝ վերանայելով հողօգտագործման ոչ անմիջական փոփոխությունների ազդեցությունը ջերմոցային գազերի արտանետումների վրա և առաջարկելով ուղիներ այդ ազդեցությունը նվազեցնելու համար: Անհրաժեշտության դեպքում՝ հաշվետվությանը կից, հիմնվելով ամենաթարմ գիտական տվյալների վրա, ներկայացվում է առաջարկ, որը ներառում է հստակ մեթոդաբանություն հողօգտագործման ոչ անմիջական փոփոխությունների հետևանքով ածխածնի պաշարների փոփոխություններով առաջ բերված արտանետումների համար՝ ապահովելով համապատասխանությունը սույն Հրահանգին և մասնավորապես 17(2) հոդվածին:

Նման առաջարկում ընդգրկվում են անհրաժեշտ երաշխիքներ՝ մինչև այդ մեթոդաբանության կիրառումը կատարված ներդրումների համար հստակություն ապահովելու նպատակով: Ինչ վերաբերում է մինչև 2013 թվականի ավարտը բիոլառելիքներ արտադրող կայաններին, մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը առաջին ենթապարբերությամբ նշված միջոցների կիրառումը չպետք է ենթադրի, որ այդ կայաններում արտադրված բիոլառելիքները չեն համապատասխանում սույն Հրահանգով սահմանված կայունության չափորոշիչներին, եթե այլապես կհամապատասխանեն՝ պայմանով, որ այդ բիոլառելիքներն ապահովում են ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման 45% ցուցանիշ: Սա պետք է կիրառվի բիոլառելիքների կայանների հզորության նկատմամբ 2012 թվականի ավարտին:

Եվրոպական պառլամենտը և Խորհուրդը պետք է փորձեն մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը որոշում կայացնել Հանձնաժողովի կողմից ներկայացված ցանկացած նման առաջարկի մասին:

7. V հավելվածը կարող է համապատասխանեցվել տեխնիկական և գիտական առաջընթացին, այդ թվում՝ բիոլառելիքների արտադրության ուղղությունների համար միևնույն կամ այլ հումքի համար արժեքների մեծացման և Գ մասով սահմանված մեթոդաբանությունը փոփոխելու միջոցով: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 23(3)

հողվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հաշվի առնելով V հավելվածով սահմանված նոմինալ արժեքները և մեթոդաբանությունը, հատուկ ուշադրություն պետք է դարձվի՝

- թափոնների ու մնացորդների մասին հաշվետվություններ ներկայացնելու մեթոդին.
- ուղեկցող ապրանքների մասին հաշվետվություններ ներկայացնելու մեթոդին.
- կոգեներացիայի մասին հաշվետվություն ներկայացնելու մեթոդին և
- գյուղատնտեսական արտադրանքի մնացորդներին որպես ուղեկցող ապրանքներ տրված կարգավիճակը:

Բուսական կամ կենդանական յուղի թափոններից արտադրված բիոդիզելային վառելիքների նոմինալ արժեքները պետք է վերանայվեն հնարավորինս շուտ:

V հավելվածի նոմինալ արժեքների ցանկի ցանկացած փոփոխություն կամ լրացում պետք է համապատասխանի հետևյալին՝

ա) եթե գործոնը քիչ է նպաստում արտանետումների ընդհանուր նվազեցմանը, կամ եթե փոփոխությունը սահմանափակ է, կամ եթե փաստացի արժեքները սահմանելը ծախսատար է կամ դժվար, նոմինալ արժեքները պետք է բնորոշ լինեն արտադրական բնականոն պրոցեսներին.

բ) մնացած բոլոր դեպքերում փաստացի արժեքները արտադրական բնականոն պրոցեսների համեմատ պետք է լինեն փոքր:

8. Պետք է նախատեսվեն մանրամասն սահմանումներ, այդ թվում՝ V հավելվածի Գ մասի 9-րդ կետով սահմանված տեսակների համար պահանջվող տեխնիկական մասնագրեր: Լրացումների միջոցով սույն հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 25(4) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 20

Կիրարկող միջոցները

17(3) հոդվածի երկրորդ ենթապարբերությամբ, 18(3) հոդվածի երրորդ պարբերությամբ, 18(6) հոդվածով, 18(8) հոդվածով, 19(5) հոդվածով, 19(7) հոդվածի առաջին ենթապարբերությամբ և 19(8) հոդվածով նշված կիրարկող միջոցների համար պետք է ամբողջովին հաշվի առնվեն 98/70/ԵՀ հրահանգի 7(ա) հոդվածի նպատակները:

Հոդված 21

Տրանսպորտում վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիային վերաբերող հատուկ դրույթներ

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հանրությանը տրամադրվեն տեղեկություններ տրանսպորտի համար էներգիայի վերականգնվող տարբեր աղբյուրների մատչելիության և բնապահպանական օգուտների մասին: Եթե նավթի հետ խառնած բիովառելիքների տոկոսայնությունը գերազանցում է 10%-ը ըստ ծավալի, անդամ պետությունները պետք է պահանջեն, որ առևտրի կետերում սա նշվի:
2. Օպերատորների համար սահմանված՝ վերականգնվող էներգիայի մասով ազգային պարտավորություններին և 3(4) հոդվածով նշված տրանսպորտի բոլոր ձևերում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման սահմանաչափերին համապատասխանությունը ցույց տալու համար թափոններից, մնացորդներից, ոչ մնացորդային ցեյուլոզային նյութերից և լիգնոցելյուլոզային նյութերից արտադրված բիովառելիքների օգուտը պետք է համարվի երկու անգամ ավելի, քան մնացած բիովառելիքների օգուտը:

Հոդված 22

Անդամ պետությունների կողմից ներկայացվող զեկույցները

1. Անդամ պետությունները պետք է մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31-ը և այնուհետ՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, Հանձնաժողով ներկայացնեն զեկույց վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիան խթանելու ու օգտագործելու մասին:

Վեցերորդ հաշվետվությունը, որը պետք է ներկայացվի մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը, պետք է լինի պահանջվող վերջին հաշվետվությունը:

Զեկույցում մասնավորապես նշվում է հետևյալը՝

ա) նախորդ երկու օրացուցային տարիների ընթացքում վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիայի մասնաբաժինն ըստ ոլորտների (էլեկտրաէներգիա, ջեռուցում ու հովացում, տրանսպորտ) և ընդհանուր մասնաբաժինները, ինչպես նաև ազգային մակարդակով ձեռնարկված կամ նախատեսված միջոցները վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիան խթանելու ուղղությամբ՝ հաշվի առնելով I հավելվածի Բ մասի ինդիկատիվ հետազիծը.

բ) աջակցության սխեմաների ներմուծումն ու աշխատանքը, ինչպես նաև վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիան խթանելու այլ միջոցները և անդամ պետությունների վերականգնվող էներգիայի վերաբերյալ գործողությունների ազգային պլանով սահմանված միջոցների ցանկացած փոփոխություն և տեղեկություններ այն մասին, թե ինչպես է աջակցության սխեմաներում ընդգրկված էներգիան բաշխվում վերջնական սպառողին՝ 2003/54/ԵՀ 3(6) հոդվածի նպատակներով.

գ) համապատասխան դեպքում՝ ինչպես է անդամ պետությունը կազմում իր աջակցության սխեմաները՝ հաշվի առնելու համար վերականգնվող էներգիայի օգտագործման տարբեր ձևերը, որոնք առավել արդյունավետ են այլ ձևերի հետ համեմատ, բայց որոնք կարող են ավելի ծախսատար լինել, այդ թվում՝ թափոններից, մնացորդներից, ոչ սննդային ցեղուլոզային նյութերից և լիգնոցելյուլոզային նյութերից արտադրված բիովառելիքները.

դ) էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի և այդ աղբյուրների միջոցով իրականացվող ջեռուցման ու հովացման ծագման հավաստագրերի համակարգի գործունեությունը և համակարգի վստահելիության ու անաչառության ուղղության ձեռնարկվող միջոցները.

ե) վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիայի զարգացման համար կարգավորիչ և ոչ կարգավորիչ խոչընդոտները վերացնելու ուղղությամբ վարչական ընթացակարգերի գնահատման և բարելավման առաջընթացը.

զ) էներգիայի վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիա փոխադրման ու բաշխման ապահովման և 16(3) հոդվածով նշված ծախսերը կրելու և բաշխելու շրջանակի կամ կանոնների բարելավման ուղղությամբ ձեռնարկվող միջոցները.

է) էներգետիկ նպատակներով կենսազանգվածի ռեսուրսների օգտագործման մատչելիության և օգտագործման զարգացումները.

ը) անդամ պետություններում ապրանքների գների և հողօգտագործման փոփոխությունները՝ կապված կենսազանգվածի և վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի այլ ձևերի ավելացված օգտագործման հետ.

թ) թափոններից, մնացորդներից, ոչ սննդային ցեյլուլոզային նյութերից և լիգնոցեյլուլոզային նյութերից պատրաստված բիովառելիքների զարգացումն ու մասնաբաժինը.

ժ) անդամ պետության տարածքում բիովառելիքների և բիոհեղուկների արտադրության հաշվարկված ազդեցությունը կենսաբազմազանության, ջրային ռեսուրսների, ջրի որակի և հողի որակի վրա.

ժա) ջերմոցային գազերի արտանետումների ընդհանուր նվազեցման ցուցանիշը վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիայի օգտագործման շնորհիվ.

ժբ) մինչև 2020 թվականը ինդիկատիվ հետագծի հետ համեմատ վերականգնվող աղբյուրների միջոցով արտադրված հավելյալ էներգիան, որը կարող է փոխանցվել մյուս անդամ պետություններին, ինչպես նաև համատեղ նախագծերի գնահատված հնարավորությունները.

ժգ) վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիայի հաշվարկված պահանջարկը, որը պետք է բավարարվի տեղական արտադրությունից բացի այլ միջոցներով մինչև 2020 թվականը և

ժդ) տեղեկություններ այն մասին, թե ինչպես է գնահատվել էներգիայի արտադրության համար օգտագործվող թափոնների ծավալում կենսաբանորեն քայքայվող թափոնների մասնաբաժինը, և թե ինչ քայլեր են ձեռնարկվել այդ հաշվարկները բարելավելու և ստուգելու ուղղությամբ:

2. Բիովառելիքների օգտագործման միջոցով ջերմոցային գազերի արտանետումների ընդհանուր նվազեցումը գնահատելիս անդամ պետությունը կարող է 1-ին պարբերությամբ սահմանված հաշվետվությունների նպատակով օգտագործել V հավելվածի Ա և Բ մասերով սահմանված բնորոշ արժեքները:

3. Իր առաջին զեկույցում անդամ պետությունը նշում է, թե արդյոք այն մտադրվում է՝

ա) ստեղծել վերականգնվող էներգիայի կայանների թույլտվության տրամադրման, լիազորման, հավաստագրման և լիցենզավորման դիմումների վերանայման և դիմում ներկայացնողներին օժանդակության տրամադրման համար պատասխանատու ընդհանուր վարչական մարմին.

բ) նախատեսել վերականգնվող էներգիայի կայանների պլանավորման ու գործունեության թույլտվության դիմումների ավտոմատ հաստատում, եթե լիազորող մարմինը սահմանված ժամկետների սահմանում պատասխան չի տրամադրում կամ

գ) նշվում են այն աշխարհագրական տարածքները, որոնք հարմար են հողօգտագործման պլանավորման և կենտրոնացված ջեռուցման ու հովացման իրականացման ժամանակ վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիայի օգտագործման համար :

4. Յուրաքանչյուր զեկույցում անդամ պետությունը կարող է ուղղել նախկին զեկույցներով ներկայացված տվյալները:

Հոդված 23

Հանձնաժողովի կողմից իրականացվող դիտանցումն ու ներկայացվող հաշվետվությունները

1. Հանձնաժողովը դիտանցում է Համայնքի տարածքում սպառվող բիովառելիքների ու բիոհեղուկների ծագումը և դրանց արտադրության ազդեցությունները, այդ թվում՝ տեղահանման ազդեցությունները հողօգտագործման վրա Համայնքում և մատակարարող հիմնական երրորդ երկրներում: Նման դիտանցումը պետք է հիմնված լինի անդամ պետությունների ու համապատասխան երրորդ երկրների և միջկառավարական կազմակերպությունների կողմից 22(1) հոդվածի համաձայն ներկայացված զեկույցների, գիտական ուսումնասիրությունների և ցանկացած այլ համապատասխան տեղեկության վրա: Հանձնաժողովը նաև պետք է դիտանցի ապրանքների գների փոփոխությունները կապված էներգետիկ նպատակով կենսազանգվածի օգտագործման արդյունքում և սննդի անվտանգության վրա դրական ու բացասական ազդեցությունները: Հանձնաժողովը դիտանցում է բոլոր այն կայանները, որոնց նկատմամբ կիրառվում է 19(6) հոդվածը:

2. Հանձնաժողովն իրականացնում է երկխոսություն և տեղեկությունների փոխանակում երրորդ երկրների ու բիովառելիքներ արտադրողների, սպառողների իրավունքների պաշտպանության կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության միջև

բիովառելիքների ու բիոհեղուկների մասով սույն Հրահանգով սահմանված միջոցների իրականացման մասին: Հանձնաժողովը այդ շրջանակում առանձնահատուկ ուշադրություն է դարձնում սննդամթերքի գների վրա բիովառելիքների արտադրության ցանկացած ազդեցության վրա:

3. Անդամ պետությունների կողմից 22(1) հոդվածի համաձայն ներկայացված հաշվետվությունների և սույն հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված դիտանցման ու վերլուծության հիման վրա Հանձնաժողովը յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ զեկույց է ներկայացնում Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ: Առաջին զեկույցը պետք է ներկայացվի 2012 թվականին:

4. Բիովառելիքների օգտագործման միջոցով ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման մասին զեկույցելիս Հանձնաժողովը պետք է օգտագործի անդամ պետությունների կողմից ներկայացված արժեքները և պետք է գնահատի՝ արդյոք այդ արժեքը կփոխվեր, եթե փոխարինման մոտեցման համար դիտարկվեին ուղեկցող ապրանքները, և ինչքանով կփոխվեր:

5. Իր զեկույցներում Հանձնաժողովը, մասնավորապես, ուսումնասիրում է՝

ա) տարբեր բիովառելիքների հարաբերական բնապահպանական օգուտներն ու ծախսերը, դրանց վրա Համայնքի ներկրման քաղաքականության ազդեցությունները, ներկրման անվտանգությունը ու տեղական արտադրանքի և ներկրումների նկատմամբ հավասարակշռված մոտեցում ապահովելու ուղիները.

բ) Համայնքում և երրորդ երկրներում կայունության վրա բիովառելիքների ավելացած պահանջարկի ազդեցությունը՝ հաշվի առնելով տնտեսական և բնապահպանական ազդեցությունները՝ ներառյալ ազդեցությունները կենսաբազմազանության վրա.

գ) գիտականորեն օբյեկտիվ ճանապարհով հարուստ կենսաբազմազանություն ունեցող աշխարհագրական այն տարածքների սահմանները որոշելու շրջանակը, որոնք նշված չեն 17(3) հոդվածում.

դ) կենսազանգվածի ավելացված պահանջարկի ազդեցությունն այն ոլորտների վրա, որտեղ օգտագործվում է կենսազանգված.

ե) թափոններից, մնացորդներից, ոչ սննդային ցելյուլոզային նյութերից և լիգնոցելյուլոզային նյութերից պատրաստված բիովառելիքների մատչելիությունը.

զ) արտադրական բոլոր ցիկլերի առումով հողօգտագործման ոչ անմիջական փոփոխությունները:

Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, առաջարկում է ուղղիչ միջոցներ:

6. Անդամ պետությունների կողմից 22(3) հոդվածի համաձայն ներկայացված զեկույցների հիման վրա Հանձնաժողովը վերլուծում է թույլտվության, հավաստագրման և լիցենզավորման մասին դիմումների վերանայման և դիմում ներկայացնողներին օժանդակություն ցուցաբերելու համար պատասխանատու ընդհանուր վարչական մարմին ստեղծելու ուղղությամբ անդամ պետությունների կողմից ձեռնարկվող միջոցների արդյունավետությունը:

7. 3(1) հոդվածում նշված 20% սահմանաչափն ապահովելու նպատակով ֆինանսավորումն ու համակարգումը բարելավելու համար Հանձնաժողովը պետք է մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը ներկայացնի վերլուծություն և վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիայի մասին գործողությունների ծրագիր՝ մասնավորապես կենտրոնանալով՝

ա) կառուցվածքային ֆինանսավորման և շրջանակային ծրագրերի առավել արդյունավետ օգտագործման վրա.

բ) Եվրոպական ներդրումային բանկից (ԵՆԲ) և այլ պետական ֆինանսական հաստատություններից ստացված դրամական միջոցների առավել արդյունավետ և լայնածավալ օգտագործման վրա.

գ) ռիսկային կապիտալի մատչելիության բարձրացման վրա՝ մասնավորապես վերլուծելով երրորդ երկրների համար սահմանված Գլոբալ էներգաարդյունավետություն և Վերականգնվող էներգիայի հիմնադրամ նախաձեռնությունների նման Համայնքում վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիայի ոլորտում ներդրումների համար ռիսկի բաշխման կառույցի հնարավորությունը.

դ) Համայնքի ու ազգային ֆինանսավորման և աջակցության այլ ձևերի ավելի արդյունավետ համակարգման և

ե) վերականգնվող էներգիայի նախաձեռնությունների օժանդակության առավել արդյունավետ համակարգման վրա, որոնց հաջողությունը կախված է մի քանի անդամ պետություններում ձեռնարկվող քայլերից:

8. Մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը Հանձնաժողովը պետք է ներկայացնի զեկույց՝ կենտրոնանալով մասնավորապես՝

ա) ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման այն նվազագույն ցուցանիշների վրա, որոնք պետք է կիրառվեն 17(2) հոդվածի երկրորդ պարբերությամբ նշված ժամկետներից սկսած՝ ազդեցությունների գնահատման հիման վրա՝ հաշվի առնելով տեխնոլոգիական զարգացումները, հասանելի տեխնոլոգիաները և առաջին ու երկրորդ սերնդի բիովառելիքների հասանելիությունը, որոնք կարող են ապահովել ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման բարձր մակարդակ.

բ) կապված 3(4) հոդվածով նշված սահմանաչափին՝ հետևյալի վերանայումը՝

(i) այդ սահմանաչափն ապահովելու նպատակով ձեռնարկվելիք միջոցների ծախսարդյունավետության.

(ii) Համայնքում ու երրորդ երկրներում բիովառելիքների արտադրության ապահովման պայմաններում և հաշվի առնելով տնտեսական, բնապահպանական և սոցիալական ազդեցությունները՝ ներառյալ ոչ անմիջական ազդեցությունները կենսաբազմազանության վրա, ինչպես նաև երկրորդ սերնդի բիովառելիքների կոմերցիոն հասանելիությունը՝ սահմանաչափի ապահովման իրագործելիության գնահատման.

(iii) սահմանաչափի ապահովման ազդեցությունը մատչելի գներով սննդամթերքի հասանելիության վրա.

(iv) էլեկտրական, հիդրոէլեկտրային և ջրածնային մեքենաների կոմերցիոն հասանելիությունը, ինչպես նաև վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժինը, որն օգտագործվել է տրանսպորտի սեկտորում.

(v) շուկային բնորոշ պայմանների գնահատման՝ հաշվի առնելով մասնավորապես այն շուկաները, որտեղ տրանսպորտային վառելիքների կազմում են ընդհանուր էներգասպառման կեսը, և այն շուկաները, որոնք ամբողջովին կախված են ներկրված բիովառելիքներից.

գ) սույն Հրահանգի իրականացման գնահատման վերանայումը՝ մասնավորապես հաշվի առնելով համագործակցության մեխանիզմները՝ ապահովելու համար, որ անդամ պետությունների կողմից 3(3) հոդվածով նշված աջակցության ազգային սխեմաներն օգտագործելու հնարավորությանը զուգահեռ այդ մեխանիզմներն անդամ պետությունների համար հնարավոր են դարձնում ապահովել I հավելվածով սահմանված ազգային

սահմանաչափերը ծախսարդյունավետ եղանակով, տեխնոլոգիական զարգացումների գնահատման վերանայումը, ինչպես նաև Համայնքի մակարդակով վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի 20% սահմանաչափի ապահովման համար անհրաժեշտ եզրակացությունները:

Այդ զեկույցի հիման վրա Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, ներկայացնում է առաջարկներ Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ՝ կենտրոնանալով այդ կետերի վրա և մասնավորապես՝

- (ա) կետում նշված տարրի համար՝ ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման՝ այդ կետով նշված նվազագույն ցուցանիշի փոփոխում.

- (գ) կետով նշված տարրի համար՝ սույն Հրահանգով նախատեսված համագործակցության միջոցների համապատասխան փոփոխությունները՝ 20% սահմանաչափն ապահովելու նպատակով դրանց արդյունավետությունը բարելավելու համար: Նման առաջարկները չպետք է ազդեն ո՛չ 20% սահմանաչափի վրա, և ո՛չ անդամ պետությունների կողմից աջակցության ազգային սխեմաների և համագործակցության վերահսկողության վրա:

9. 2018 թվականին Հանձնաժողովը պետք է ներկայացնի Վերականգնվող էներգիայի վերաբերյալ գործողությունների ծրագիր 2020 թվականից հետո ընկած ժամանակահատվածի համար:

Այդ գործողությունների ծրագրին, անհրաժեշտության դեպքում, կցվում են առաջարկներ ուղղված Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ 2020 թվականից հետո ընկած ժամանակահատվածի համար: Գործողությունների ծրագրի համար հաշվի են առնվում սույն Հրահանգն իրականացնելու փորձը և տեխնոլոգիական զարգացումները վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի ոլորտում :

10. 2021 թվականին Հանձնաժողովը պետք է ներկայացնի սույն Հրահանգի իրականացման մասին զեկույց: Այդ զեկույցում պետք է ներկայացվի հետևյալ տարրերի դերը, որոնք նպաստել են անդամ պետությունների կողմից I հավելվածով սահմանված ազգային սահմանաչափերի ապահովումը ծախսարդյունավետ եղանակով՝

- ա) կանխատեսումների և վերականգնվող էներգիայի վերաբերյալ գործողությունների ազգային ծրագրերի մշակման գործընթացը.

- բ) համագործակցության մեխանիզմների արդյունավետությունը.

գ) վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի ոլորտի տեխնոլոգիական զարգացումները՝ ներառյալ քաղաքացիական ավիացիայում բիոլառելիքների օգտագործման զարգացումը.

դ) աջակցության ազգային սխեմաների արդյունավետությունը և

ե) Հանձնաժողովի՝ 8-րդ և 9-րդ հոդվածով նշված զեկույցների եզրակացությունները:

Հոդված 24

Թափանցիկության հարթակը

1. Հանձնաժողովը պետք է ստեղծի առցանց հանրային թափանցիկության հարթակ: Այդ հարթակը պետք է ծառայի թափանցիկության բարձրացմանը և պետք է հեշտացնի ու խթանի համագործակցությունը անդամ պետությունների միջև՝ մասնավորապես կապված 6-րդ հոդվածով սահմանված վիճակագրական փոխանցումների և 7-րդ ու 9-րդ հոդվածներով նշված համատեղ նախագծերի հետ: Ի հավելումն դրա՝ հարթակը կարող է օգտագործվել հանրությանը տրամադրելու համար այն տեղեկությունները, որոնք Հանձնաժողովը կամ անդամ պետությունը համարում են կարևոր սույն Հրահանգի և դրա նպատակների իրականացման համար:

2. Հանձնաժողովը նշված թափանցիկության հարթակում հրապարակում է հետևյալ տեղեկությունները՝ պահպանելով կոմերցիոն առումով կարևոր տեղեկությունների գաղտնիությունը՝

ա) անդամ պետությունների՝ վերականգնվող էներգիայի վերաբերյալ գործողությունների ազգային ծրագրերը.

բ) անդամ պետությունների՝ 4(3) հոդվածով նշված կանխատեսումների մասին փաստաթղթերը, որոնց հնարավորինս շուտ պետք է կցվի հավելյալ արտադրության և ներկրումների հաշվարկված պահանջարկի Հանձնաժողովի ամփոփագիրը.

գ) վիճակագրական փոխանցման կամ համատեղ նախագծի շուրջ համագործակցելու անդամ պետությունների առաջարկները՝ համապատասխան անդամ պետության պահանջի դեպքում.

դ) 6(2) հոդվածով նշված տեղեկությունների անդամ պետությունների միջև վիճակագրական փոխանցումների մասին.

ե) 7(2) ու (3) հոդվածով և 9(4) ու (5) հոդվածով համատեղ նախագծերի մասին նշված տեղեկությունները.

զ) անդամ պետությունների՝ 22-րդ հոդվածով նշված ազգային զեկույցները.

է) Հանձնաժողովի՝ 23(3) հոդվածով նշված զեկույցները:

Այնուամենայնիվ, տեղեկությունները ներկայացրած անդամ պետության պահանջի դեպքում Հանձնաժողովը չպետք է հրապարակի անդամ պետությունների՝ 4(3) հոդվածով նշված կանխատեսումների մասին փաստաթղթերը կամ անդամ պետությունների՝ (22)(1)(1) և (Ժգ) հոդվածով նշված ազգային զեկույցներում ներառված տեղեկությունները:

Հոդված 25

Կոմիտեները

1. Բացառությամբ 2-րդ պարբերության սահմանված դեպքերի՝ Հանձնաժողովին պետք է աջակցի Վերականգնվող էներգիայի ռեսուրսների հարցերով Կոմիտեն:
2. Բիովառելիքների և բիոհեղուկների կայունությանը վերաբերող հարցերում Հանձնաժողովին պետք է աջակցի Բիովառելիքների ու բիոհեղուկների կայունության հարցերով Կոմիտեն:
3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:
4. Եթե հղում է արվում սույն պարբերությունը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)–(4) հոդվածը և 14-րդ հոդվածը՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 26

Փոփոխությունները և ուժը կորցրած ճանաչելը

1. 2001/77/ԵՀ հրահանգում 2-րդ հոդվածը, 3(2) հոդվածը և 4-8-րդ հոդվածները հանել 2010 թվականի ապրիլի 1-ից:
2. 2003/30/ԵՀ հրահանգում 2-րդ հոդվածը, 3(2), (3) ու (5) հոդվածը և 5-րդ ու 6-րդ հոդվածները հանել 2010 թվականի ապրիլի 1-ից:

3. 2001/77/ԵՀ և 2003/30/ԵՀ հրահանգները ուժը կորցրած են ճանաչվում 2012 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 27

Փոխատեղումը

1. Չհակասելով 4(1), (2) և (3) հոդվածին՝ անդամ պետությունները պետք է գործողության մեջ դնեն սույն Հրահանգի հետ համապատասխանեցման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը մինչև 2010 թվականի դեկտեմբերի 5-ը:

Երբ անդամ պետություններն ընդունում են այս ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ պետք է ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին ներկայացնեն ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 28

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 29

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2009 թվականի ապրիլի 23-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ

Հ.-Գ. Փոթերինգ

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Պ. Նեչաս

1) 2008 թվականի սեպտեմբերի 17-ի եզրակացություն (ՊՏ, C 77, 31.03.2009 թ., էջ 43):

[2] ՊՏ C 325, 19.12.2008թ., էջ 12:

[3] Եվրոպական պառլամենտի 2008 թվականի դեկտեմբերի 17-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել) և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 6-ի որոշում:

[4] ՊՏ L 283, 27.10.2001 թ., էջ 33:

[5] ՊՏ L 123, 17.05.2003 թ., էջ 42:

6] ՊՏ L 176, 15.07.2003 թ., էջ 37:

[7] ՊՏ L 350, 28.12.1998 թ., էջ 58:

[8] ՊՏ C 219 E, 28.08.2008թ., էջ 82:

[9] ՊՏ թիվ L 1, 04.01.2003թ., էջ 65:

10] ՊՏ L 191, 22.07.2005թ., էջ 29:

[11] ՊՏ թիվ L 114, 27.04.2006թ., էջ 64:

[12] ՊՏ L 198, 20.07.06 թ., էջ 18:

[13] ՊՏ թիվ L 204, 21.07.1998թ., էջ 37:

[14] ՊՏ թիվ L 255, 30.09.2005թ., էջ 22:

[15] ՊՏ L 52, 21.02.2004թ., էջ 50

[16] ՊՏ L 41, 14.02.03 թ., էջ 26:

[17] ՊՏ թիվ L 184, 17.07.1999թ., էջ 23:

[18] ՊՏ C 321, 31.12.2003, էջ 1:

[19] ᲒS L 304, 14.11.08 ႃ., ႔፯ 1:

[20] ᲒS L 301, 20.11.07 ႃ., ႔፯ 14:

21] ᲒS L 176, 15.07.2003 ႃ., ႔፯ 57:

[22] ᲒS L 30, 31.01.2009 ႃ., ႔፯ 16:

[23] ᲒS L 154, 21.06.03 ႃ., ႔፯ 1:

2020 թվականին վերջնական համախառն էներգասպառման մեջ վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիայի մասնաբաժնի ազգային սահմանաչափերը [1]՝

Ա. Ազգային ընդհանուր սահմանաչափերը

Վերջնական համախառն էներգասպառման մեջ վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիայի մասնաբաժինը, 2005 թվական (S2005) | Վերջնական համախառն էներգասպառման մեջ վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիայի մասնաբաժնի սահմանաչափերը, 2020 թվական (S2020) |

Բելգիա | 2,2 % | 13 %

Բուլղարիա | 9,4 % | 16 %

Չեխիայի հանրապետություն | 6,1 % | 13 % |

Դանիա | 17,0 % | 30 % |

Գերմանիա | 5,8 % | 18 %

Էստոնիա | 18,0 % | 25 %

Իռլանդիա | 3,1 % | 16 % |

Հունաստան | 6,9 % | 18 %

Իսպանիա | 8,7 % | 20 %

Ֆրանսիա | 10,3 % | 23 %

Իտալիա | 5,2 % | 17 % |

Կիպրոս | 2,9 % | 13 %

Լատվիա | 32,6 % | 40 %

Լիտվա | 15,0 % | 23 % |

Լյուքսեմբուրգ | 0,9 % | 11 %

Հունգարիա | 4,3 % | 13 %

Մալթա | 0,0 % | 10 %

Նիդերլանդներ | 2,4 % | 14 %

Ավստրիա | 23,3 % | 34 %

Լեհաստան | 7,2 % | 15 % |

Պորտուգալիա | 20,5 % | 31 %

Ռումինիա | 17,8 % | 24 %

Սլովենիա | 16,0 % | 25 %

Սլովակիայի հանրապետություն | 6,7 % | 14 %

Ֆինլանդիա % | 38 %

Շվեդիա | 39,8 % | 49 %

Միացյալ Թագավորություն | 1,3 % | 15 %

Բ. Ինդիկատիվ հետազիծ

3.2 հոդվածով նշված ինդիկատիվ հետազիծը պետք է կազմված լինի վերականգնվող աղբյուրներից արտադրվող էներգիայի հետևյալ մասնաբաժիններից՝

$S_{2005} + 0,20 (S_{2020} - S_{2005})$ ՝ որպես 2011-ից 2012 թվականներն ընկած երկամյա ժամանակահատվածի միջին արժեք.

$S_{2005} + 0.30 (S_{2020} - S_{2005})$ ՝ որպես 2013-ից 2014 թվականներն ընկած երկամյա ժամանակահատվածի միջին արժեք.

$S_{2005} + 0.45 (S_{2020} - S_{2005})$ ՝ որպես 2015-ից 2016 թվականներն ընկած երկամյա ժամանակահատվածի միջին արժեք.

$S_{2005} + 0.65 (S_{2020} - S_{2005})$ ՝ որպես 2017-ից 2018 թվականներն ընկած երկամյա ժամանակահատվածի միջին արժեք.

որտեղ՝

S_{2005} = տվյալ անդամ պետության 2005 թվականի մասնաբաժինը, ինչպես նշված է Ա մասի աղյուսակում.

և

S2020 = տվյալ անդամ պետության 2020 թվականի մասնաբաժինը, ինչպես նշված է Ա մասի աղյուսակում.

[1] Առանձնապես ընդգծվում է այն փաստը, որ սույն Հավելվածով նախատեսված ազգային նպատակներն իրագործելու համար շրջակա միջավայրի պահպանման համար նախատեսված պետական աջակցության ուղեցույցի համար պետք է հաշվի առնել վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիան խթանելու համար աջակցության ազգային մեխանիզմների անհրաժեշտությունը:

**Հիդրոէներգիայից և քամու էներգիայից արտադրվող էլեկտրաէներգիայի մասին
հաշվետվություն ներկայացնելու ստանդարտացման կանոնը**

Համապատասխան անդամ պետությունում հիդրոէներգիայից արտադրվող էլեկտրաէներգիայի մասին հաշվետվություն ներկայացնելու նպատակով կիրառվում է հետևյալ կանոնը՝

$$Q = C \times \sum QC / 15$$

որտեղ՝

N՝ բազային տարին.

QN (norm)՝ ստանդարտացված էլեկտրաէներգիա, որը N տարվա ընթացքում արտադրվել է անդամ պետության հիդրոէլեկտրակայաններում. հաշվետվություն ներկայացնելու նպատակներով.

Qi՝ i տարվա ընթացքում անդամ պետության բոլոր հիդրոէլեկտրակայաններում արտադրված էլեկտրաէներգիայի քանակությունը, որը չափվում է ԳՎտ/ժամ-ով, և բացառությամբ ջրակուտակիչ էլեկտրակայաններում այնպիսի արտադրության, որն իրականացվել է նախկինում պոմպով դուրս մղված ջրի հաշվին.

Ci՝ i տարվա ընթացքում անդամ պետության բոլոր հիդրոէլեկտրակայանների տեղակայված ընդհանուր հզորությունը՝ ընդհանուր ջրակուտակումը, որը չափվում է ՄՎտ-ով:

Համապատասխան անդամ պետությունում քամու էներգիայից արտադրվող էլեկտրաէներգիայի մասին հաշվետվություն ներկայացնելու նպատակով կիրառվում է հետևյալ կանոնը՝

$$Q = C + C \times Q \sum 2$$

որտեղ՝

N՝ բազային տարին.

QN (norm)՝ ստանդարտացված էլեկտրաէներգիա, որը N տարվա ընթացքում արտադրվել է անդամ պետության հողմաէներգետիկ կայաններում. հաշվետվություն ներկայացնելու նպատակներով.

Qⁱ՝ i տարվա ընթացքում անդամ պետության բոլոր հողմաէներգետիկ կայաններում արտադրված էլեկտրաէներգիայի քանակությունը, որը չափվում է ԳՎտ/ժամ-ով:

C^j՝ j տարվա վերջում անդամ պետության բոլոր հողմաէներգետիկ կայանների տեղակայված ընդհանուր հզորությունը, որը չափվում է ՄՎտ-ով:

n՝ 4 կամ N տարվան նախորդող տարիների այն թիվը, որոնց համար տվյալ անդամ պետությունն ունի տվյալներ հզորության և արտադրության մասին. այն թիվը, որն այդ երկու թվերի մեջ առավել փոքր է:

Տրանսպորտային վառելիքների էներգատարությունը

Վառելիք | Էներգատարությունն ըստ զանգվածի (ջերմատվության ավելի փոքր արժեք, ՄՋ/կգ) | Էներգատարությունն ըստ ծավալի (ջերմատվության ավելի փոքր արժեք, ՄՋ/լ)

Բիոէթանոլ (կենսազանգվածից ստացված էթանոլ) | 27 | 21 |

Բիո-ԷԵԹ (բիոէթանոլի հիմքի վրա ստացված էթիլ եռաբութիլ եթեր) | 36 (որից 37%-ը վերականգնվող աղբյուրներից) | 27 (որից 37%-ը վերականգնող աղբյուրներից)

Բիոմեթանոլ (կենսազանգվածից ստացված մեթանոլ, որը պետք է օգտագործվի որպես բիովառելիք) 20 | 16 |

Բիո-ՄԵԹ (բիոմեթանոլի հիմքի վրա ստացված մեթիլ եռաբութիլ եթեր) | 35 (որից 22 %-ը վերականգնվող աղբյուրներից) | 26 (որից 22 %-ը վերականգնող աղբյուրներից)

Բիո-ԴՄԵ (կենսազանգվածից ստացված դիմեթիլային եթեր) | 28 | 19

ԲԻՈ- (բիոէթանոլի հիմքի վրա ստացված եռակի ամիլէթիլային եթեր) 38 (որից 29%-ը վերականգնվող աղբյուրներից) 29 (որից 29%-ը վերականգնվող աղբյուրներից)

Բիոբութան (կենսազանգվածից ստացված բութան, որը պետք է օգտագործվի որպես բիովառելիք) | 33 | 27

Բիոդիզել (բուսական կամ կենդանական յուղից ստացված մեթիլային բարդ եթեր, դիզելային վառելիքայուղի որակի, որը պետք է օգտագործվի որպես բիովառելիք) | 37 | 33

Ֆիշեր-Թրոպշ դիզելային վառելիք (կենսազանգվածից ստացված սինթետիկ ածխաջրածին կամ սինթետիկ ածխաջրածինների խառնուրդ)

ջրամշակված բուսական յուղ (ածխաջրածիններով ջերմային ու քիմիական մշակման ենթարկված բուսական յուղ) 44 | 34

Մաքուր բուսական յուղ (նավթի գործարաններում ճնշման, արդյունահանման կամ համանման պրոցեսներով արտադրված անմշակ կամ մշակված, բայց քիմիական մշակման չենթարկված, եթե այն համապատասխանում է տվյալ շարժիչներին և արտանետումների համապատասխան պահանջներին) | 37 | 34 |

Բիոգազ (կենսազանգվածից և/կամ թափոնների կենսաբանորեն քայքայվող զանգվածից արտադրված հեղուկ վառելիք, որը հնարավոր է մաքրել ու հասցնել բնական գազի որակին, և որը պետք է օգտագործվի որպես բիովառելիք կամ գեներատորային գազ) | 50 | —

Բենզին | 43 | 32

Դիզելային վառելիք | 43 | 36 |

Սարքավորումներ տեղադրողների հավաստագրումը

14(3) հոդվածով նշված հավաստագրման սխեմաները կամ որակավորման համարժեք սխեմաները պետք է հիմնված լինեն հետևյալ չափորոշիչների վրա՝

1. Հավաստագրման կամ որակավորման գործընթացը պետք է լինի թափանցիկ և պետք է հստակ սահմանված լինի անդամ պետության կամ նրա նշանակած վարչական մարմնի կողմից:

2. Կենսազանգված, ջերմային պոմպեր, կենսաջերմային և արևային ֆոտոգալվանային ու արևաջերմային սարքավորումներ տեղադրողները պետք է հավաստագրվեն հավատարմագրված վերապատրաստման ծրագրով կամ վերապատրաստումը տրամադրողի կողմից:

3. Ուսուցման ծրագրի կամ ուսուցում անցկացնողի հավատարմագրումն իրականացվում է անդամ պետությունների կամ նրանց նշանակած վարչական մարմինների կողմից: Հավատարմագրող մարմինը պետք է ապահովի, որ ուսուցում անցկացնողի կողմից առաջարկվող ուսուցման ծրագիրը շարունակական է և առաջարկվում է տարածաշրջանային կամ ազգային մակարդակով: Ուսուցում անցկացնողը պետք է ունենա համապատասխան տեխնիկական միջոցներ՝ գործնական ուսուցում անցկացնելու համար, այդ թվում՝ որոշ լաբորատոր սարքավորումներ կամ համապատասխան այլ սարքավորումներ՝ գործնական ուսուցում անցկացնելու համար: Ուսուցում անցկացնողը պետք է հիմնական դասընթացներից բացի առաջարկի նաև վերապատրաստման կարճ դասընթացներ ակտուալ հարցերի, այդ թվում՝ նոր տեխնոլոգիաների վերաբերյալ, սարքավորումների մասին գիտելիքների մշտական ձեռքբերումը հնարավոր դարձնելու նպատակով: Ուսուցում անցկացնողը պետք է լինեն սարքավորումներ կամ համակարգեր արտադրողները, ինստիտուտները կամ միավորումները:

4. Տեղադրողի հավաստագրման կամ որակավորման համար անցկացվող ուսուցումը պետք է ընդգրկի տեսական և գործնական բաժիններ: Ուսուցման ավարտին տեղադրողը պետք է ունենա այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են սարքավորումների ու համակարգերի աշխատանքի ու հուսալիության հաճախորդի կարիքները բավարարելու նպատակով համապատասխան սարքավորումն ու համակարգերը տեղադրելու, որակյալ մասնագետ լինելու և կիրառվող կանոնագրքերին ու ստանդարտներին՝ ներառյալ էներգիային և էկոպիտակավորմանը վերաբերող ստանդարտներին համապատասխանելու համար:

5. Ուսուցման դասընթացն ավարտվում է հավաստագրման կամ որակավորման քննությամբ: Քննությունն ընդգրկում է կենսազանգվածի կաթսաներ կամ վառարաններ, կենսաջերմային սարքավորումներ, արևային ֆոտոգալվանային կամ արևաջերմային սարքավորումներ հաջողությամբ տեղադրելու գործնական գնահատում:

6. 14(3) հոդվածով նշված հավաստագրման սխեմաները կամ որակավորման համարժեք սխեմաները պետք է հիմնված լինեն հետևյալ ուղեցույցների վրա՝

ա) ուսուցման հավատարմագրված ծրագրերը պետք է առաջարկվեն աշխատանքային փորձ ունեցող տեղադրողներին, ովքեր անցել են կամ անցնում են ուսուցման հետևյալ տեսակները՝

(i) կենսազանգվածի կաթսաներ և վառարաններ տեղադրողների դեպքում՝ ջրմուղագործի, փականագործի, ջերմատեխնիկի կամ սանիտարատեխնիկական և ջեռուցման ու հովացման սարքավորումների ինժեներ-տեխնոլոգի ուսուցումը որպես նախապայման.

(ii) ջերմային պոմպեր տեղադրողների դեպքում՝ փականագործի կամ սառնարանների տեղավորման ինժեների ուսուցումը և էլեկտրիկ-փականագործի հիմնական հմտություններ (խողովակների հատում, խողովակաշարերի միացումների զոդում, խողովակաշարերի միացումների սոսնձում, շերտաձողերով պատում, արտահոսքի ստուգում և ջեռուցման ու հովացման համակարգերի տեղադրում) ունենալը որպես նախապայման.

(iii) արևային ֆոտոգալվանային կամ արևային ջերմային սարքավորումների տեղադրողների դեպքում՝ փականագործի կամ էլեկտրիկի ուսուցումը և փականագործի, էլեկտրիկի և տանիքագործի հմտություններ, այդ թվում՝ խողովակաշարերի միացումներ զոդելու, խողովակաշարերի միացումներ սոսնձելու, հաղորդալարեր միացնելու կարողությունը, տանիքապատման հիմնական նյութերին, եռակցման և զոդակցման մեթոդներին ծանոթ լինելը որպես նախապայման.

(iv) մասնագիտական ուսուցման սխեմա՝ սարքավորումներ տեղադրողին (ա), (բ) ու (գ) կետերով նշված հմտությունների երեք տարվա ուսուցմանը համապատասխանող հմտություններ սովորեցնելու համար՝ ներառյալ և՛ տեսական, և՛ գործնական ուսուցում.

բ) կենսազանգվածի վառարաններ և կաթսաններ տեղադրողների ուսուցման տեսական մասը պետք է ներառի կենսազանգվածի շուկայում իրավիճակի ընդհանուր նկարագիրը և ընդգրկի նաև բնապահպանական կողմեր, գիտելիքներ բիոլառելիքների, նյութատեխնիկական ապահովման, կրակի դեմ պաշտպանության, այրման տեխնիկայի,

հրդեհային անվտանգության ապահովման համակարգերի, օպտիմալ հիդրավլիկ լուծումների, կենսազանգվածի կաթսաների և վառարանների նախագծման, տեղադրման և պահպանման համեմատ դրանց արժեքի ու շահութաբերության մասին. Ուսուցման ընթացքում պետք է նաև տրամադրվեն գիտելիքներ տեխնոլոգիաների և բիովառելիքներին վերաբերող ցանկացած եվրոպական ստանդարտի և բիոովառելիքներին վերաբերող ազգային ու Համայնքի իրավունքի մասին.

գ) Ջերմային պոմպ տեղադրողի ուսուցման տեսական մասը պետք է ներառի ջերմային պոմպերի շուկայում իրավիճակի ընդհանուր նկարագիրը և ընդգրկի նաև տեղեկություններ կենսաջերմային ռեսուրսների ու տարբեր տարածաշրջանների, ջերմափոխադրման համար հողերի և քարերի որոշումը, կենսաջերմային ռեսուրսների օգտագործման մասին կանոնակարգեր, շենքերում ջերմային պոմպեր օգտագործելու և ամենահամապատասխան ջերմային պոմպերը որոշելու իրագործելիությունը, և գիտելիքներ դրանց տեխնիկական պահանջների, անվտանգության, օդի ֆիլտրացիայի, ջերմային աղբյուրին միացման և համակարգի նախագծի մասին: Ուսուցման ընթացքում պետք է նաև տրամադրվեն համապարփակ գիտելիքներ ջերմային պոմպերի մասին եվրոպական ստանդարտների և ազգային ու Համայնքի համապատասխան իրավունքի մասին: Սարքավորումներ տեղադրողը պետք է ցուցաբերի հետևյալ առանցքային ունակությունները՝

(i) ջերմային պոմպի ֆիզիկական առանձնահատկությունների և աշխատանքի սկզբունքների, այդ թվում՝ ջերմային պոմպի ցիկլի՝ ջերմային ալիքի անկման ցածր ջերմաստիճանների, ջերմային աղբյուրի բարձր ջերմաստիճանների և համակարգի արդյունավետության, էներգաարդյունավետության գործակցի և սեզոնային արդյունավետության գործակցի սահմանման մասին պատկերացում.

(ii) ջերմային ցիկլի ներսում բաղադրիչների և դրանց ֆունկցիայի մասին պատկերացում, այդ թվում՝ կոմպրեսորի, փականի, գոլորշեցուցիչի, կոնդենսատորի, գործիքների և սարքավորումների, քսայուղի, հովացուցիչի, ջերմային պոմպերի միջոցով գերջեռուցման և մասնակի հովացման ու հովացման հնարավորությունների.

(iii) տեղադրման ժամանակ բաղադրիչներն ու դրանց չափերն ընտրելու, այդ թվում՝ տարբեր շենքերի ջերմային բեռնվածության և էներգասպառման հիման վրա տաք ջրի արտադրության բնորոշ արժեքները որոշելու, տաք ջրի արտադրության համար ջերմային բեռնվածության, շենքի պահեստավորման զանգվածի և ներկա մատակարարման հիման

վրա ջերմային պոմպի հզորությունը որոշելու, բուֆերային ցիստերնի բաղադրիչները և դրա ծավալը և ջեռուցման երկրորդ համակարգի ներմուծումը որոշելու գիտելիքներ.

դ) Արևային ֆոտոգալվանային և արևաջերմային սարքավորումներ տեղադրողների ուսուցումը պետք է ներառի արևի էներգիայով աշխատող արտադրանքների շուկայի ընդհանուր նկարագիրը և ծախսերի ու շահութաբերության համեմատությունը և տրամադրի գիտելիքներ արևային համակարգերի բաղադրիչների, առանձնահատկությունների, չափերի և բնապահպանական կողմերի, ճշգրիտ համակարգեր և բաղադրիչների չափսեր ընտրելու, ջերմության պահանջարկի գնահատման, հրդեհի դեմ պաշտպանությանը, ինչպես նաև արևային ֆոտոգալվանային և արևաջերմային համակարգերի նախագծման, տեղադրման և պահպանման վերաբերյալ գիտելիքներ: Ուսուցման ժամանակ պետք է նաև տրամադրվեն համապարփակ գիտելիքներ տեխնոլոգիաներին վերաբերող ցանկացած եվրոպական ստանդարտի և Solar Keymark հավաստագրման նման հավաստագրման համակարգերի, ինչպես նաև ազգային և Համայնքի իրավունքի մասին: Տեղադրողը պետք է ցուցաբերի հետևյալ առանցքային ունակությունները՝

(i) աշխատել անվտանգ՝ օգտագործելով պահանջվող գործիքներն ու սարքավորումները և կիրառելով անվտանգության կանոնագրքերն ու ստանդարտները և գիտակցել արևային համակարգի հետ կապված փականագործական, էլեկտրական և այլ վտանգները.

(ii) համակարգերն ու ակտիվ ու պասիվ համակարգերին բնորոշ բաղադրիչները, այդ թվում՝ մեխանիկական նախագծումը տարբերելու և բաղադրիչների տեղակայումը և համակարգի նախագծումը ու կոնֆիգուրացիան որոշելու համար.

(iii) արևային ֆոտոգալվանային և արևաջրային տաքացուցիչների տեղադրման պահանջվող վայրը, ուղղվածությունը և թեքությունը՝ հաշվի առնելով ստվերարկումը, արևի դիրքը, կառուցվածքային ամբողջականությունը, տեղադրման նպատահարմարությունը շենքի կամ կլիմայի համար և տիրապետել տեղադրման տարբեր մեթոդներին, որոնք համապատասխանում են տանիքների տեսակներին և տեղադրման համար անհրաժեշտ սարքավորումների բալանսավորման համար.

(iv) մասնավորապես արևային ֆոտոգալվանային համակարգերի դեպքում՝ էլեկտրական նախագծումը համապատասխանեցնելու, այդ թվում՝ նախագծման ուղղությունները որոշելու, կոնդուկտորի համապատասխան տեսակներն ու հզորությունն յուրաքանչյուր էլեկտրաշղթայի համար ընտրելու, համապատասխան չափը որոշելու, և բոլոր

սարքավորումների և ենթահամակարգերի համար համապատասխան չաթը, հզորությունը և դիրքը և ընտրել փոխկապակցման համապատասխան կետը ընտրելու ունակություններ:

ե) Տեղադրողի հավաստագրումը պետք է լինի որոշակի ժամկետով, որպեսզի շարունակական հավաստագրման համար վերապատրաստման սեմինարը լինի անհրաժեշտ:

**Բիովառելիքների, բիոհեղուկների և այլ հանածո վառելիքների ջերմոցային
ազդեցության գնահատման կանոնները**

**Ա. Հողօգտագործման փոփոխության արդյունքում ածխաթթվի ոչ զգալի
արտանետումներով արտադրվող բիովառելիքների բնորոշ և փաստացի արժեքները**

Բիովառելիքների արտադրության ցիկլ | Ջերմոցային գազերի արտանետումների
նվազեցման բնորոշ ցուցանիշ | Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման
նոմինալ ցուցանիշ

շաքարի ճակնդեղի էթանոլ | 61 % | 52 % |

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը նշված չէ) |32%|16%|

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը՝ լիզնիտ ջեռուցման և էլեկտրաէներգիայի
համատեղ արտադրման գործարանում)|32%|16%|

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը՝ բնական գազ սովորական կաթսայում) |45%| 34%|

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը՝ բնական գազ ջեռուցման և էլեկտրաէներգիայի
համատեղ արտադրման գործարանում) |53%| 47%|

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը ծղոտ՝ ջեռուցման և էլեկտրաէներգիայի համատեղ
արտադրման գործարանում) |69%| 69%|/

Համայնքի տարածքում արտադրված եգիպտացորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը՝
բնական գազ ջեռուցման և էլեկտրաէներգիայի համատեղ արտադրման գործարանում)
|56%| 49%|

Շաքարեղեգի էթանոլ | 71% | 71% |

Եռաէթիլ բութիլ եթերի վերականգնվող աղբյուրների մաս | էթանոլի արտադրման ցիկլին
համարժեք |

Երրորդային ամիլէթիլային եթերի վերականգնվող աղբյուրների մաս | էթանոլի
արտադրման ցիկլին համարժեք

Սերմացու կանճրակի բիոդիզել |45% | 38% |

Արևածաղկի բիոդիզել | 58% | 51%|

Սոյայի բիոդիզել | 40% | 31%|

Արմավենու յուղի բիոդիզել (տեխնիկական վառելիքը՝ նշված չէ) |36%| 19%|

Արմավենու յուղի բիոդիզել (նավթաարդյունաբերական գործարանում մեթանի որսամաք ընթացող պրոցես) | 62 % | 56 % |

Բուսական և կենդանական թափոններից ստացվող բիոդիզել |88%| 83%|

Սերմացու կանճրակի բուսական յուղ, ջրամշակված |51%|47%|

Արևածաղկի բուսական յուղ, ջրամշակված |65%| 62%|

Արմավենու յուղից ստացված բիոդիզել, ջրամշակված (պրոցեսը նշված չէ) |40%| 26%|

արմավենու յուղից ստացված բուսական յուղ, ջրամշակված (նավթաարդյունաբերական գործարանում մեթանի որսամաք ընթացող պրոցես) |68%| 65%|

սերմացու կանճրակի բուսական յուղ | 58 % | 57 % |

քաղաքային օրգանական աղբից ստացված բիոգազ՝ որպես սեղմված բնական գազ | 80 % | 73 % |

թաց գոմաղբից ստացվող բիոգազ՝ որպես սեղմված բնական գազ| 84 % | 81 % |

չոր գամաղբից ստացվող բիոգազ որպես սեղմված բնական գազ| 86 % | 82 % |

Բ. Շուկայում գոյություն չունեցող կամ չնչին քանակություններով առկա այն վառելիքների հաշվարկված բնորոշ ու նոմինալ արժեքները, որոնք հողի օգտագործման փոփոխության արդյունքում արտադրվելու են ածխածնի զրոյական արտանետմամբ :

Բիովառելիքների արտադրության ցիկլ | Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման բնորոշ ցուցանիշ | Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման նոմինալ ցուցանիշ

ցորենի ծղոտի էթանոլ | 87 % | 85 % |

փայտի թափոնների էթանոլ | 80 % | 74 %

փայտի թափոններից ստացվող Ֆիշեր–Թրոպշ դիզելային վառելիք | 95 % | 95 % |

փայտի թափոններից ստացվող դիմեթիլէթեր | 95 % | 95 % |

փայտի թափոններից ստացվող մեթանոլ | 94 % | 94 %

Եռամեթիլ բութիլ եթերի վերականգնվող աղբյուրների մաս | Մեթանոլի արտադրման ցիկլին համարժեք |

Գ. Մեթոդաբանությունը

1. Տրանսպորտային վառելիքների, բիովառելիքների և բիոհեղուկների արտադրության ու օգտագործման ժամանակ կատարվող ջերմոցային գազերի արտանետումները հաշվարկվում են որպես՝

$$E = eec + el + ep + etd + eu - esca - eccs - eccr - eee$$

որտեղ՝

E = վառելիքի օգտագործման արդյունքում կատարվող արտանետումների ընդհանուր ծավալը.

eec = հումքի արդյունահանման կամ աճեցման արդյունքում կատարվող արտանետումներ.

el = հողօգտագործման փոփոխությամբ պայմանավորված ածխածնի ծավալի փոփոխության հետևանքով կատարված տարեկան արտանետումների ընդհանուր ծավալը

ep = մշակման ժամանակ կատարվող արտանետումներ.

etd = փոխադրումների և բաշխման ժամանակ կատարվող արտանետումներ.

eu = վառելիքի օգտագործման հետևանքով կատարվող արտանետումներ.

$esca$ = գյուղատնտեսության բարելավված կառավարման միջոցով գրունտային ածխաթթու գազի կուտակման հաշվին արտանետումների նվազեցում.

$eccs$ = ածխաթթու գազի որսման և ստորերկրյա պահեստավորման հաշվին արտանետումների նվազեցում.

$eccr$ = ածխաթթու գազի որսման և տեղափոխման հաշվին արտանետումների նվազեցում

eee = համակցված արտադրության միջոցով ստացված լրացուցիչ էլեկտրաէներգիայի հաշվին արտանետումների նվազեցում:

Մեքենաների և սարքավորումների արտադրության արդյունքում կատարվող արտանետումները չպետք է դիտարկվեն:

2. Վառելիքների՝ E, հետևանքով կատարվող արտանետումները պետք է արտահայտվեն վառելիքի ՄՋ-ին համարժեք CO₂ գրամներով՝ qCO₂համ/ՄՋ:

3. Շեղում կատարելով 2-րդ կետից՝ տրանսպորտային վառելիքների համար qCO₂համ/ՄՋ-ներով հաշվարկված արժեքները կարող են փոփոխվել՝ տարբեր վառելիքների՝ կմ/ՄՋ-ով արտահայտվող օգտակար գործողության գործակիցների տարբերությունները հաշվի առնելու համար: Նման փոփոխությունները պետք է կատարվեն, եթե առկա են օգտակար գործողության գործակիցների տարբերությունների մասին տվյալներ:

4. Բիովառելիքների և բիոհեղուկների հաշվին ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$\text{SAVING (նվազեցման ցուցանիշ)} = (EF - EB)/EF$$

որտեղ՝

EB = բիովառելիքների կամ բիոհեղուկների օգտագործման ժամանակ կատարվող ընդհանուր արտանետումները և

EF=

5. 1-ին կետի նպատակներով դիտարկվում են CO₂, N₂O և CH₄ ջերմոցային գազերը: CO₂ գազի համարժեքությունը հաշվարկելու նպատակով այդ գազերը գնահատվում են հետևյալ կերպ՝

CO₂՝ 1

N₂O : 296

CH₄ : 23

6. Հումքի արդյունահանման և աճեցման արդյունքում կատարվող արտանետումները՝ eec, ներառում են նաև անմիջապես արդյունահանման ու աճեցման ընթացքում, հումքի հավաքման ընթացքում, թափոններից և արտահոսքերից, ինչպես նաև արդյունահանման և մշակման համար օգտագործվող քիմիական նյութերի կամ այլ նյութերի արտադրության ընթացքում կատարվող արտանետումները: Հումքի աճեցման ժամանակ CO₂-ի որսումը չպետք է ներառվի: Ամբողջ աշխարհում նավթարդյունաբերության տարածքներում նավթի այրման արդյունքում առաջացող ջերմոցային գազի արտանետումների հաստատված կրճատումները պետք է անտեսվեն: Հումքի աճեցման արդյունքում կատարվող արտանետումների քանակը կարելի է ստանալ առավել փոքր աշխարհագրական տարածք

ընդգրկող տեղանքների համար հաշվարկվող միջին ցուցանիշներից, և ոչ այն ցուցանիշներից, որոնք կիրառվում են նոմինալ արժեքների հաշվարկման ժամանակ որպես փաստացի արժեքների այլընտրանքային միջոցներ:

7. Հողօգտագործման փոփոխությամբ պայմանավորված՝ ածխածնի պաշարի փոփոխությունների արդյունքում կատարվող տարեկան արտանետումները՝ e_l , հաշվարկվում են՝ արտանետումների ընդհանուր քանակը հավասարապես բաժանելով 20 տարիների վրա: Այդ արտանետումների հաշվարկման համար օգտագործվում է հետևյալ կանոնը՝

$$e_l = (CSR - CSA) \times 3,664 \times 1/20 \times 1/P - eB [3],$$

որտեղ՝

e_l = հողօգտագործման փոփոխությամբ պայմանավորված ածխածնի ծավալի փոփոխությունների հետևանքով կատարված տարեկան արտանետումների ընդհանուր ծավալը (հաշվարկված որպես CO₂-ին համարժեք բիովառելիքի էներգիայի միավորներով):

CSR = մեկ միավոր տարածքին բնորոշ ածխածնի ծավալը (հաշվարկված որպես մեկ միավոր տարածքին բնորոշ ածխածնի ծավալ՝ ներառյալ հողն ու բուսականությունը) Հողօգտագործումը պետք է լինի 2008 թվականի հունվարին կամ հունքի ձեռքբերումից 20 տարի առաջ իրականացված հողօգտագործումը:

CSA = փաստացի հողօգտագործման մեկ միավոր հողատարածքին բնորոշ ածխածնի ծավալ (հաշվարկված որպես մեկ միավոր տարածքին բնորոշ ածխածնի ծավալ՝ ներառյալ հողն ու բուսականությունը) Եթե ածխածնի պաշարները կուտակվում են ավելի, քան մեկ տարվա ընթացքում, CSA-ին վերագրվող արժեքը պետք է լինի 20 տարի հետո կամ բերքը հասունանալուց հետո մեկ միավոր տարածքին բնորոշ ծավալը:

P = բերքատվությունը (հաշվարկված որպես մեկ տարվա ընթացքում մեկ միավոր հողատարածքին բնորոշ բիովառելիքի կամ բիոհեղուկի էներգիա)

eB = 29 գCO₂համ/ՄՋ բիովառելիքի կամ բիոհեղուկի հավելյալ մասը, եթե կենսազանգվածը վերցվել է վերականգնված դեգրադացված հողից՝ 8-րդ կետով նախատեսված պայմանների համաձայն:

8. 29 գCO₂համ/ՄՋ հավելյալ մասը հաստատվում է, եթե կա ապացույց այն մասին, որ հողային տարածքը՝

ա) չի օգտագործվել գյուղատնտեսական կամ այլ նպատակներով 2008 թվականի հունվարին և

բ) ընդգրկված է հետևյալ դասերից մեկում՝

(i) չափազանց դեգրադացված հողային տարածքներ, այդ թվում՝ այնպիսի հողային տարածք, որը նախկինում օգտագործվել է գյուղատնտեսական նպատակներով.

(ii) չափազանց աղտոտված հողային տարածք:

29 գCO₂համ/ՄՋ կիրառվում է մինչև 10 տարի ժամկետով՝ սկսած հողը գյուղատնտեսական նպատակներով օգտագործման համար փոխակերպման ամսաթվից՝ պայմանով, որ ապահովվի (i) կետով նշված ածխածնի ծավալների կայուն աճ, ինչպես նաև քայքայման զգալի նվազեցում, և որ կրճատվի (ii) կետով նշված հողերի աղտոտումը:

9. 8(բ) կետով նշված տեսակները սահմանվում են հետևյալ կերպ՝

ա) «չափազանց դեգրադացված հող» նշանակում է հող, որը զգալի ժամանակով կա՛մ զգալի աղակալված կամ պարունակում էր չափազանց քիչ քանակությամբ օրգանական մաս և եղել է քայքայված.

բ) «չափազանց աղտոտված հող» նշանակում է հող, որը համապատասխան չէ սննդամթերքի մշակման համար՝ հողի աղտոտվածության պատճառով.

Նման հողային տարածքները պետք է ներառեն այն հողային տարածքները, որոնք ներառվել են Հանձնաժողովի որոշման մեջ՝ 18(4) հոդվածի 4-րդ ենթապարբերության համաձայն:

10. Հանձնաժողովը մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը ընդունում է ուղեցույց հողում ածխածնի ծավալների հաշվարկման համար՝ հիմնվելով Ջերմոցային գազերի ազգային պաշարների մասին Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական փորձագիտական խմբի ուղեցույցի 4-րդ հատորի վրա: Հանձնաժողովի ուղեցույցը պետք է ծառայի որպես հիմք սույն Հրահանգի նպատակներով հողում ածխածնի ծավալի հաշվարկման համար:

11. Մշակման ընթացքում կատարվող արտանետումները՝ օր, ներառում են հենց մշակման գործընթացի ժամանակ կատարվող արտանետումները, արտանետումները թափոններից և արտահոսքից, և մշակման ընթացքում օգտագործվող քիմիական նյութերի կամ ապրանքների արտադրության ժամանակ կատարվող արտանետումները:

Վառելիքի արտադրության գործարաններից դուրս արտադրված էլեկտրաէներգիայի սպառման մասին զեկուցելիս այդ էլեկտրաէներգիայի արտադրության ու հաղորդման ժամանակ կատարվող ջերմոցային գազերի արտանետումների մակարդակը պետք է համարվի հավասար նշված տարածաշրջանում էլեկտրաէներգիայի արտադրության ու հաղորդման ժամանակ կատարվող արտանետումների միջին մակարդակին: Շեղում կատարելով այս կանոնից՝ արտադրողները կարող են օգտագործել միջին արժեք էլեկտրաէներգիայի արտադրության առանձին գործարանների համար այդ գործարանում արտադրված էլեկտրաէներգիայի համար, եթե այդ գործարանը միացված է էլեկտրական ցանցին:

12. Փոխադրումներով և բաշխմամբ պայմանավորված արտանետումները՝ etd, պետք է ներառեն հումքի և կիսաֆաբրիկատների փոխադրման ու պահեստավորման ժամանակ, ինչպես նաև պատրաստի արտադրանքի պահեստավորման ու փոխադրման ժամանակ կատարվող արտանետումները: Փոխադրման և բաշխման ժամանակ կատարվող արտանետումները, որոնք պետք է դիտարկվեն 6-րդ հոդվածի համաձայն, չպետք է ընդգրկվեն սույն կետում:

13. Վառելիքի օգտագործման ժամանակ կատարվող արտանետումները՝ eu, պետք է համարվեն զրոյական՝ բիովառելիքների ու բիոհեղուկների համար:

14. Ածխաթթու գազի որսման և ստորերկրյա պահեստավորման հաշվին այն արտանետումների նվազեցման ցուցանիշը, որոնք չեն դիտարկվել ep-ում, պետք է սահմանափակվի այն արտանետումներով, որոնք նվազեցվում են արտանետված CO₂-ի որսման և միջոցով, որն անմիջապես կապված է վառելիքի արդյունահանման, փոխադրման, մշակման և բաշխման հետ:

15. Ածխաթթու գազի որսման և տեղափոխման հաշվին արտանետումների նվազեցումը՝ eCCR, պետք է սահմանափակվի այն արտանետումներով, որոնք նվազեցվում են CO₂-ի որսման միջոցով, որից ածխածինը գոյանում է կենսազանգվածից, և որն օգտագործվում է կոմերցիոն արտադրանքներում և ծառայությունների ժամանակ օգտագործվող CO₂-ը փոխարինելու համար:

16. Համակցված արտադրության միջոցով ստացված լրացուցիչ էլեկտրաէներգիայի հաշվին արտանետումների նվազեցումը՝ eee, պետք է դիտարկվի՝ կապված հավելյալ էլեկտրաէներգիայի հետ, որն արտադրվել է համակցված արտադրություն օգտագործող վառելիքի արտադրության համակարգերում, բացառությամբ եթե համակցված

արտադրության համար օգտագործվող վառելիքը գյուղատնտեսական բերքի մնացորդներից բացի այլ ուղեկցող արտադրանք է: Այդ հավելյալ էլեկտրաէներգիայի մասին զեկուցելիս, համակցված արտադրության տեղակայանքի չափը պետք է լինի այն նվազագույն չափը, որը համակցված արտադրության տեղակայանքին անհրաժեշտ է վառելիքի արտադրության համար անհրաժեշտ ջեռուցման մատակարարման համար: Հավելյալ էլեկտրաէներգիայի հետ կապված ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման ցուցանիշը պետք է համարվի հավասար ջերմոցային գազերի այն քանակին, որը կարտանետվեր, եթե միևնույն քանակությամբ էլեկտրաէներգիա արտադրվեր այնպիսի էլեկտրակայանում, որը կօգտագործեր այն նույնը վառելիքը, որն օգտագործվում է համակցված արտադրության տեղակայանքում:

17. Եթե վառելիքի արտադրության գործընթացի ժամանակ արտադրվում է նաև վառելիք, որի համար արտանետումները հաշվարկվում են և մեկ կամ ավելի այլ ապրանքներ (ուղեկցող ապրանքներ), ջերմոցային գազերի արտանետումները պետք է բաժանված լինեն վառելիքի և կամ դրա անմիջական արտադրանքի և ուղեկցող ապրանքների միջև՝ դրանց էներգետիկ կազմին համապատասխան (որը որոշվում է էլեկտրաէներգիայից բացի այլ ուղեկցող արտադրանքի դեպքում որոշվում է ըստ էներգիայի ավելի ցածր արժեքի):

18. 17-րդ կետով նշված հաշվարկման համար՝ այն արտանետումները, որոնք պետք է բաժանվեն, պետք է լինեն $eec + el + ep$, etd և eee -ի այն մասերը, որոնք կատարվում են գործընթացի այն փուլում, որտեղ արտադրվում է ուղեկցող արտադրանք: Եթե ուղեկցող ապրանքներին կենսափուլի վաղ փուլում, այդ արտանետումների:

Բիոկառելիքների և բիոհեղուկների դեպքում, բոլոր ուղեկցող արտադրանքները՝ ներառյալ 16-րդ կետում չընդգրկվող էլեկտրաէներգիան, դիտարկվում է այդ հաշվարկման նպատակներով, բացառությամբ՝ գյուղատնտեսական բերքի մնացորդների, այդ թվում՝ ծղոտի, քուսպի, կճեպների, կողրի: Այն ուղեկցող արտադրանքները, որոնք բացասական էներգետիկ կազմ ունեն, պետք է համարվեն զրոյական էներգետիկ կազմով՝ հաշվարկման նպատակով:

Թափոնները, գյուղատնտեսական բերքի մնացորդները՝ ներառյալ ծղոտը, քուսպը, կճեպները, կողրը և արդյունքում առաջացած մնացորդները, այդ թվում՝ գլիցերինը, (չմշակված գլիցերինը) պետք է համարվեն ջերմոցային գազերի արտանետումների զրոյական կենսափուլ ունեցող մինչև այդ նյութերի հավաքման գործընթացը:

Մշակման գործարաններում արտադրված վառելիքների դեպքում, 17-րդ հոդվածով նշված հաշվարկման նպատակներով վերլուծության միավորը պետք է լինի վերամշակման գործարանը:

19. Բիովառելիքների համար 4-րդ հոդվածով նշված հաշվարկման նպատակներով հանածո վառելիքի պետք է լինի Համայնքում սպառված բենզինի և դիզելային վառելիքի հանածո մասի արտանետումների հասանելի միջին արժեքը: Եթե նման տվյալներ չկան, ապա կիրառվում է 83,8 գCO₂համ/ՄՋ արժեքը:

Էլեկտրաէներգիայի արտադրության համար օգտագործվող բիովառելիքների համար 4-րդ կետով նշված հաշվարկման նպատակներով հանածո վառելիքի պետք է լինի 91 գCO₂համ/ՄՋ:

Ջերմային էներգիայի արտադրության համար օգտագործվող բիովառելիքների համար 4-րդ հոդվածով նշված հաշվարկման համար հանածո վառելիքի պետք է լինի 77 գCO₂համ/ՄՋ:

Համակցված արտադրության համար օգտագործվող բիոհեղուկների համար 4-րդ կետով նշված հաշվարկման նպատակով հանածո վառելիքի համեմատիչը պետք է լինի 85 գCO₂համ/ՄՋ:

Առանձնացված փաստացի արժեքները բիովառելիքների և բիոհեղուկների համար

Առանձնացված փաստացի արժեքները աճեցման համար՝ eec, ինչպես նշված սույն Հավելվածի Գ մասում

Բիովառելիքների արտադրության ցիկլ | Ջերմոցային գազերի արտանետումները (գCO₂համ/ՄՋ) | Ջերմոցային գազերի արտանետումների նոմինալ ցուցանիշ (գCO₂համ/ՄՋ)

շաքարի ճակնդեղի էթանոլ | 12 | 12 |

ցորենի էթանոլ | 23 | 23 |

ցորենի էթանոլ, Համայնքում արտադրված | 20 | 20 |

շաքարի ճակնդեղի էթանոլ | 14 | 14 |

Եռաէթիլ բուրբուլ եթերի վերականգնվող աղբյուրների մաս | էթանոլի արտադրման ցիկլին համարժեք|

Երրորդային ամիլէթիլային եթերի վերականգնվող աղբյուրների մաս | էթանոլի արտադրման ցիկլին համարժեք

Սերմացու կանճրակի բիովառելիք | 29 | 29 |

Արևածաղկի բիոդիզել | 18 | 18 |

Սոյայի բիոդիզել | 19 | 19 |

Արմավենու յուղի բիոդիզել | 14 | 14 |

Բուսական և կենդանական թափոններից ստացվող բիոդիզել | 0 | 0 |

Սերմացու կանճրակի բուսական յուղ, ջրամշակված | 30 | 30 |

Արևածաղկի բուսական յուղ, ջրամշակված | 18 | 18 |

արմավենու յուղից ստացված բուսական յուղ, ջրամշակված | 15 | 15 |

սերմացու կանճրակից ստացվող մաքուր բուսական յուղ | 30 | 30 |

քաղաքային օրգանական թափոններից ստացվող բիոգազ՝ որպես սեղմված բնական գազ | 0 | 0 |

թաց գոմաղբից ստացվող բիոգազ՝ որպես սեղմված բնական գազ | 0 | 0 |

չոր գամաղբից ստացվող բիոգազ որպես սեղմված բնական գազ | 0 | 0 |

Առանձնացված նոմինալ արժեքները մշակման համար (ներառյալ հավելյալ էլեկտրաէներգիան); "ep – eee" , ինչպես սահմանված է սույն հավելվածի Գ մասով

Բիովառելիքների արտադրության ցիկլ | Ջերմոցային գազերի արտանետումների արտանետումների բնորոշ ցուցանիշ (qCO₂համ/ՄՋ) | Ջերմոցային գազերի արտանետումների նոմինալ ցուցանիշ (qCO₂համ/ՄՋ)

շաքարի ճակնդեղի էթանոլ | 19 | 26 |

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը նշված չէ) | 32 | 45 |

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը՝ լիզնիտ ջեռուցման և էլեկտրաէներգիայի համատեղ արտադրման գործարանում) | 32 | 45 |

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը՝ բնական գազ սովորական կաթսայում) | 21 | 30 |

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը՝ բնական գազ ջեռուցման և էլեկտրաէներգիայի համատեղ արտադրման գործարանում) | 14 | 19 |

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը ծղոտ՝ ջեռուցման և էլեկտրաէներգիայի համատեղ արտադրման գործարանում) | 1 | 1 |

Համայնքի տարածքում արտադրված եգիպտացորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը՝ բնական գազ ջեռուցման և էլեկտրաէներգիայի համատեղ արտադրման գործարանում) | 15 | 21 |

շաքարի ճակնդեղի էթանոլ | 1 | 1 |

Եռաէթիլ բուիլ էթերի վերականգնվող աղբյուրների մաս | էթանոլի արտադրման ցիկլին համարժեք |

Երրորդային ամիլէթիլային էթերի վերականգնվող աղբյուրների մաս | էթանոլի արտադրման ցիկլին համարժեք

սերմացու կանճրակից ստացվող բիոդիզել | 16 | 22 |

արևածաղի բիոդիզել | 16 | 22 |

Սոյայի բիոդիզել | 18 | 26 |

Արմավենու յուղի բիոդիզել (տեխնիկական վառելիքը՝ նշված չէ) | 35 | 49 |

Արմավենու յուղի բիոդիզել (նավթաարդյունաբերական գործարանում մեթանի որսամաք ընթացող պրոցես) | 13 | 18 |

Բուսական և կենդանական թափոններից ստացվող բիոդիզել | 9 | 13 |

սերմացու կանճրակից ստացվող մաքուր բուսական յուղ | 10 | 13 |

Արևածաղկի բուսական յուղ, ջրամշակված | 10 | 13 |

Արմավենու յուղից ստացվող բիոդիզել, ջրամշակված (պրոցեսը նշված չէ) | 30 | 42 |

արմավենու յուղից ստացված բուսական յուղ, ջրամշակված (նավթաարդյունաբերական գործարանում մեթանի որսամաք ընթացող պրոցես) | 7 | 9 |

սերմացու կանճրակից ստացվող մաքուր բուսական յուղ | 4 | 5 |

քաղաքային օրգանական աղբից ստացված բիոգազ՝ որպես սեղմված բնական գազ | | 14 | 20 |

թաց գոմաղբից ստացվող բիոգազ՝ որպես սեղմված բնական գազ | 8 | 11 |

չոր գամագրից ստացվող բիոգազ որպես սեղմված բնական գազ | 8 | 11 |

Առանձնացված նոմինալ արժեքներ փոխադրումների և բաշխման համար՝ "etd" , ինչպես նշված է սույն հավելվածի Գ մասով

Բիովառելիքների արտադրության ցիկլ | Ջերմոցային գազերի արտանետումների բնորոշ ցուցանիշ (գCO₂համ/ՄՋ) | Ջերմոցային գազերի արտանետումների նոմինալ ցուցանիշ (գCO₂համ/ՄՋ)

շաքարի ճակնդեղի էթանոլ | 2 | 2 |

ցորենի էթանոլ | 2 | 2 |

եգիպտացորենի էթանոլ, Համայնքում արտադրված | 2 | 2 |

շաքարի ճակնդեղի էթանոլ | 9 | 9 |

Եռաէթիլ բութիլ եթերի վերականգնվող աղբյուրների մաս | էթանոլի արտադրման օգտագործված ցիկլին համարժեք |

Երրորդային ամիլէթիլային եթերի վերականգնվող աղբյուրների մաս | էթանոլի արտադրման օգտագործված ցիկլին համարժեք

սերմացու կանճրակից ստացվող բիոդիզել | 1 | 1 |

արևածաղկի բիոդիզել | 1 | 1 |

Սոյայի բիոդիզել | 13 | 13 |

արմավենու ձեթի բիոդիզել | 5 | 5 |

Բուսական և կենդանական թափոններից ստացվող բիոդիզել | 1 | 1 |

սերմացու կանճրակից ստացվող մաքուր բուսական յուղ, ջրամշակված | 1 | 1 |

Արևածաղկի բուսական յուղ, ջրամշակված | 1 | 1 |

արմավենու յուղից ստացվող բուսական յուղ, ջրամշակված | 5 | 5 |

սերմացու կանճրակից ստացվող մաքուր բուսական յուղ | 1 | 1 |

քաղաքային օրգանական թափոններից ստացվող բիոգազ՝ որպես սեղմված բնական գազ | 3 | 3 |

թաց գոմաղբից ստացվող բիոգազ՝ որպես սեղմված բնական գազ | 5 | 5 |

թաց գոմադրից ստացվող բիոգազ՝ որպես սեղմված բնական գազ | 4 | 4 |

Ընդհանուր արժեքը աճեցման, մշակման, փոխադրման և բաշխման համար

Բիովառելիքների արտադրության ցիկլ | Ջերմոցային գազերի արտանետումների բնորոշ ցուցանիշ (գCO₂համ/ՄՋ) | Ջերմոցային գազերի արտանետումների նոմինալ ցուցանիշ (գCO₂համ/ՄՋ)

շաքարի ճակնդեղի էթանոլ | 33 | 40 |

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը նշված չէ) | 57 | 70 |

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը ծղոտ՝ ջեռուցման և էլեկտրաէներգիայի համատեղ արտադրման գործարանում) | 57 | 70 |

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը՝ բնական գազ սովորական կաթսայում) | 46 | 55 |

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը՝ բնական գազ ջեռուցման և էլեկտրաէներգիայի համատեղ արտադրման գործարանում) | 39 | 44 |

ցորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը ծղոտ՝ ջեռուցման և էլեկտրաէներգիայի համատեղ արտադրման գործարանում) | 26 | 26 |

Համայնքի տարածքում արտադրված եգիպտացորենի էթանոլ (տեխնիկական վառելիքը՝ բնական գազ ջեռուցման և էլեկտրաէներգիայի համատեղ արտադրման գործարանում) | 37 | 43 |

շաքարի ճակնդեղի էթանոլ | 24 | 24 |

Եռաէթիլ բուիլ եթերի վերականգնվող աղբյուրների մաս | էթանոլի արտադրման օգտագործված ցիկլին համարժեք |

Եռաէթիլ բուիլ եթերի վերականգնվող աղբյուրների մաս | էթանոլի արտադրման օգտագործված ցիկլին համարժեք |

սերմացու կանճրակից ստացվող բիոդիզել | 46 | 52 |

արևածաղկի բիոդիզել | 35 | 41 |

Սոյայի բիոդիզել | 50 | 58 |

Արմավենու յուղի բիոդիզել (տեխնիկական վառելիքը՝ նշված չէ) | 54 | 68 |

Արմավենու յուղի բիոդիզել (նավթաարդյունաբերական գործարանում մեթանի որսմամբ ընթացող պրոցես) | 32 | 37 |

Բուսական և կենդանական թափոններից ստացվող բիոդիզել | 10 | 14 |

սերմացու կանճրակից ստացվող մաքուր բուսական յուղ, ջրամշակված | 41 | 44 |

Արևածաղկի բուսական յուղ, ջրամշակված | 29 | 32 |

Արմավենու յուղից ստացված բիոդիզել, ջրամշակված (պրոցեսը նշված չէ) | 50 | 62 |

արմավենու յուղից ստացված բուսական յուղ, ջրամշակված (նավթաարդյունաբերական գործարանում մեթանի որսմամբ ընթացող պրոցես) | 27 | 29 |

սերմացու կանճրակից ստացվող մաքուր բուսական յուղ | 35 | 36 |

քաղաքային օրգանական թափոններից ստացվող բիոգազ՝ որպես սեղմված բնական գազ | 17 | 23 |

թաց գոմաղբից ստացվող բիոգազ՝ որպես սեղմված բնական գազ | 13 | 16 |

թաց գոմաղբից ստացվող բիոգազ՝ որպես սեղմված բնական գազ | 12 | 15 |

Ե. Հաշվարկված առանձնացված նոմինալ արժեքները հետագա բիովառելիքների և բիոհեղուկների համար, որոնք շուկայում չեն եղել կամ եղել են շատ չնչին քանակությամբ

Առանձնացված նոմինալ արժեքները աճեցման համար՝ "eec" , ինչպես նշված է սույն հավելվածի Գ մասով

Բիովառելիքների արտադրության ցիկլ | Ջերմոցային գազերի արտանետումների բնորոշ ցուցանիշ (գCO₂համ/ՄՋ) | Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման նոմինալ ցուցանիշ (գCO₂համ/ՄՋ)

ցորենի ծղոտի էթանոլ | 3 | 3 |

փայտի թափոնների էթանոլ | 1 | 1 |

փայտի թափոններից ստացվող Ֆիշեր-Թրոպշ դիզելային վառելիք | 1 | 1 |

փայտի թափոններից ստացվող ԴՄԵ | 1 | 1 |

փայտի թափոնների մեթանոլ | 1 | 1 |

Եռաէթիլ բութիլ եթերի վերականգնվող աղբյուրների մաս | Էթանոլի արտադրման օգտագործված ցիկլին համարժեք |

Առանձնացված նոմինալ արժեքները մշակման համար (ներառյալ հավելյալ էլեկտրաէներգիան)՝ "ep – eee" , ինչպես նշված է սույն հավելվածի Գ մասով

Բիովառելիքների արտադրության ցիկլ | Ջերմոցային գազերի արտանետումների բնորոշ ցուցանիշ (գCO₂համ/ՄՋ) | Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման նոմինալ ցուցանիշ (գCO₂համ/ՄՋ)

ցորենի ծղոտի էթանոլ | 5 | 7 |

փայտի էթանոլ | 12 | 17 |

փայտի թափոններից ստացվող Ֆիշեր–Թրոպշ դիզելային վառելիք | 0 | 0 |

փայտի ԴՄԵ | 0 | 0 |

փայտի մեթանոլ | 0 | 0 |

Եռաէթիլ բութիլ եթերի վերականգնվող աղբյուրների մաս | Էթանոլի արտադրման օգտագործված ցիկլին համարժեք |

Առանձնացված նոմինալ արժեքները փոխադրման և բաշխման համար՝ "ep – eee" , ինչպես նշված է սույն հավելվածի Գ մասով

Բիովառելիքների արտադրության ցիկլ | Ջերմոցային գազերի արտանետումների բնորոշ ցուցանիշ (գCO₂համ/ՄՋ) | Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման նոմինալ ցուցանիշ (գCO₂համ/ՄՋ)

ցորենի ծղոտի էթանոլ | 2 | 2 |

փայտի թափոնների էթանոլ | 4 | 4 |

փայտի թափոններից ստացվող Ֆիշեր–Թրոպշ դիզելային վառելիք | 3 | 3 |

փայտի թափոններից ստացվող Ֆիշեր–Թրոպշ դիզելային վառելիք | 2 | 2 |

փայտի թափոններից ստացվող ԴՄԵ | 4 | 4 |

փայտի թափոններից ստացվող ԴՄԵ | 2 | 2 |

փայտի թափոնների մեթանոլ | 4 | 4 |

Եռաէթիլ բութիլ եթերի վերականգնվող աղբյուրների մաս | Էթանոլի արտադրման օգտագործված ցիկլին համարժեք |

Ընդհանուր արժեքը աճեցման, մշակման, փոխադրման և բաշխման համար

Բիովառելիքների արտադրության ցիկլ | Ջերմոցային գազերի արտանետումների բնորոշ ցուցանիշ (գCO₂համ/ՄՋ) | Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման նոմինալ ցուցանիշ (գCO₂համ/ՄՋ)

ցորենի ծղոտի էթանոլ | 11 | 13 |

փայտի թափոնների էթանոլ | 17 | 22 |

փայտի թափոններից ստացվող Ֆիշեր-Թրոպշ դիզելային վառելիք | 4 | 4 |

փայտի թափոններից ստացվող ԴՄԵ | 5 | 5 |

փայտի թափոններից ստացվող ԴՄԵ | 7 | 7 |

փայտի թափոնների մեթանոլ | 5 | 5 |

փայտի թափոններից ստացվող ԴՄԵ | 7 | 7 |

Եռաէթիլ բութիլ եթերի վերականգնվող աղբյուրների մաս | Էթանոլի արտադրման օգտագործված ցիկլին համարժեք |

[2] ՊՏ L 273, 10.10.2002 թ., էջ 1:

[*] Բացառությամբ թիվ 1774/2002 Կանոնակարգի (ԵՀ) համաձայն որպես 3-րդ դասի նյութ դասակարգված կենդանական կողմնակի արտադրանքից արտադրված կենդանական յուղի մարդու կողմից սպառման համար չնախատեսված կենդանական ծագման կողմնակի արտադրանքների վերաբերյալ առողջապահական կանոններ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1774/2002/ԵՀ կանոնակարգի համաձայն.

[3] Այն ցուցանիշը, որը ստացվում է բաժանելով CO₂ մոլեկուլային զանգվածը (44,010 գ/մոլ) ածխածնի մոլեկուլային զանգվածին (12,011 գ/մոլ), որը հավասար է 3,664-ի:

[****] Բացառությամբ թիվ 1774/2002 Կանոնակարգի (ԵՀ) համաձայն որպես 3-րդ դասի նյութ դասակարգված կենդանական կողմնակի արտադրանքից արտադրված կենդանական յուղի

**Վերականգնվող էներգիայի վերաբերյալ գործողությունների ազգային ծրագրերի
համար ներդաշնակեցված օրինակելի ձևի նվազագույն պահանջները**

1. Ակնկալվող վերջնական էներգասպառումը՝

2020 թվականի համար էլեկտրաէներգիայի, տրանսպորտի և ջեռուցման ու հովացման սեկտորներում համախառն վերջնական էներգասպառումը՝ հաշվի առնելով էներգաարդյունավետության քաղաքականության միջոցների ազդեցությունները:

2. Ազգային ոլորտային 2020 սահմանաչափերը և էլեկտրաէներգիայի, ջեռուցման ու հովացման և տրանսպորտի սեկտորներում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի հաշվարկված մասնաբաժինները՝

ա) 2020 թվականին էլեկտրաէներգիայի սեկտորում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի թիրախային մասնաբաժինը.

բ) էլեկտրաէներգիայի սեկտորում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժնի հաշվարկված հետագիծ.

գ) 2020 թվականին ջեռուցման ու հովացման սեկտորում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի թիրախային մասնաբաժին.

դ) ջեռուցման ու հովացման սեկտորում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժնի գնահատված հետագիծ.

ե) տրանսպորտի սեկտորում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժնի գնահատված հետագիծ.

զ) ազգային ինդիկատիվ հետագիծը, ինչպես նշված է I հավելվածի 3(2) հոդվածով և Բ մասով:

3. Սահմանաչափերն ապահովելու միջոցները՝

ա) վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործման խթանելուն վերաբերող քաղաքականության ու միջոցների վերանայում.

բ) հատուկ միջոցներ՝ 13-րդ, 14-րդ ու 16-րդ հոդվածների պահանջները կատարելու համար, այդ թվում՝ 2020 թվականի ազգային սահմանաչափն ապահովելու համար անհրաժեշտ վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի քանակություններն ապահովելը

հնարավոր դարձնելու գործող ենթակառուցվածքները ընդլայնելու կամ վերագործարկելու անհրաժեշտությունը, լիազորման ընթացակարգերը արագացնելու միջոցներ, ոչ տեխնոլոգիական խոչընդոտները վերացնելու միջոցներ և 17-21-րդ հոդվածներին վերաբերող միջոցներ.

գ) աջակցության սխեմաներ էլեկտրաէներգիայի սեկտորում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործումը խթանելու համար, որը կիրառվում է մեկ անդամ պետության կամ անդամ պետությունների խմբի կողմից.

դ) աջակցության սխեմաներ ջեռուցման ու հովացման սեկտորում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործումը խթանելու համար, որոնք կիրառվում են անդամ պետության կամ անդամ պետությունների խմբի կողմից.

ե) աջակցության սխեմաներ տրանսպորտի սեկտորում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի օգտագործումը խթանելու համար, որոնք կիրառվում են անդամ պետության կամ անդամ պետությունների խմբի կողմից.

զ) որոշակի միջոցներ կենսազանգվածից ստացվող էներգիայի օգտագործման մասին, մասնավորապես կենսազանգվածի նոր մոբիլիզացման համար՝ հաշվի առնելով՝

(i) կենսազանգվածի հասանելիությունը՝ թե՛ տեղական , թե՛ ներկրումները.

(ii) միջոցներ կենսազանգվածի հասանելիությունը բարձրացնելու ուղղությամբ՝ հաշվի առնելով կենսազանգվածի այլ օգտագործողներին (գյուղատնտեսության և անտառտնտեսության սեկտորներում).

է) անդամ պետությունների միջև վիճակագրական փոխանցումների պլանավորված օգտագործումը և այլ անդամ պետությունների ու երրորդ երկրների հետ համատեղ նախագծերում պլանավորված մասնակցությունը՝

(i) ինդիկատիվ հետազոծի հետ համեմատ վերականգնվող աղբյուրների միջոցով արտադրված հավելյալ էներգիան, որը կարող է փոխանցվել մյուս անդամ պետություններին.

(ii) համատեղ նախագծերի գնահատված պոտենցիալը.

(iii) վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի հաշվարկված պահանջարկը, որը պետք է գնահատվի ոչ տեղական արտադրանքի հաշվին:

4. Գնահատումները՝

ա) վերականգնվող էներգիայի յուրաքանչյուր տեխնոլոգիայի ակնկալվող ընդհանուր ներդրումը 2020 սահմանաչափերն ապահովելու համար և էլեկտրաէներգիայի, ջեռուցման ու հովացման և տրանսպորտի սեկտորներում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժինների ինդիկատիվ հետագծի համար.

բ) էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցների ակնկալվող ընդհանուր ներդրումը 2020 սահմանաչափերն ապահովելու համար և էլեկտրաէներգիայի, ջեռուցման ու հովացման և տրանսպորտի սեկտորներում վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիայի մասնաբաժինների ինդիկատիվ հետագծի համար

Ջերմային պոմպերի միջոցով արտադրվող էներգիայի մասին զեկուցումը

Ջերմային պոմպերի միջոցով որսվող օդաջերմային, կենսաջերմային կամ հիդրոջերմային էներգիայի այն քանակությունը, որը պետք է դիտարկվի որպես վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիա սույն Հրահանգի նպատակներով՝ ERES, հաշվարկվում է հետևյալ բանաձևի համաձայն՝

$$\text{ERES} = Q_{\text{usable}} * (1 - 1/\text{SPF})$$

որտեղ՝

- $Q_{\text{usable}} = 5(4)$ հոդվածով նշված չափորոշիչները բավարարող ջերմային պոմպերով բաշխված ընդհանուր օգտագործելի հաշվարկված ջերմային էներգիան, որը կատարվում է հետևյալ կերպ՝ Դիտարկվում են միայն այն պոմպերը, որոնց համար $\text{SPF} > 1,15 * 1/\eta$,
 - SPF ՝ այդ ջերմային պոմպերի սեզոնային կատարողականի հաշվարկված միջին ցուցանիշը.
 - η ՝ էլեկտրաէներգիայի համախառն արտադրության և էլեկտրաէներգիայի արտադրության համար հիմնական էներգասպառման միջև հարաբերակցությունը, որը հաշվարկվում է որպես ԵՄ միջին ցուցանիշ՝ հիմնվել Եվրաստատի տվյալների վրա:
- Մինչև 2013 թվականի հունվարի 1-ը Հանձնաժողովը սահմանում է ուղեցույց, թե ինչպես անդամ պետությունները պետք է գնահատեն Q_{usable} և SPF արժեքները ջերմային պոմպերի տարբեր տեխնոլոգիաների և կիրառումների համար՝ հաշվի առնելով կլիմայական պայմանների տարբերությունները և մասնավորապես շատ սառը կլիմաները: